

Ա. Խ. Հ. Պ. = = = Հ. Ա. Խ. Հ.
№ 3 Պարհեալիք բուռ յեկեցեմ, միացեմ. № 3

ԳՈՐԼՈՎԱԿԻ

ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՅԵՎ Ռ. Կ. Կ.
ԴՐՈԶԻ ՏԱԿ

ԹԱՐԴԱՐ. Լ. ԳՈՐԼՈՎԱԿԻ



| |
|--------|
| 355.23 |
| 9-81 |

Ա. Խ. Հ. Պ. Օ. - 2. Խ. - ի 6 կից
Հայկական Խմբագր. - Հայտապահկան Խորհրդան

ՅԵՎՐՈՎԱԿԻ, 1924

1 MAR 2010

Հ. Խ. Հ. Մ.

Հ. Մ. Խ. Հ.

Պետքանիւր բայր յեկենիսի, միացի՛

355.23

ԳՈՐԾՈՎԱԿԻ

գ-81

ԲԱՆՎՈՐ ԴԱՍՏԱՐԳԻ ՅԵՎ Ա. Կ. Կ.
ԴՐՈՅԻ ՏԱԿ



Թարգմ. և ԴԱՏՎԵԼԱԾՈՒՅՑ



1025

ՀՐԱՄԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Կ. Կ. Շահնակի Թագմա-Հեղափոխական Խորհրդին

կը Հայկական Խմբագր. Համառակ. Կոլեգիայի.

Զերքան - 1924

ՅԵՐԿԱՒԻ ԽՈՌՍՔ

Հայկական Դիվիզիայում տարվող Քաղլուսաշխատանքների հիմնական դժվարություններից մեկն ել յեղել և հայերեն գրականության, առավել յեփս ձեռնարկների պակասությունը:

Ազգային դիվիզիաներում աշխատող յեզ առանձնապես Հայկական Դիվիզիայի բաղաշխատողները յեզ կրտսեր հրամկազմը այս տեսակիտից շատ անգամ անելանելի դրության մեջ են գտնվում:

Մեր բաղդեկների, գրադարանապետների, ուսուցիչների, ակումբի պետերի, կրտսեր հրամկազմի մի խոշոր մասը ուսուց լեզվին չի տիրապետում: Նրանցից պահանջվում ե աշխատանք, իրազեկություն ընթացիկ կրանքի յեզ և որհրդային իշխանության հիմնական խնդիրների, սակայն չկան գրքեր, ձեռնարկներ:

Մյուս կողմից հենց կարմիր բանակային մասսայից ընթերցողների մեծաքանակ խմբեր են պատրաստվում ամեն որ: Նրանց համար հանրամատչելի գրքույներ հայթայթելու մտահոգությունը միշտ ել ծանրացած ե յեղել Դիվիզիայի բաղրամնի վրա:

Այժմ մենք ննարապորություն ունենք հրատարակելու հայերեն լեզվով «Բանվոր դասակարգի յեզ Ռ. Կ. Կ. գրոշի տակ» գրքույնը: Այս գրքույնը հրատարակված ե յեղել անցյալ տարի Մոսկայում Բարձրագույն Ռազմականմբագրական խորհրդի կողմից

Յ Ե Ր Ե Վ Ա Ն
ՏՐԵՍՏ ԱՌԱՋԻ ՏՊԱՐԱՆ
1924



3105

Կ 6856. 64

յեվ Միության Ռազմահեղափոխական Խորհրդի Քաղաքարքությունը հանձնարարել է նրան վորագես բաղդակի ձևոնաշը 1923—1924 թվի ծմբուային շրջանի համար:

Դրբույկը հարմարեցրած և Քաղաքական կանոնագրի հիմնական կետերին յեվ վորագես այդպիսին զրբում տեղափորված բոլոր ցիկլերը պետք են դասավանդվեն 1924—1925 թվի ծմբուային շրջանում նորեկ կարմիր բանակայիններին:

Գրքույկի մեջ պարունակվող մեթոդական մասը յեվ չափազանց խնամքով հավաքված թվական տեղեկությունները նենց այժմվանից կարող են ոգտագործել վու միայն քաղցեկները, այլ նայեվ մնացած բոլոր աշխատողները՝ առանձնապես ուսուցիչները:

Իսկ իր ամբողջ բովանդակությամբ գրքույկը կարող են, յեվ պետք և լինի բոլոր գրագետ կարմիր բանակայինների յեվ զորական ծառայողների բներցանության հարմար նյութ:

Հայկական Դիմիգիայի Քաղբաժնի
Ազիտ-ալյուլ-մաս

Ա.ՌԱԶԱԲԱՆ

Այս գրքի վերնագիրն է. «Քանվոր դասակարգի և Ռ. Կ. Կ. Ա. Դրոշի տակ»։ Այդ վերնագիրը ամենակին պատահաբար չե վոր արված և ու միայն ազիտացիայի համար չե։ Նա պարունակում ե յուր մեջ ցիկլ զրույցների հիմնական բավանդակությունը, նրա հիմնական յեղանակը, նրա տեսողության անկյունը, վորի տակ պետք ե պարզաբանվեն նրա բոլոր հարցերը։

Այդ վերնագրումն և ամփոփվում ցիկլի հիմնական նպատակը. դաստիարակել կարմիր բանակայինին այն վստով, վոր նա ըմբռնի բանվոր դասակարգի ու դյուղացիության միության անհրաժեշտությունը, և նրա ահագին նշանակությունը բանվոր դասակարգի այդ միության գործողությունների հաջողության համար ու Ռ. Կ. Կ. Ա. կողմից զեկավարելու անհրաժեշտությունը։ Վաշտի քաղաքական զեկավարը, կարմիր բանակայինների հետ այդ ցիկլը անցնելիս՝ պետք ե միշտ նկատի ունենա այդ հիմնական նպատակը և յուրաքանչյուր անգամ, ամեն մի թեմայով, յուրաքանչյուր սուանձին հարցով դաստիարակե

կարմիր բանակայինի գիտակցությունը այդ ուղղությամբ։ Քաղաքական ղեկավարը այն ժամանակ միայն կարող է հաջող համարել յուր գործը, յեթե նոյեմբերի 7-ին կարմիր բանակայինը իրան տրված հարցերին հաստատապես կապատասխանի՝ թե ինչու և հարկավոր բանվոր դասակարգի միությունը գյուղացիության հետ, թե ինչու համար է հարկավոր Ռ. Կ. կ. նը։

Յիկի առաջին զրույցը սկսվում է Հոկտեմբերյան հեղափոխության մասին տրվելիք հարցից։ Յիկի վերջին զրույցն ել նրանով ե վերջանում։ Դա արված է նրա համար, վորպեսզի ամբողջ ցիկլին տրվի գործնական նշանակություն։ այսինքն. նախապատրաստել կարմիր բանակայիններին Հոկտեմբերյան հեղափոխության տոնը կատարելու համար։ Դա ունի նաև յուր մեթոդական արժեքը։ Յարիզմի ու բուրժուազիայի գեմ բանվոր դասակարգի ու գյուղացիության մղած կովի պատմությունը կարմիր բանակայինի ըմբռնողության մեջ շաղկապվում է իբրև մի գիծ Հոկտեմբերյան հեղափոխությունը նախապատրաստելու համար։ Յարական սեփիմի դեմ մղած կովի պատմությունը կարմիր բանակայինի համար ստանում է որվա շարիքի շահագրգռություն։

Այսուհետեւ ցիկլը ժամանակագրական հե-

տևողականությամբ պատմում է Հոկտեմբերյան հեղափոխությունը նախապատրաստելու պատմությունը։ Առաջին զրույցը պատկերացնում է բանվորների ու գյուղացիների վիճակը ցարական սեփիմի ժամանակի մոռացել և յերկրորդը (գյուղացիների վիճակը) և, ինչպես գյուղացին իր մեծամասնությամբ անձանոթ է առաջնին (բանվորների դրությանը)։ Դրա համար ել վաշտի քաղաքական ղեկավարը չպիտի խնայի յուր ժամանակը այդ զրույցին ինամքով նախապատրաստվելու համար։ Նա այնքան վառ ու կենդանի գույներով պետք է պատկերացնի գյուղացիների ու բանվորների վիճակը ցարական սեփիմի ժամանակի, վոր կարմիր բանակայինների առջև ներկայանա նրա ամբողջ սոսկալիությունը և վորպեսզի ամեն մի կարմիր բանակային շխնայի վորեւ ջանք չթույլատրելու ցարիզմի վերադրձը։

Դա է առաջին զրույցի դաստիարակչական նշանակությունը։ Նրա կրթական նպատակը կարանում է նրանում, վոր կարմիր բանակայինը չմոռանա մի քանի տեղեկություններ հիշյալ շրջանից ու կարողանա հաղորդել նրանց յուր գյուղացիներին կամ նորակոչ կարմիր բանակայիններին։

Յերկրորդ և յերրորդ զրույցները կարմիր բանակայինին սերտորեն մոռանցնում են ցիկլի կենտրոնական հատվածին, բանվոր դասակարգի և Ռ. Կ. Կ.-ն գերին վերաբերող հարցին: Այդ յերկու զրույցներում բանվոր դասակարգի ու գյուղացիության պայքարի ընդհանուր հարցերով պետք է ապացուցել կարմիր բանակայինին, վոր բանվոր դասակարգի միությունը գյուղացիության հետ և հեղափոխական պրոլետարական կուսակցությունը, անհրաժեշտություն են: Չորրորդ, հինգերորդ, վեցերորդ ու յոթերորդ զրույցները պատմական նույթ են մատակարարում այդ բանը ապացուցելու համար: Այսուղ քաղաքական դեկավարը վոչ մի կերպ չպետք է տարվի միմիայն դեպքերի պատմականը ամանդելով: Յուրաքանչյուր ավագ մատակի դեպքում նա պետք է պատվաստի կարմիր բանակայինի գիտակցության մեջ միևնույն հիմնական գաղափարը, պատկերավորելով (ԱԼԽԵՏՐԱԼԱ) ու ապացուցելով նրան պատմական անցյալից քերած փաստերով: Ութերորդ զրույցը՝ կրկնողություն և, և պետք է ի մի ամփոփե նախորդ զրույցների բոլոր յեզրակացությունները բանվոր դասակարգի կողմից Ռ. Կ. Կ.-ն դեկավարությամբ գյուղացիության հետ միություն կազմելու անհրաժեշտության մասին:

Այդ և 2-8 զրույցների դաստիարակչական

նպատակը: Նրանց կրթական նպատակը կայանում ե նրանում, վոր կարմիր բանակայինը տպագորե յուր հիշողության մեջ բանվոր դասակարգի ու գյուղացիության հեղափոխական պայքարի պատմություն կարերագույն դեպքերը, կարողանա պատմել նրանց մասին յուր համազգուղացիներին ու նորեկ կարմիր բանակայիններին և նրանց որինակի վրա ել համոզե, վոր անհրաժեշտ և աշխատավորների ու Ռ. Կ. Կ.-ն միությունը: Ի հարկե, չի կարելի պահանջել կարմիր բանակայինից բոլոր մանրամասնությունները: Նա պետք է հիշե պայքարի կարերագույն ետապները միայն, ու նրանց յուրաքանչյուրի եյությունը:

9-րդ զրույցը՝ յերափակումն և ամբողջ ցիկլի: Նա շաղկապում ե նրա հիմնական գաղափարը կարմիր բանակի հետ: Այսուղ քաղաքական դեկավարը պետք է ցույց տա կարմիր բանակայինին, վոր կարմիր բանակը աշխատավորների ոգնականն և ու զենքը և հետեւապես Ռ. Կ. Կ.-ն ոգնականը: Վոր, մյուս կողմից, Ռ. Կ. Կ.-ն՝ աշխատավորների առաջնորդը և միաժամանակ նաև կարմիր բանակի առաջնորդը: Զրույցը վերջանում ե տեղեկությամբ Հռկտեմբերյան հեղափոխության տոնի մասին և կարմիր բանակայինին ավելի և սերտորեն մօ-

առեցնում նրան, իբրև բանվոր դաստիարակի ու գյուղացիության միության տոնի, աշխատավորների ղեկավար Ռ. Կ. Կ. Ն տոնի:

Դրանք են զբուցների առաջին ցիկլի բովանդակությունը և կրթական ու դաստիարակչական նպատակները: Այդ կողմից նրանցից յուրաքանչյուրը ընկ. Գորլովսկին վերլուծել է մանրամասնորեն:

Բաղաքական ղեկավարի համար մեծ արժեք կունենան նույնակես այն մեթոդական ցուցումները, վորոնք կցված են յուրաքանչյուր, զբուցին: Իմանալով, վոր քաղաքամի մեթոդի կան մեզանում դեռևս այնքան ել մշակված չեն վոր ներկայումս դեռևս դժվար ե հանձնարարել վորնել մեթոդական միջոցներ, իբրև լավագույնը մենք չեյինք առաջադրում ընկ. Գորլովսկու այդ գործում վոչ մի անպայման շրջանակներ: Դրա համար ել քաղաքական աշխատակիցները չպետք ե մոտենան զբույկիս մեջ հիշատակ ված մեթոդական ցուցումներին իբրև մեթոդական տեխնիկայի վերջին խոսքի, այլ պետք ուշիմությամբ ընսեն նրան, դնահատություն յենթարկեն իրանց սեփական փորձի տեսակն տից ու մտցնեն անհրաժեշտ ուղղումները:

Դառ ոպտավետ կլիներ, յեթե ընկերներ այդ հարցի մասին իրանց նկատառումները հայուր

նեյին „Политработник“-ի եջերում:

Այսուամենայնիվ յես ուզում եմ տալ հետեւյալ մեթոդական հարցը:

Յերբ մենք վորոշում եյինք ամբողջ ցիկլ ու առանձին զբուցների կրթական նպատակները, ասում եյինք թե կարմիր բանակայինը անհրաժեշտ ե, վոր լավ հիշե մի շարք տեղեկություններ ու կարողանա պատմել նրանց ուրիշներին: Այդ նպատակը վորոշ չափով մեզ համար նոր ե. բայց հրաժարվել նրանից մենք չենք կարող, վորովհետեւ մեր բանակը կադրացին ե, վորովհետեւ յուր, իրեն կազրի նպատակները իրազործելու համար, կարմիր բանակայինները պետք ե վոչ միայն իմանան, այլ և կարողանան տարրականորեն արտահայտել իրանց գիտեցածները ուրիշներին և այդ գործում միել ոգնականներ բաղաքական կազմի համար: Այդ նպատակին կրավարարեն կարմիր բանակայինները այն ժամանակ միայն, յերբ նրանք կ'յուրացնեն վոչ միայն անհրաժեշտ գիտելիքները, այլև ընտրությունը այդպիսի աշխատանքը կատարելու համար:

Կարմիր բանակայինը կարող ե սքանչելի կերպով իմանալ Հոկտեմբերյան հեղափոխության պատմությունը, բայց չի կարող պատմել ուրիշներին, յեթե սիստեմատիք կերպով չըն-

տեղացվի նա այդ բանին. ուստի հարկավոր է այսպես տանել քաղաքական պարապմունքները, վորպեսզի բավականաշափ ժամանակ հատկացվի կարմիր բանակայիններին սիստեմատիքաբար ընտելացնելու իրանց իմացածները ուրիշներին զատմելու վարժություններին:

Բարդ ձևեր չի պահանջում այդ գործը: Դրա համար միանդամայն բավական է ներթով տալ կարմիր բանակայիններին բարձրածայն կարդալու քաղ-կանոնադրության (կամ թէ նրա անցյալ տարվա նախազծի) տվյալ հարցին վերաբերող այս կամ այն փոքրիկ հատվածը և հաստարակ ձևով բացատրելու նրան յուր ընկերներին: Նման ձևով կարելի յեւ տալ կարդալու և բացարտելու մի փոքրիկ կտոր վորեե հանրամատչելի գրքույկից: Կարելի յեւ վերջապես վորեե հարց տալ (որինակ հարկավոր է արդյոք մի. կ. կ. նը թե ոչ) ու առաջարկել կարմիր բանակայիններից մեկն ու մեկին բացատրել արդ հարցը մյուսներին:

Իհարկե, մինչև նոյեմբերի 7-ր այդ յեղանակը դեռ չի տալ շոշափելի արդյունքներ: Բայց յեթե գործադրենք նրան ամբողջ տարվա ընթացքում, որըստորե գոչ միայն քաղաքական պարապմունքների ժամանակ, այլ բոլոր կարմիր անկյուններում, ակումբներում և այլն,

անշուշտ լավ արդյունքներ կունհնանք: Յեզ այս կամ այն չափավ, կարմիր բանակայինների այս կամ այն մասը մենք անպայման կպատշաճութենք ձմեռվա ընթացքում կադրային կարմիր բանակայինների պարտականությունները հմտորեն կատարելու համար: Քանի վոր այդ մեթոդը նոր է, անհրաժեշտ է ամենալուրջ կերպով ուսումնասիրել նրան փորձով և այդ ուղղությամբ կատարված աշխատանքների փորձեւը փոխանակության նյութ դարձնել ըրջանացին դիմուրական քաղաքական թերթերի «Յօնն-Վեստնիկ»-ի ու „Պոլիտրաբունիկ“-ի եջերում:

Հուսանք, վոր ընկ. Գորլովկու այս զըրքույկը կրերի յուր ոգուար: Բայց նա մինչև վերջ ոգտագործված կլինի այն դեպքում միայն, յեթե այն բոլոր ընկերներն ել, վորոնք նրանով ևն անցնում իրանց աշխատանքը, կհայտնեն իրանց կարծիքը նրա թերությունների մասին, վորպեսզի նման տիպի հետեյալ աշխատությունների մեջ կարելի լինի խուսափել նրանցից:

Ա. Եփչես

ԹՐԱԳԻՔ

22 շաբաթ—66 նյութ.

I ՑԻԿԼ

Յերեք շաբաթ—9 ցյութ.

ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՅԵՎ Ռ. Կ. Կ. ԴՐՈՅԻ ՏԱԿ

1. Վաղը առնն է տոնսվելու նոյեմբերի 7-ին։ Յարական ոեժիմը։ Կալվածաերերի ու կապետալիստների իշխանությունը։ Բանվորների և գյուղացիների դրությունը։

2. Գյուղացիների և բանվորների կոփը ցարական ոեժիմի դեմ։ Գյուղացիները չեն կարողանուած հասցնել կոփը հաղթական վախճանի։ Բանվոր դասակարգի դերը, իբրև կովի զեկավարի։

3. Բանվոր դասակարգի և գյուղացիության կուսակցությունը կազմակերպելու անհրաժեշտությունը։

Բոյլշևիկները՝ բանվոր դասակարգի և գյուղացիության հեղափոխական կուսակցությունն եւ։ Նրանց դերը այդ կովում։

4. 1905 թվի հեղափոխությունը։ Կովի ամենակարևոր ետապները։ Գյուղացիական շարժումը։ Յարական բանակը ընդդեմ ժողովրդի։

Հեղափոխության ջախջախումը։ Նրա պատճառները։

5. 1914—17 թվականների պատերազմը։ Ավ սկսեց նրան և ինչու համար։ Ի՞նչ տվեց նա բանվոր դասակարգին և գյուղացիությանը։ Բոյլշևիկների պայքարը պատերազմի դեմ։

6. Փետրվարյան հեղափոխությունը։ Բանվոր դասակարգի դերը։ Իշխանության հափշտակումը բուրժուազիայի կողմից։ Գյուղացիների և բանվորների դրությունը։ Եսերների ու մենշևիկների դավաճանությունը։ Բոյլշևիկների դերը։

7. Հոկտեմբերյան հեղափոխությունը։ Բանվոր դասակարգի և բոյլշևիկների դերը։

8. Հոկտեմբերյան հեղափոխության հաջողության պայմանը բանվոր դասակարգի միությունն եւ գյուղացության հետ՝ Ռ. Կ. Կ. Հ. Պ. կավարությամբ։

9. Ռ. Կ. Կ. Հ. Պ. և կարմիր Բանակը։ Կարմիր Բանակը Ռ. Կ. Կ. Հ. Պ. ոգնականն եւ։ Ռ. Կ. Կ. Հ. Պ. աշխատավորության առաջնորդը, կարմիր Բանակի առաջնորդն եւ։ Հոկտեմբերյան հեղափոխության տոնը։

II ՑԻԿԼ

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԿՎԱ- ՃՈՒՄՆԵՐԸ

(7 շաբաթ—21 նյութ)

10. Իշխանության անցնելը Ռուսաստա-

Նուև բանվարների ու գյուղացիների ձեռքը:
Ա. Խ. Հ. Մ. քարտեզը: Հասկացողություն քար-
տեղի մասին: Հեռավորություն և մասշտաբ:
Յամաքի, ծովի, գետերի, քաղաքների ու հա-
զարդակցության ճանապարհների նշանակութե-
րը: Տեղանքի (местность) բելյեֆը (պատկեր):
Շանոթ տեղերի վորոնումը կարմիր բանակային-
ների կողմից:

11. Ա. Խ. Հ. Մ. ազգաբնակությունը: Նը-
րանց բաժանումը ըստ պարապմունքների: Գյու-
ղացիությունը: Բանվոր դաստակարգը: Գլխավոր
տնտեսական շրջանները:

12. — 16: Ինչ տվեց Հոկտեմբերյան հեղա-
փոխությունը գյուղացիությանը: Հողերի խլելը
կալվածատերերից և ընդհանուր ժողովրդի սեփա-
կանություն դարձնելը: Հողային կողեքուը (որենս-
ություններ): Հողոգտագործման, կապալի, բան-
վորական ուժ վարձելու յեղանակը: Տնտեսու-
թյան միերքների ողտագործման աղատությունը:
Խորհրդային իշխանության ոգնությունը գյու-
ղացիական տնտեսությանը: Հացի եքսալորտը
(արտածումը): Գյուղատնտեսական վարկի:
Ազգունումիական ոգնությունը և ադրբենուալը-
րոսպագանդը: Ոգնություն սովորականերին: Գյու-
ղացիական փոխոգնության դործի զարգացումը:


Փոխադարձ ոգնության կոմիտեները: Գյուղո-
ցիական կոռպերացիան:

17-18: Արդյունաբերության զարգացումը:
Յարական ժառանգությունը: Արդյունաբերու-
թյունը բարձրացնելու միջոցները: Առարերկրյա-
կապիտալի մասնակցության հրավիրելը: Նրա
ստրկացուցիչ պահանջները: Ա. Խ. Հ. Մ. աշ-
խատավորները իրանց ուժերով կրաքարացնեն
արդյունաբերությունը: Արդյունաբերության
բարձրանալը:

19. Ի՞նչ տվեց Հոկտեմբերյան հեղափոխու-
թյունը բանվոր դաստակարգին: Կապիտալիստի իշ-
խանության վոչչացումը ֆաբրիկներում: Ց
ժամյա բանվորական որ: Արհետակցական միու-
թյունները: Աշխատավարձի աստիճանաբար բարձ-
րանալը:

20. Աշխատավոր մասսաների կրթությունը:
Ազգաբնակության անզրագիտության լիկվիդա-
ցիան Հոկտեմբերյան հեղափոխության 10—ա-
մյակին:

21-23: Յեկեղեցին և Խորհրդային պետու-
թյունու: Յեկեղեցին ցարական ծառայության
մեջ: Յեկեղեցու բաժանումը պետությունից
Խորհրդային Խուսաստանում. կրօնի ազատու-
թյունը: Հոգևորականության գրկելը ոռմկից և
յեկեղեցական հողային դույքերի գըալումը: Հո-



զերտականության պայքարի Խորհրդային իշխանության գեմ: Հոգևորականության հրաժարվելը:

24-25: Պետական տնտեսությունը: Ծաղկութերը: Երանց ծածկելու յեղանակները: Թղթագրամների տպագրությունը և նրանց արժեների անկումը: Թղթագրամների տպագրության կրծատումը: Տուրքերը, իրրե տմբնից շահագլութիջոցը պետական ծախքերը ծածկելու համար Քուրծուազիայի, բարձր աշխատավարձի ու գյուղացիության վրա գրված տուրքերը: Գյուղացիության վրա գրված տուրքերի գասավորման համունքները:

26: Խորհրդային իշխանությունը բանու բառ-գյուղացիական քաղաքականության կիրառողներն եւ: Խորհ. իշխանության եյտթյունը:

27-29: Ա. Խ. Հ. Մ. ազգաբնակություն կազմը: Ազգությունների վիճակը յանդրական ոհեծիմի ժամանակ: Ժողովուրդների յառաջրատությունը և ազգային զարգացման ազդությունը Խորհրդային իշխանության ժամանակ: Ա. Խ. Հ. Մ. ազգային հասարակականություններն ու ավանդությունները: «Միաւթյան» և հանրապետություններն հարաբերությունների եյտթյունը:

30. Կարմիր Բանակը հսկում և Հոկտեմբերի

ըցան հեղափոխության նվաճումների վրա: Կարմիր բանակայինը պաշտպանում և բանվորների ու գյուղացիների տպատությունը, նրանց խորհրդային իշխանությունը, խորհրդային որենքները:

III ՑԻԿԼ

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ ՊԱՇՏՊԱՆ ՀՈԿՃԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՎԱԶՈՒՄՆԵՐԻ

(7 օպեր—21 նյութ)

31. Հոկտեմբերյան հեղափոխության նվաճումների թշնամին են սուսական և ստարյերկորյան կալվածատերներն ու կապիտալիստները: Կարմիր Բանակի ծագումը և ստեղծումը:

32-34. Քաղաքացիական պատերազմի եպիզոդներն ու դասերը: Բնդզեմ Կոլչակի, Դենիկինի, Լենատանի և Վրանցելի:

35. Ստարյեկորյան կապիտալիստների ողնությունը իրանց սուս և բայցարակիցներին, վատաները: Իշխանությունը ամբողջ աշխարհում, բացի ՍԽՀՄ-ից, կապիտալիստների ձեռքումն է: Դրանում ՍԽՀՄ համար թագնված վասնդները:

36. Ծանոթություն դորուսի հետ (յերկազունդ): Երա վրա յեղած նշանակումները: Մայր ցամաքներն ու ովկիանուները: Աշխարհի կողմերը: Պետությունները:

37—39. Մերձավոր հարեանները: Լեհաստանի քաղաքական աշխարհագրությունը: Փոխարարերությունները ՍԽՀՄ հետ:

40—41. Մերձավոր հարեանները: Ֆինլանդիա, Ռումինիա: Կարելիայի և Բեռլարիայի հարցերը: Եստոնիա, Լատվիա և Լիտվա:

42. Հեռավոր հարեանները: Անգլիա: Արեվելյան հարցը:

43. Թրանսիա: Նրա դերն ու միտումները Յեփրոպայում:

44—46. Գերմանիա: Զինվորական ջախչախումը: Վերսալյան դաշնագիրը: Ռուրի ուկանուացիան (գրագումը): Հեղափոխական բանվորական շարժման աճումը: Գերմանական բանվոր դասակարգն ու Խորհրդային Ռուսաստանը: Գրդ Դիվիզիայի 10-րդ դունգը Գերմանական պրոլետարիատի անվան:

47. Հեռավոր Արևելք: Ամերիկա: Յապոնիա: Սախալինի հարցը:

48. Նոր հարձակումների հնարավորությունը: Խորհրդային իշխանության պայքարը խաղղության համար: Կարմիր Բանակը իբրև խողաղության պահակ:

49—51. Յուր զորամասի պատմությունը: Կրկնենք Նրա փայտուն եջերը: Կարմիր բանակայինի պարտականությունները պատերազմում:

IV ՑԻԿԼ.

ՊԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ Ռ. Կ. Կ.-Ն ՅԵՎ ԿՈՄԻՆ- ՏԵՐՆԻ ԴՐՈՅԻ ՏԱԿ

(5 շաբաթ—15 նոյն)

52—53. Կարմիր Բանակը մենակ չե յուր պայքարում: Կարմիր Բանակի գերազույն առաջնորդն ե Ռ. Կ. Կ.Նը: Նրա անելիքները: Ինչպես ե նա նրանց ձեռք բերելու:

54—56. Խորհրդային իշխանության և Կարմիր Բանակի բարեկամները: Արևելյան ժողովուրդները: Նրանց հարստահարումը և աղատագրական պայքարը: Թյուրքիա: Կարմիր Բանակը և արևելյան ժողովուրդները:

57. Խորհրդային իշխանության և Կարմիր Բանակի բարեկամները ամբողջ աշխարհի բանվոր դասակարգն ե: Նրա կոփվը կապիտալիստների իշխանության դեմ ե: Նրա ոգնությունը՝ Խորհրդային Ռուսաստանին ու Կարմիր Բանակին:

58—61. Բանվոր դասակարգի և Արևելքի հարստահարված ժողովուրդների պարագլուխները կոմունիստական կուսակցություններն են: Նրանց միացումը կոմինտերնի մեջ: Կոմինտերնի նորատակները: Հինգամյա աշխատանքի արդյունքը: Կարմիր Բանակը Կոմինտերնի դրոշի տակ:

62 - 66. Կարմիր բանակայինների պարտականությունները բանվոր գասակարդի ուղյուղացիության առաջ: Հիշիր կարմիր լերդումբ: Պայքար կարմիր յերդումը խախտողների դեմ: Պարզե հերոսներին: Կարմրադրու շրանչանը: Կարմիր աստղը: Կարմիր դրոշ:

ԶՐՈՒՅՑ ԵՒՆ

Յարական ռեժիմը.

Ա. ԶՐՈՒՅՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ես եմքերի 7-ը կապիտալիստների գեմ աշխատավորների սարած հաղթանակի տոնն է: Հաղթանակն աջողվեց տանել յերկարամյածանը պայքարից հետո: Աշխատավորները պետք ե իմանան՝ թե ինչպես եյին պայքարում բանվորներն ու զյուղացիները, վորապեսզի դնան դեպի նորունոր հաղթանակները: Յարական ռեժիմի ժամանակ ամբողջ իշխանությունը պատկանում էր կալվածատերերին ու կապիտալիստներին: Կապիտալիստներն ու կալվածատերերը, ցարական ոիժիմի աջակցությամբ, սաստիկ հարցուահարում եյին աշխատավորներին: Գյուղացիների «ազատագրումը» պարզապես զյուղացիության թալանումն էր կալվածատերերի ու պետության ուղտին: Այդ «բարենորդությամբ» քայլայիմած զյուղացիները մեծացրին, ֆարբիկաների համար անհրաժեշտ, վարձու բանվոր-

ների բանակը: Ֆարբիկ-դործարանական բանվորները շահագործվում եյին կապիտալիստների կողմից ծայրահեղ շափերով:

1. ՀՈԿՑԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ

1. Ամեն տարի նոյեմբեր 7-ին Ս. Խ. Հ. Մ. աշխատավորները տոնում են կապիտալիստների և կալվածատերերի իշխանությունը տապալելու տարեդարձը: Բանվորների և գյուղացիների հոգիթությունը տեղի ունեցավ 1917 թ. նոյեմբերի 7-ին (հին որացույցով հոկտեմբերի 25-ին):

2. Այդ հաղթությունը աշխատավորները տարան վոչ միանգամից: Տանյակ տարիներ կախվ եյին մզում բանվոր գասակարդի լավագույն զավակները մինչև վոր նրանց աջողվեց խորտակել կալվածատերերի ու կապիտալիստների ամուր իշխանությունը: Տանյակ տարիներ անցան, մինչև վոր բանվորների ու գյուղացիների ամբողջ մասսան համոզվեց, վոր վոչ աստված, վոչ ել ցարը չեւ թեթեացնի նրանց դաւն կցանքը, վոր միայն իրանց ձեռքերով նրանք պետք ե կոփեն իրանց բախտը: Ծատ զոհեր, շատ լավ մարդիկ ընկան կապիտալիստների ու ցարական իշխանության դեմ մզած կավում չոկտեմբերյան հեղափոխությունից առաջ ու հետո:

3. Ամեն մի աշխատավոր անհրաժեշտ է, վոր իմանա՞թե ինչպես եյին ապրում նրա հայրերը ցարի և կապիտալիստների ու կալվածատերերի իշխանության ժամանակի, ինչպես եյին նրանք պայքարում ազատության համար: Նա պետք է իմանա, թեով եր յուր ոգնականը, բարեկամը այդ պայքարում և ով եր նրան խանգարում: Նա պետք է իմանա ովքեր են բանվոր դասակարգի թշնամիներն ու բարեկամները:

Եյդ բոլորը հարկավոր և իմանալ նրա համար, վոր մեր թշնամիները, թեև հաղթված են, բայց բոլորը դեռ չեն վոչնչացած: Նրանց մի մասը փախել ե ուրիշ պետություններ, ուր բանվորները դեռ ևս չեն կարողացել հաղթել կապիտալիստներին: Այնտեղ նրանք սպասում են՝ թե զուցե նրանց կաջողվի վորեև ձևով վերադառնալ իրանց ֆաբրիկներն ու կալվածքները: Մյուսները թագնվել են Խորհրդային Ռուսաստանում:

Մենք հարկավոր ե, վոր իմանա՞ք՝ թե ինչպես պայքարեց ու հաղթեց բանվոր դասակարգը, վորպեսզի ավարտենք նրա սկսած գործը ու թույլ չտանք հիմքին վերադառնալու:

Ահա ինչու յե հարկավոր ուսումնասիրել՝ թե ինչպես տեղի ունեցավ Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունը:

2. ՅԱՐԱԿԱՆ ԲԵԺԻՄԸ

4. Ռուսաստանում մինչև 1917 թ. փետրվարը ցարի իշխանությունն եր, վոր կառավարում եր վոստիկանության, գեներալների և ժանգարմիների ոգնությամբ: Ռուսաստանի խսկական տերերը կալվածատերերն եյին ու խոշոր կապիտալիստները: Նրանցից եյին նշանակվում մինխատրներ, նահանգապետներ, գեներալներն ու ցարական բանակի սպաները: Ցարը նրանցից ամենամեծն եր միայն: Քիչ գեղքեր չեն պատճել, յերբ կալվածատերերին դուք չեկող ցարին նրանք սպանել են կամ հայտարարել խելագար, իսկ նրա տեղը նշանակել ուրիշին (Պավել I):

5. Գատերազմները բոլորն ել մզվել են միմիայն կապիտալիստների ու կալվածատերերի ոգախն: Նրանք բոլորով միասին բազմել եյին բանվորների ու զյուղացիների թիկունքին ու կառավարում այնպես, ինչպես վոր ցանկանում եյին: Բանվորների ու զյուղացիների յուրաքանչյուր մի փորձ՝ ազատագրվելու նրանց ճշնշումից, կամ նույնիսկ գանգատվելու, նրանք խստրեն պատժում եյին, զնդակահարում եյին, ծեծում, բանտերը նստեցնում և աքսորում առնահեռավոր վայրերը հայտնի կերպով նրանց մատնելով կորսույան:

3. ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՅԻՆԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

6. Կալվածատերերն ու կապիտալիստները պետական իշխանությամբ չեք միայն վոր կեղեքում եյին ժողովրդին: Նրանց ձեռքումն եյին ֆարբիկներն ու գործարանները և հողերի մեծ մասը: Գյուղացիներն ու բանվորները ամբողջապես կախումն ունեցին կապիտալիստներից ու կալվածատերերից:

7. Կապիտալիստներն ու կալվածատերերը իրանց բոլոր հարստությունները ստացել եյին հասարակ խալանով ու աշխատավորների քրտինքն ու արյունը մզելով:

Սյատես կոչված «գյուղացիների ազատագրությունը», վոր իրագործվեց Աղեքսանդր Աշարի ժամանակ 1861 թվին ձեռնուու յեր կալվածատերերի համար միայն: Ազատազրված գյուղացիներին ձրի տվին չնշին մի քառորդ դեսպանին միայն, իսկ մնացած հողը նրանք պետք են գնեցին կալվածատերերից իր իսկական արժեքից $2\frac{1}{2}$ անգամ տվելի դնով:

Դետական տուրքերը գյուղացիական ծխերի վրա դրված եին ավելի, քան կալվածատերերի վրա (ան աղյուսակը): Տուրքերը հողի տված յեկամուտից դեբազանցում եյին, և գյուղացին շարունակ պարտ եր մնում գանձարանին: Շատ

անդամ այդ ապառիկների համար գյուղացիներից խլում եյին վերջին անառունը:

8. Առվաման չլինելու համար գյուղացին գնում եր քաղաք աշխատանք անելու:

9. Այնտեղ նա ընկնում եր Փարբիկանտի ձեռքը, վորը նրան ստիպում եր, դործարանական մյուս բանվորների հետ միասին, աշխատել որական 12-18 ժամ ծանր պայմաններում:

Հոգնածությունից և աշխատանքի վերահսկողության բացահայությունից առաջացած գերախտության զետքերի քանակը շատ բարձր եր: Այդ տաժանակին աշխատանքի համար բանվորները ստանում եյին գրոշներ, վորոնք անբավարար եյին ընտանիքը կերակրելու համար: Վորպեսզի կարողանա կերակրվել, բանվորը հարկադրված էր Փարբիկ ուղարկել յուր կտոջն ու զավակներին աշխատելու: Մուսական Փարբիկներում շատ կային 8-10 տարեկան հասակի յերեխաներ, վորոնք որական 12-14 ժամ բանում եյին Փարբիկական կյանքի վատառողջ պայմաններում:

Այդպիսով կալվածատերերն ու կապիտալիստները վոչ միայն քայքայում եյին գյուղացիներին ու թալանում բանվորներին, այլև վոշնչացվում եյին նրանց ընտանեկան կյանքը:

Արդյունաբերության կանգառման (չափական) (չափական)

դեպքերում (այդ կանգառումները կապիտալիստական յերկրներում լինում են հաճախակի, համարյա յուրաքանչյուր տասր տարին մի անգամ) հազարավոր բանվորներ փողոց ելին նետպէ յերկար ամիսներով առանց մի կտոր հացիւ ուժ Բանվորների մի մասը հուսահատություն դիմում եր թալանի ու գողության սից վոր վոչ չի ուզում սովաման լինել), (չե կանանց մի մասը հարկադրված եր վաճախսկ յուր մարմինը վաճառականների տղաներին: ուել Աճա թե ինչպես ելին ասլրում բանդ ներն ու զյուղացիները ցարական ռեժիմի ժամանակ:

Բ. ՆՅՈՒԹԵՐ ԼԻՆ ԶԲՈՒՅՑԻ ՀԱՄԱՐ

I. Հողային սարածության բաշխումը ցարական ռեժիմի ժամանակ.

6

1. Թագավորական, պետական, յեկեղեցական ու վանքապատկան հողեր... 154, 689, 513 դ.—39,
2. Գյուղացիական նադելներ (Հողաբաժիններ)... 138, 767, 587 դ.—35,
3. Մասնավոր-սեփականատերերի (կալվածատերերի ու վաճառականների)... 101, 735, 343 դ.—25, (արտահայտել դիազրամներով)

80/0

II. Սակավահող գյուղացիների տանակը 1905 թվին

| Ծիկը | Պիգը | Պ/Ը | Նրանց ունեցած հոգերի ընդհանուր տարածություն |
|--|-----------|------|---|
| Հողագույք . . . | 2,200,000 | 14,9 | 0 |
| Մինչև 5 դես. Հողաբաժիններուն ունեցող . | 2,900,000 | 19,7 | 9,030,000 |
| 5—15 « » . | 5,100,000 | 34,7 | 37,400,000 |
| 10—15 « » . | 2,200,000 | 15,0 | 26,500,000 |
| 15—50 « » . | 1,900,000 | 12,9 | 45,900,000 |
| 50 դես. ավելի « » . | 200,000 | 1,4 | 18,020,000 |

Յեղբակացություն. Գյուղացիության 85 Պ/Ը սակավահող եր:

III. Տուրքեր *) 1897 թվին

| Գյուղացիները վճարում գնում ելին 125/4 դես. համար ու . | Կարվածություն անդամական դես. համար ու . |
|---|---|
| Գետական հողային հարկ . | 6,810,000 2,494,000 ա. |
| Զեմստվարին տուրքեր . | 28,000,000 17,609,000 „ |
| Սիսկան . | 46,000,000 չեն վճարում |
| Հողագնման վճարելիքներ | 92,300,000 չեն վճարում |
| Հողամենը . | 173,110,000 20,003,000 |

Հնդկամենը տուրքեր ամեն մի դեսյատինին . . . 1 դ. 35 կ. . . 20 կ.

Մանուրություն. *) Ռեգակի: Անուղղակի տուրքերը շատ անգամ ավելի ելին: Տարե-

1899 р.

| Գյուղացիներ. | | Կալվածատերներ. |
|----------------------------------|-------------|----------------|
| Տուրքեր ամեն մի դեռ. 1 ու. 51 կ. | 20 կ. | |
| Ապարիկներ | 159,000,000 | 11,000,000 |

IV. Հողի յեկամաքերերությունը.

| | |
|---------------------------------|-------------|
| ՅԵԿԱՄՈՒՄԸ 1 դեսյատինի | 8 ու. 99 կ. |
| Արտադրական ծախքերը | 5 » 22 » |
| Հարկերը | 1 » 51 » |

Հարց. վարքան և սակավահաղ գյուղացու վաստակը հողից:

V. Պրոլետարիատի աճումը Ռուսաստանում.

| | |
|---------------------|------------------|
| 1887 թվին | 1,318,048 բանվոր |
| 1893 » | 1,582,904 » |
| 1897 » | 2,098,262 » |
| 1902 » | 2,373,419 » |

Հարց. Վարտեղից և առաջանում բանվորների աճումը:

VI. Կանայք յեվ յեւելաները քարտիկներում.

Յուրաքանչյուր հաղար բանվորին բնկնում եր,

կան մոտ 10 ու. յուրաքանչյուր շնչի համար պետքյունը ստանում եր սիայն ողիք:

| Կանայք | յեւելաներ |
|-----------|-----------|
| 1895—1904 | 1895—1904 |
| 647—678 | 69—91 |
| 451—482 | 105—141 |
| 24—86 | 4—15 |

VII. Հասարակ բանվորի վասակը Ռուսաստանում յեվ առասահմանում 1904 թվին.

| | |
|------------------------|------------------|
| Սմերիկայում 71 թ. շաբ. | 56 բան. ժ. համար |
| Անգլիայում 41 „ „ | 52½ „ „ „ |
| Գերմանիայում 31 „ „ | 56 „ „ „ |
| Ֆրանսիայում 43 „ „ | 60 „ „ „ |
| Ռուսաստան. 10-25 „ „ | 65 „ „ „ |

ՖԱԼՂԵԿԸ ԻՆՉ ՊԻՏԻ ԿԱՐԳԱ I ԶՐՈՒՅՑԻ ՄԱՍԻՆ

1. Դ.-Կինի—Հոկտեմբերյան հեղափոխությունը (27-րդ գլուխը):

2. Մեսյացեվ—Հողային և գյուղատնտեսական քաղաքականությունը Ռուսաստանում: Հըժատարակություն «Նովայ Դերեվնյ»-ի յեր. 7-27

3. Մեսյացեվ—Ռուսաց պատմության խրիստոնական: Հըժատարակություն «Կրասնայ Խով»-ի: 1 923թ. յեր. 41—44, 75—77 կամ թե

4. Պալքավսկի—Ռուսաց պատմությունը ամենամասուն նկարագր. I մաս, պետհրատ, յերես 168—174:

5. Դասակարգային պայքարի խրիստոնատիան, Հրատ. «Որբոյ» Պ. 1923 թ. յեր. 30—44

6. Ռուսաստանի գյուղական տնտեսությունը և Խորհ. իշխանության քաղաքականությունը գյուղում: Հրատ. Վ.Վ.Պ.Ը. Մ. 1923 թիվ յերես. 9—30:

Գ. ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ ԼԻՆ ԶՐՈՒՅՑԻ ՄԱՍԻՆ

Նախ բացատրենք՝ թե ինչպես տանել «Բանվոր դասակարգի ու Ռ. Կ. Կ.-ն դրոշմակիցից զիկիի զրույցները, անհրաժեշտ և պարզել քաղժամը վարելու հիմնական մեթոդները:

Քաղժամը կարմիր Բանակի բոլոր քաղլուսվարական աշխատանքի հիմքն է կազմում: Քաղժամի ծրագրի լավ յուրացումը կարմիր բանակայինին դարձնում է դիտակից մարտիկ ու քաղաքացի:

Ինչ հասկանալ լավ յուրացումն ասելով: Յեթե կարմիր բանակայինը իրան արվուծ հարցին կպատասխանի ուղիղ, դա դեռևս չի նրանակում վոր նա լավ է յուրացրել. պատասխանը կարող է լինել պատահական կամ անզիր արած, անբաստ: Յուրացնել կնօանակի հասկանաւ: Հասկանաւ կարելի յե այն միայն, վորը շոշափում է ունկնդիրը, այլև ապրել, վորը շաղկապված է մի ամբողջ շարք հիշողությունների, պատկերների հետ և այլն:

Հետեապես լավ յուրացնում են այն ժամանակ միայն, յերք գասատւն ունկնդիրների մեջ զարեցնում է ակտիվուրիունը (գործունեյությունը), յերք երա գրուցք տպավորվում է կարմիր բանակայինի մեջ մի ամբողջ շարք անջնջելի պատկերներով, յերք այդ գրուցք գուգորդվում է երա ունեցած մտապահեներով ու ըմբռնումներով:

I. ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ ԼՍԱՐԱՆԻ ՀԵՏ

Վորպեսպի կարելի լինի համնել դրան, անհրաժեշտ և, վոր քաղզեկը նախ և առաջ ծանոթանա յուր լսարանի հետ (ունկնդիրների կազմը): Քաղզեկը պետք է խմանա թե վոր միջավայրից և գուրս յեկել յուր ունկնդիրը, նրա հասակը, նրա ընդունակությունները, ինչն և նրան հետաքրքրում, ինչպես և նրա զարգացումը, ինչ և նա կարդացել և այլն:

Լսարանը ուսումնասիրելուց հետո միայն, կարելի յե հարմարեցնել նրան յուր զրույցները: Միևնույն նյութի մասին կարելի յե ու պետք է այլերակ խոսել տարբեր լսարաններում: Յեթե որինակ, ունկնդիրների մեծամասնությունը քա-

դաքային բանվորներ են, գյուղական կյանքին սակավ ծանոթ, ցարական ուժիմի վերաբերյալ զրույցն անելիս հարկավոր ե առավելապես ընդգծել բանվորի վիճակը ցարի ժամանակ, Դանրանց սրտին ավելի մոտ ե ու ավելի կիստաքրքրի: Մինչեւ գյուղացիական լսարանին, վորը անծանոթ ե քաղաքային բանվորների կյանքին, ավելի մոտ ե գյուղացիական կենցաղի պարզաբնուածը ցարերի ժամանակ. իսկ բանվորների մասին նրանց հարկավոր ե բացատրել այն չափով, վոր չափով վոր դա անհրաժեշտ է հաօկանալու համար բանվոր դասակարգի դերը հեղափոխական շարժման մեջ և այն:

Լսարանի հետ կարելի յե ծանոթանալ զանազան ձեերով: Մակերեսային նախնական ծանոթությունը լսարանի հետ կարելի յե ստանալ վաշտային գրասենյակի տվյալներից. կարմիր բանակայինների մեծագույն մասի հասակի, սոցիալական դրության ու նրանց ծագման մասին: Այդ տվյալներից կարելի յե անել նախնական յեղակացությունները: Յեթե որինակ, ունկընդիրները կովկասեցիներ են, նրանց ծանոթ ե ցարի ժամանակվա հայածանքը իրանց ժողովը՝ զի դեմ, ապա ուրեմն նրանց հետ զրուցելիս՝ պետք ե յելակետ ընդունել ցարական կառավարության ազգային քաղաքականությունը:

Առաջին իսկ զրույցից քաղցեկը անմիջականորեն կարող ե գաղափար կազմել ինչպես ամբողջ լսարանի, այնպես և առանձին—առանձին կարմիր բանակայինների մասին: Այդ տեղեկությունների ճշգրիտ հաշվառումը և գրանցումը կողմի նրան հետագայում թե դասավանդության ժամանակ, թե ամեն մի ունկնդրի արած առաջադիմությունը պարզելու և նրան բարձրացնելու համար միջոցներ վորոնելու գործում: Լսարանի հետ ծանոթանալը այն բանալին ե, վոր տանում ե, դեպի ունկնդրների սիտքը:

Բանալով դեպի ունկնդրի միտքն ու զդացմունքը տանող մռւտքը կարելի յե այնտեղ ներարկել մեր նյութերը, քաղաքական գիտելիքները:

Ի՞նչ ձեռվ այդ անել:

II ՊԱՏՄԵԼՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Կան մի շարք ձևեր կամ յեթողներ: Բայց մենք արդեն մատնանշեցինք, վոր լսարանի կազմի համեմատ անհրաժեշտ ե կիրառել պատմելու համապատասխան մեթոդը: Դրա համար քաղղեկը անհրաժեշտութեան պետք ե իմանալ դասավանդման բոլոր ձեերը, նրանցից ամեն մեկի առավելություններն ու թույլ կողմերը, վորպեսզի դորժա-

դրեւ այդ ձեւը իուրաքանչյուրը հարկավոր բովելին:

Ա.) Դասախոսական մեթոդը (լեկցիոն).

Դասատվի համար ավանդման ամենահարմար ձեւը լեկցիոն (դասախոսական) կամ պատմողական մեթոդն է: Դասատուն իրան վերապահված ժամանակի ընթացքում ավանդում է, պատմում է տվյալ հարցի մասին այն ամենը, ինչ վոր նա գտնում է կարելի և հասկանալի ունկընդիրների համար:

Որինակ, ցարիզմի նյութի մասին նա սկըսում է, «Ընկերներ, այսոր յես կպատմեմ ձեզ թե ինչպես եր ապրում մեր յերկիրը սրանից տարիներ առաջ, յերբ գեռես չկար Խորհրդային իշխանությունը: Այն ժամանակ Ծուսատանը կառավարում եր արյունաբրու Նիկոլայարքը: Նրան արյունաբրու եյին անվանում...» և այլն:

Վորոնք են այդ մեթոդի դրական կողմերը: Դասախոսական մեթոդով դասանվանդելիս՝ դասախոսը կարող է սահուն կերպով, առանց ընդհատումների պատմել ու ափանդել այն բոլորը, ինչ վոր նա պատրաստել է: Նա յերկյուղ չունի թե կարող ե շեղմել յուր նյութից (յեթե ինարկե, առաջուց լուվ մշակել ե ամբողջ նյութը, ինքը նրան լավ յուրացըել և հավասարաչափ

բաժանել ե յուր ժամանակը ըստ առանձին հատվածների): Ճշմարիտ ե, այդ մեթոդը պահանջում է դասատվից հոեանրական տաղանդ, հարկավոր և վորպեսզի դասախոսը դեղեցիկ կերպով առանց ձանձրացնելու արտահայտե յուր մտքերը, վառ պատկերացումներով: Այդ դեպքում միայն դասախոսը կարող է դրավել ու հետաքրքրել ունկընդիրին:

Հաջող պատմելու դեպքում ունկնդիրների մեջ կարող ե մնալ ցարերի կամայականությունների ու քմանաճույքների, կապիտալիստների և կալվածատերերի գիշատիչ բնույթի, գյուղացիների ու բանվորների վատթար, տաժանելի կյանքի և այլն ամբողջացրած ու կենդանի պատճերը:

Ահա դրանումն է կայանում դասախոսական մեթոդի դրական կողմը, ինարկե, յեթե նա տարգում է վերը հիշատակված պայմաններում:

Բայց նրա այդ դրական կողմերը ծածկը վում են մի շարք ուրիշ բացասական հատկություններով: Նախ ն առաջ այն, վոր նա քիչ ե նշանակություն տալիս լսարանին: Նախընթացից մենք իմանում ենք, վոր լսարանի հետ ծանոթանալ կարող ե տեղի ունենալ նրա ակտիվության արտահայտվելու պրոցեսում: Դասախոսական մեթոդի ժամանակ լսարանը բոլորովին

պասսիվ ե (անգործումնյացե): Միայն շատ նուրբ և փորձառու դասախոսը կարող է ճանաչել յուր ունկնդիրներին, առանց նրանց լսելու: Ցեզ դա լինում ե բացառություն: Դժվար է իմանալ՝ լավ են, ուղիղ են արդյոք յուրացրել ունկընդիրները իրանց լսած դասախոսությունները թե վոչ: Մինչդեռ հաճախ ե պատահում, վոր դասախոսում ես մի բան, իսկ ունկնդիրները հասկանում են ուրիշ բան:

Աւելինդրի պասսիվ, անզուօծունակ վերաբերությը առ վաս և նպատառում յուրացմանը:

Դասախոսական մեթոդը բոլորովին հաշվի չի առնում անհատ ունկնդիրներին. դասախոսը վոչ միայն չի կարող ստուգել թե վոր աստիճան յուրացրել ե յուր դասախոսությունը Սարդայանը կամ Պողոսյանը, այլև նա նույնիսկ անկարող ե առհասարակ ներգործել ունկընդիրներից շատերի յուրացման կարողության վրա: Բանը նրանումն ե, վոր շատ մարդիկ, ինչպես այդ ցույց են տվել փորձերը, ընդունակ չեն ըմբռնելու լսողությանը. նրանք կարող են նստել ամբողջ ժամ և հասկանալով խոսքերը, կարող են չըմբռնել սակայն նրանց իմաստը: Ինչպես վոր հաճախ պատահում ե, լսում ես մի վորեն լավդասախոսի կամ ճառախոսի, հիանաւմ ես նրա գեղեցիկ ճառով,

բայց դուքս ես գալիս, գլխումդե վոչինչ չի մընում, կամ քառս ե տիրում. կարծես թե ամեն ինչ հասկանալի յեր, յերբ խոսում եր ճառախոսը, բայց հենց վոր վերջացրեց, բոլորն ել դուռը հացավ: Այդ տեսակ մարդկանց սովորեցնել մի վորեն բան գասախոսական մեթոդով՝ անհուսալի յեւ:

Յուրացման յեղանակների ուսմունքի մեջ մեր հիշողության տպավորումները յերեք տարբեր տեսակների յեն:

1) Կազմության գործառանելի միջոցով. կան մարդիկ, վորոնք ըմբռնում են և լավ հիշում այն ամենը, ինչ վոր անցնում ե նրանց լսողության միջոցով. հերիք և վոր լսեն մի վորյեվե վոտանավոր, ու նրանք անմիջապես կարող են կրկնել նույնը ըերանացի: Յերբ կարում են, անպատճառ բարձրածայն կրկնում են խոսքերը: Դասախոսությունը ոգտակար է ան հենց այդպիսի մարդկանց համար:

2) Տեսողության գործառանելի միջոցով. Մարդկանց մի ուրիշ մասը յուրացման կարողությունը ստանում ե ամրապնդելով յուրացրած առարկան տեսողությամբ: Դեղեցիկ ճառերը նրանք չեն յուրացնի: Անհրաժեշտ ե, վոր նրանք իրանց լսածը տպավորեն իրանց հիշողության մեջ տեսողության ոգնությամբ:

Յ) Սուռային (օսրժի) գործառների միջոցով
թե լսողության և թե տեսողության հիշողու-
թյունները պասսիվ ըմբռնման մեթոդներն
են, պատճռմ են, ցույց են տալիս պատրա-
տին: Բայց շատ մարդկանց ըմբռնումը, յերբ
նրանք ուսունելու առարկան անց են կացնում
իրանց շոշափելու գործարանների միջոցով (ձեռ-
քերի, վոաքերի), միայն այն, ինչ վոր նրանք
անձամբ կոստարել են: Փորձել են ձեռքերով
շոշափելու գործարանների սգնությամբ, տալու-
փորփում են նրանց հիշողության մեջ: Ըմբռնման
այս վերջին յեղանակը կարելի յե կիրառել բո-
լոր ունկնդիրների վերաբերմամբ, վորովհետե-
այդ դեպքում մասնակցում են բոլոր զգայա-
րանները՝ լսողությունն ու տեսողությունը:

Ունկնդիրներին մզել ակսիֆուրիան, աժխատե-
նու, գորպեսզի ուսանելու գործում մասնակցություն
ունենան ենա բոլոր զգայարանները, այդ պես և ի-
նի ամեն մի ուսուցի ձգումը: Միայն բոլոր ըգ-
գայարանների սգնությամբ հիշողության մեջ
տալափորփածը կմնա յերկար ու կամրապնդվի հիշո-
ղության մեջ: Միայն այդ ձևով կարելի յե ներ-
գործել բոլոր ունկնդիրների ըմբռնողական ըն-
դունակության վրա:

Իմանալով այդ բոլորը, կարելի յե հեշտու-
թյամբ պատասխանել, վոր դասախոսական

մեթոդը անսպայման չի համապատասխանում
ակտիվ-շարժողական ըմբռնման մեթոդի պա-
հանջին:

Ապա ուրեմն սլիտանի՛ ե, արդյոք, դա-
սախոսական մեթոդը:

Անշուշտ, մասնակի կերպով նրան կարելի
յե սպասագործել հետեւյալ պայմաններում.

ա) Յեթե այն հարցը, վորը շոշափվում է
դասախոսության մեջ, մոտ ե ու զիպչում ե
ունկնդիրների ուշադրությանը:

բ) Եթե լսարանը ընտելացել ե լսել ու բա-
վականաշափ զարդացած ե. **գ)** Եթե դասախո-
սությունը տեսում է վոչ յերկար, ՅՕ ըովելից
վոչ ավելի. **դ)** Եթե մինչև դասախոսությունը
կամ նրանից հետո տեղի ե ունենում զրույց այդ
կարդացածի մասին. **յե)** Եթե դասախոսությունը
պատկերավորվում է դիտողական ձեռնարկնե-
րով: Այդպիսի գեպքերում միայն կարելի յե
հուսալ, վոր անցած դասախոսությունը վորոշ
չափով յուրացրած կլինեն:

Յեթե նկատի առնենք մեր կարմիր բանակա-
յինների լսարանը, վորը յուր մեծամասնությամբ
բաղկացած է շատ քիչ բան տեսած գյուղական
յերիտասարդներից, վորի հասկացողության կոմպ-
լեքսը (ընդհանուր պաշարը) չափազանց աղքատ
է, չի կարդացել ու չի ընտելացել յերկար

մտածելու, այդ գեղքում հարկավոր ե ասել՝
վոր դասախոսական մեթոդը նույնիսկ յուր
լավագույն ձևով անցանկալի յեւ:

Բ) Հարց ու պատասխանի մեթոդ

Դասավանդման մյուս մեթոդը զործ ե ածվում
«Հարց ու պատասխանի մեթոդ»՝ անունով: Նա
կայանում ե նրանում, վոր զրույցի բովանդա-
կությունը քաղղեկը անընազբոսիկ զրույցի ձե-
փով պատմում ե ունկնդիրներին: Նա մատա-
վորութեա հետեւյալ կերպով ե տարկում:

Քաղղեկ. — Ո՞վ գիտե, մենք ինչ տոն ենք առ-
նում նոյեմբերի 7-ին:

Պատասխան. — Հոկտեմբերյան հեղափոխության
տօնը:

Հարց. — Ո՞վ կառարեց Հոկտեմբերյան հեղափո-
խությունը և յերբ:

Պատասխան. — 1917 թվի հոկտեմբերի 25-ին
բանվորներն ու գինգորները տապալեցին կարե-
տարիստների իշխանությունը:

Հարց. — Պայցան, դուք բանվոր եք, չդիտե՞ք, ար-
դյոք, ինչու համար բանվորները ապատամբեցին:

Պատասխան. — Ժողովուրդը պատերազմել չեր
ուզում:

Բանվորները ձգում եյին ազատագրվել
ապիտալիստների ճնշումներից:

Հարց. — Իսկ ով սկսեց պատերազմը:
Պատասխան. — ցարական կառավարու-
թյունը:

Հարց. — ո՞ւմ ոգնությամբն եք պահպում
ցարական իշխանությունը, և այն:

Այդ ձեռփ, վոչինչ չպատմելով, յելակետ
աւնենութով ունկնդիրներին հայտնի փառաերը,
քաղղեկը ուղղություն տվող հարցերով լսարանի
համար աննկատելիորեն վերականգնում ե միա-
պետության ամրող պատկերը:
Վոր և այդ մեթոդի առավելությունը:

Գլխավորագետ ունկնդիրների մեջ լարված
ակտիվ գրություն պահպանելու: Հարցերը կարե-
նի և տալ ամբողջ լսարանին կամ առանձին
ունկնդիրներին: Ունկնդիրը չի կարող հարցին
պատասխանել առանց մտածելու: Եթե նույն-
իսկ պատասխանը ուղիղ չինի, մյուսները
կուղեն նըսն: Կարող ե վիճաբանություն ծա-
գել, հիշողությունը կգրգռվի, հուշերը կը-
տեղան, և այն: Այդ մեթոդով զեկավարվելիս՝
լսարանը չի կարող քննել, նա անպայման ակտիվ
է: Զրույցի ընթացքում քաղղեկը ուղումնասիրում
և յուր ունկնդիրներին, նկատում ե թե ով ե
թույլ, և կարող ե համապատասխան հարցերի
ուղղել տվյալ ունկնդրին: Այդպիսի զրույցի

ժամանակ ունկնդիրը սովորում և լերանացի
արտահայտել յուր մտքերը:

Ահա այդ մեթոդի գրական կողմերը: Սա-
կայն այդ մեթոդն ել ամենադժվարն է ու
վտանգավորը, քան դասախոսականը: Նախ և լսեցեք, յես կպատճեմ ձեզ... և այն: Վերջա-
ռառաջ, շատ դժվար ե (դա պահանջում է նախ-
նական մեծ աշխատանք) ընտրել հարմար հար-
ցեք: Յերկրորդ՝ մտավորապես դեռևս դիսցիպ-
լինայի չենթարկված լսարանը կարող է յուր
հարց ու պատասխաններով շեղել զրույցի ան-
միջական բովանդակությունից: Հարկավոր և
ունենալ մեծ տակտ ու մանկավարժական հըմ-
տություն, ավել մեթոդով զրույց ունենալու
համար:

Գ.) Հարմարեցած մեթոդ (Կոմիսիոն. լուսական մեթոդ): Ետք դասատուներ միաձուլում են այդ յերկու
մեթոդները: Սկսում են զրույցով, ունկնդիր-
ների մեջ առաջ են բերում շատ հարցեր և
առա քաղղեկը շատ հակիրճ կերպով 15-20 բո-
պերի մեջ պատճեմ ե զրույցի բովանդակու-
թյունը, իսկ վերջում ել պատասխանում և
արված հարցերին և ինքն ել յուր կողմից
տալիս ե վերաստուգողական հարցեր: Որինակ,
քաղղեկը սկսում ե յուր զրույցները նախորդ
որինակից հարցեր ու պատասխաններ տալով ու
շարունակում ե.

Ո՞վ ե հիշում, ինչպես ելին ապրում բան-
կայն այդ մեթոդն ել ամենադժվարն է ու
վտանգավորը, քան դասախոսականը: Նախ և լսեցեք, յես կպատճեմ ձեզ... և այն: Վերջա-
ռառաջ, շատ դժվար ե (դա պահանջում է նախ-
նական մեծ աշխատանք) ընտրել հարմար հարց և տալիս.

Ինչով ե տարբերվում Խորհրդային իշխա-
նությունը ցարականից: Ո՞վ եր պահպանում
ցարական իշխանությունը:

Կարող ե պատահել, վոր ունկնդիրների
կողմից հարց արվի.—Հապա ինչպես ելին
համբերում բանվորները:

—Պատասխան.—Այդ մասին կիսունք
մյուս զրույցում:

Այդպիսավ, նախապես արդեն կարելի յե
զրավել լսարանի ուշագրությունը դեպի հաջորդ
զրույցը: Եթե հարցը կենսունակ հարց ե և նրա
անունն անդամ հետաքրքրում ե, անհրաժեշտ
ե այդ հետաքրքրությունը ոգտագործել տալով
ցուցումներ համապատասխան հատվածները
առաջնուց կարդալու համար:

III ՑՈՒՑԱԴՐԱԿԱՆ ԶԵՐՆԱՐԿՆԵԿԸ:

Մենք արդեն խոսել ենք, թի վորքան կա-
րենք ե, վորպեսզի բոլոր զգայարանական
գործարանները ստանան իրանց բավարարու-
թյունը և ոգտաշործվեն զրույցների ժամանակ:
Մինչդեռ, նոյնիսկ հարց ու պատասխանի և

միացեալ մեթոդները լրկ բանավոր մեթոդներ են, ուր ամենից ավելի մասնակցություն ունի լը-սողությունը։ Հետևապես անհրաժեշտ է զրոյցի մեջ մտցնել նաև այնպիսի տարրեր, գորոնք բավարարեցին նույնպես տեսողությունը ու մյուս զգայաբանները։ Մանավանդ դա անհրաժեշտ է անել կարմիր բանակայինների լսարանի համար։ Մեր կարմիր բանակային, յերիտասարդությունը, ինչպես առհասարակ բոլոր աշխատավոր յերիտասարդությունը, ընտելացել է մտածել պատվերներով։ Նրանում ամեն մի միտք շաղկապիւծ ե իրականության հետ, նա կոնկրետ է, մարմագոր։ Դրա համար ել, անհրաժեշտ է հիմնավորել զրոյցը ցուցադրական ձեռնարկներով, փորպեսզի վոչ միայն լարի ունկնդիրների լսողությունն ու հիշողությունը, այլև նոր ըմբռնությունն անցնեն տեսողության միջոցով ել ու շաղկապիւն ունկնդիրների մեջ յեղած մտապատկերների հետ։ Դարձնել ուսուցումը ցուցադրական, կոնկրետ—ահա դա յե լավ ուսուցչի նպատակը։

Ցուցադրականությունը լինում է զանազան տեսակ.

1. Անմիջական ցուցադրումն։ Նա ստացվում է այն ժամանակ, յերբ ցույց են տալիս ուսանելի առարկան յուր իսկությամբ, պատ-

մում եք որինակ, ֆաբրիկի կյանքի մասին, ու տանում եք ունկնդիրներին ֆաբրիկը տեսնելու ձեր պատմելուց առաջ կամ հետո։

2. Արտադրական ցուցադրումն, վոր ստացվում է այն դեպքում, յերբ իսկականին փոխարինում է քարտեզի վրա նրա պատկերացումը, կամ նրա լուսանկարը, կամ ցուցադրվում է բեմի վրա։

Ցուցադրման այս յերկըորդ տեսակը մեզ համար ամենամտաշելին է, ապա ուրեմն և կարեւը։ Դուք խոսում եք Հոկտեմբերյան հեղափոխության մասին, ուրեմն ցույց տվեք նրա առաջնորդների լուսանկարները, կոմի պատկերների արտանկարները, պատմում եք գյուղացիության վրա զրված ծանր հարկերի մասին, ցույց տվեք Բողդանով—Բելսկու «ապառիկների համար» հայտնի պատկերը։ Առհասարակ ձգտեցեք տպագորել ձեր զրոյցից բոլորը, ինչ հնարավոր ե, տեսողական պատկերներով։ Մանավանդ հարկավոր ե ոգտագործել թվական նյութերը։

Թվանշանսերը, փորոշ չափով, նույնպես ցուցադրական ձեռնարկներ են։

Նրանց ճշտությունը համոզում է, մեխավում է հիշողության մեջ։ Բայց թվանշանների հետ հարկավոր ե վարվել իմանալ։ Զի կարելի նրանցով ձանրաբեռնել ունկնդիրին։ Ուստի, անհրաժեշտ է

բոլոր թվերը տալ այն ձևով, վոր իսկույն տալավորվեն նրանց հիշողության մեջ, Դրան համար կարելի յէ թվական տվյալները փոխանցելով դիագրամների:

Բերում եք, որինակ, թվեր հողի ոգտագործման մասին ցարական Ծուսաստանում, նկարեցեք մի շրջան և գանազան դույներով պատկերացրեք յուրաքանչյուր դաստկարդին ընկնող հողաբաժնի տարածությունը: Շրջանի մեջտեղում դեռեղեցեք ձեր թվերը: Այդ ձեռվ թվերը միանգամբ ցույց կտան գանազանությունը կոսորակներով: Դիագրամները կարելի յէ նկարել նույնապես պատկերի ձևով: Դա ել ավելի դիտելի ե: Որինակ, միևնույն հողի ոգտագործման վերաբերյալ աղյուսակը նկարեցեք ահազին դաշտի նըմանությամբ միևնույն հարաբերությամբ բաժանելով կտորների: Էստ վորում զյուղացիական կտորը լցրած կլինի աշխատավոր մարդկանցով, նույնիսկ նրանց մի մասը կանգնած կմնա դաշտից դուրս, դրանք հողագուրիներն են: Կատածատերերի կտորների վրա զետեղեցեք 2-3 կալվածատիրական կերպարանքներ և այլն:

Ցուցադրականությունը ձեռք և բերվում թարրոնական ներկայացումների միջոցով նույնապես, նաև այնպիսի բեմադրություններով ուր պատկերացվում են այն հանդամանքներն ու

պայմանները, վորոնց մեջ տեղի րեն ունենում քննվող անցքերը:

Կա ցուցադրականության մի ուրիշ տեսակն ել: Նկարագրական ցուցադրումն Իազեղարկեստական խոռոքի միջոցով ունկնդիրների մեջ կենդանի պտտկերներ առաջացնելու ձեն ե: Որինակ, զյուղացիական խթառումների լրիվ պատկերը կազմելու համար ոգտակար և տալ ունկնդիրներին բարձրածայն կարդալու (կամ ավելի լավ կլինի տալ արտահայտիչ ու գեղեցիկ ձեռվ կարդալ իմացողին) մի զլուխ Վոյնիի «Պատանեկություն» պատմվածքից: Ցուցագննողականությունը ձեռք և բերվում նույնպես եքսկուրսիներ կատարելով թանգարանները և այլ տեղեր, վորոնք կապ ունեն զրույցի տուարկայի հետ:

Ցուցադրականության կիրառման բոլոր տեսակները թվել անկարելի յէ ու ավելորդ ե:

Ամեն մի քազզեկ ինքը կարող և գտնել շտամ ձեռեր ուսուցումը գարձնելու ցուցադրական:

Ամենազդիվոր առարկությունը քաղֆամում ցուցադրականությունը կիրառելու հնարավորության գեմ կայանում ե նրանում, վոր ցուցադրելու ձեռնարկներ չկան ու զրույցների համար սահմանված ժամանակը կարձ ե: Առաջին

պատճառը միանդամայն կարելի յե վերացնել։
Փորձը ցույց տվեց, վոր կարելի յե սեփական
ուժերով պատրաստել վորոշ ցուցադրական ձեռ-
նարկներ։ Ձեռնարկների մի մասը ուղարկում ե
Ա. Ս. Պ.-ը։ Յերկրորդ գժվարությունից կարելի
յե դուրս դալ հետեւյալ ձեռվ։ Թող բոլոր աղյու-
սակները, նկարները, դիագրամները կախված
լինեն դասը սկսվելուց մի քանի ժամ առաջ,
աչքի ընկնող տեղում՝ տկումքում, «Լենինյան ան-
կյունում» և այլն, հետեւյալ մակագրությամբ。
«Եյութեր քաղթամի այս ինչ թեմայի դասի մա-
սին»։ Յուրաքանչյուր ձեռնարկին հարկավոր ե
կազմնել մի փոքրիկ տոմսակ ու վրան գրել պարզ
ու կարճառու։ Թե ինչ և այդ նկարը պատկերա-
ցընում։ Կախած ձեռնարկները անշնչառ կհետա-
ըլըքրեն ամեն մեկին։ Յեթենա կախված ե պա-
րապմունքից առաջ, կարող ե պատահել, վոր շատ
բան հասկացված չլինեն, բայց դոնե առիթ կտա-
մածելու, կզարթեցնե հետաքրքրություն, վորը
կարելի յե մեծ աջողությամբ ողտագործել պա-
րապմունքների ժամանակ։ Պարապմունքների
միջոցին հարկավոր ե ձեռնարկները տանել դա-
սարան։ Պարապմունքներից հետո նրանց դար-
ձյալ վերադարձնում են իրանց տեղերը, ակումբ։

IV. ԶՐՈՒՅՑԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ

Ծանոթ լինելով լուսարանին, վճռելով թե,
չոր մեթոդով տանել զրույցը, բնտրելով համար
ցուցադրական նյութ, քաղղեկը դեռևս պետք ե
գնուե մի ուրիշ խնդիր ել. ինչպես դասավորել
զրույցի նյութը։ Նյութի դասավորության
գժվարությունը կայանում ե նրանում, վոր
զրույցի համար հատկացված ժամանակը չա-
փազանց սուղ ե։ Յեվ քաղղեկը պետք ե հիմնա-
վորապես նրա վրա առաջուց աշխատանք թոփե։
Աշխատանք թափելը նախ և առաջ կայանում ե
նյութի լավ յուրացման մեջ։ Քաղղեկը նախա-
պես պետք ե ուսումնասիրե զրույցի բովանդա-
կության վերաբերող նյութերը հիշատակված
ձեռնարկներով։ Նույթը չմոռանալու համար
ավելի լավ և կազմել կարգացածի կոնսուլտը
(ընդունակ ծրագիրը) մաս — մաս։

Առաջին զրույցի համար, որինալի, հատնա-
ըլշկած են։

Կինօ Հոկտեմբերյան հեղափոխությունը։
Մեսյացեվ և այլն։ Կարգալով կինից առաջին
յերկու յերեսները, հարկավոր ե զրքույթը դեռև
զնել և հիշողության հիման վրա գրե, թղթի
վրա կարգացածի համառոտ բովանդակությունը։
Այդ գրվածին տալ համապատասխան վերնագիր։

Ապա հարկավոր ե թողնել մի վորոշ տեղ՝ դատարկ ուրիշ ձեռնարկներից քաղած ավելի մասնամասն նյութերով լցնելու համար։ Յեթե ձեռնարկների մեջ պատահում են զառ պատկերներ, վորոնք քաղղեկի կարծիքով, պիտանի յեն իրեւ որինակներ, հարկավոր է ընդգծել նրանց կամ, ավելի լավ է, արտադրել նրանց իրանց կազմած կոնսոլեկտում։ Վերջացնելով բովանդակության կոնսոլեկտի կազմելու, անհրաժեշտ ե առանձնացնել այն հիմնական մաքերը, վորոնք անպատճառ պետք է յուրացվեն զրուցի միջոցին։ Այդ հիմնական մաքերը պետք է դառնան զրուցի ուրվագիծը (պլանը)։ Այնուհետև քաղղեկը պիտի բաժանելուր ժամանակը ուրվագիծը առանձին մասերի վրա։ Որինակ՝ առաջին զրուցի հիմնական մաքերը բաղկացած են 4 կետերից։

1. Ինչու յե հարկավոր սովորել չոկտեմբերյան հեղափոխության պատմությունը.

2. Ի՞նչ եր ներկայացնում իրանից ցարական կառավարությունը.

3. Վար զասակարգերն եյին իշխում ցարժամանակ։

4. Բանվորների և գյուղացիների պարբերական անվանակի ժամանակ։

Մեր արամագրության առակ կա ընդումենը

60 ըռովե։ Առաջին կետին բավական նվիրել 5 ըռովե։ Նա նպատակ ունի հետաքրքրություն զարթեցնելու դեպի ամբողջ ցիկլը։ Նա պետք է հանդես բերե այն բոլոր հասկացողությունները, վոր ունեն ունկնդիրները չոկտեմբերի մասին։ Նրա գերը սփանդակող է։ Յերկրորդ և յերրորդ կետերը պետք է դաստիարակեն ունկնդիրներին առելությամբ վերաբերվելու կապիտալիստների անցյալ թագավորությանը։ Կարմիր բանակայինների մեծ մասը, շնորհիվ նրանց յերբիտասարդության, շատ աղոտ կերպով են պատկերացնում, թե ինչ բան եր ցարական ուժիմը։ Ռւստի այդ մասի վրա մի փոքր ավելի յերկար պետք է կանգ առնել ու հնարավոր յեզարան չափ ավելի թանձր զույներով պատկերացնել ցարական ուժիմի կամացականությունը, արյունաբերքությունն ու ախորժակը։ Այդ մասի վրա պետք է գործադրել 12-15 ըռովե։

Զրուցի գլխավոր առանցքը վերջին կետն ե, բանվորների և գյուղացիների զրությունը։ Հիմնական յեզրակացությունը պետք է դարձնել աշխատավորների ծանր նյութական և իրավադուրկ միճակը։ Յերկրորդ յեզրակացությունը՝ արդյունաբերական բանվորների և գյուղացիների առջև սոցիալական միջավայրը և նրանն

համապատասխան ել յուրաքանչյուրի արձագանքը իրանց դրության նկատմամբ։ Այս մասին պետք են նվիրել 20-25 րոպե։ Ժամանակի մասնաբար մասը նվիրել յեղրակացությունների ձեռվակերպմանը և անցածը յուրացնելու ստուգումը։

Յերբ զրույցի ուրվագիծը պատրաստ են արդեն, անհրաժեշտ են ամեն մի կետի պիմաց նկատել այն հարցերը, վորը քաղղեկը պատրաստվում է տալ, նմանապես և այն ցուցադրական ձեռնարկները, վորը հարկավոր է կիրառել զրույցի յուրաքանչյուր մասի նկատմամբ։

Որինակելի հարցերը զետեղված են փերնում։ Առաջին զրույցի համար ձեռնարկներ կարող են ծառայել Հոկտեմբերյան հեղափոխության առաջնորդների պատկերները, վերոհիշյալ նկարները, և զրույցին կցված թվական նյութերը։ Այդ բոլորն անելով, քաղղեկը համարյա պատրաստ է զրույցի ու կարող ե այդ անել համաձայն կազմած ծրագրի։

Իհարկե, ամեն ինչ նախատեսել չի կարելի։ Կարող ե պատահել, վոր զրույցի միջոցին այդ ծրագիրը փոխվի, նույնպես ունկնդիրների համար ընտրված հարցերը։ Այդպիսի դեպքեր պատահում են, ուստի նրանց հարկավոր և հաշ-

վի առնել։ Դրա համար ել կազմած ծրագիրները ավելի լավ ե զրել հատուկ աետրակում։ Մի յերեսում զրել ծրագիրը, իսկ նրա հակադիր կողմում, զրույցը վերջացնելուց հետո, նշանակել ծրագրից արած բոլոր շեղումները ու դրա պատճառները։ Այդ տեսակ հաշվառումը կինի քաղղեկի լավագույն գործնական ուսուցիչը և նա միշտ կարող կլինի յուր նկատողությունների համաձայն ուղղել յուր արած սխալները։

Տեսրակում արած նկատողությունների ձեվը.

ԶՐՈՒՅՑԻ ՄՐԱԳԻՐԸ

ՑԱՐԱԿԱՌՆ ՌԵՋԱՄԾԵՐԸ.

1. Ինչու մենք պետք են իմանանք Հոկտեմբերյան հեղափոխության առաջնորդների պատկերները, մասնաւոր և նկարները։

Հ.-ինչու ենք տանում նոյեմ. Դը Պ.-Հոկտեմբ. հեղափ. տարեդարձն և։

Հ.-ով կատարեց Հոկտ. հեղափոխությունը յունիցան։ Հարկավոր եր նրանց նախարարը ներգործություն չունեցան։ Հարկավոր

Պ.-բանվորներն ու զբուղացիները։

Հ.-ինչու համար, և այն։ Այդ մասի համար զարծածել համարյա զննական ձեռնարկները։

ույց տալ լենինի. Տրոցկու,

նկատողություններ զբույցները կատարելու առիթը անգամ շատ թուլ։ Շատերը, մասնավանդ Ա. Ա.-ը, շատ են հետ մնացել, մինչև անգամ շրբան ով և լենինը Տրոցկին, Կալինինը, Ցույց տված նկարները ներգործություն չունեցան։ Հարկավոր եր նրանց նախարարը տարեդարձն միայն հարցեր տալ։

Բնադրակառակը, շատ աջող անցավ 4-րդ մասը Լեգուները բացվեցին ու պատճում եին իրանց զյուղի զրության մա-

Բուրնազի, Մուրալովի և այլոց
նկարները:

Հ. Ի՞նչ եր ներկայացնում ի՞
շանից ցարտկան սեժիմը:

Հ. Անձ եր կառավարում Առու
սաստանը մինչև հեղափախու-
թյունը:

Գ. Նիկոլա ցարը և այլն:

Այն պատերազմի ժամանակ և
այլն:

Այստեղ յես ել սիալ գոր-
ծեցի, գրավելով նրանց լուշ-
քը պատմություններով, ու
ժամանակը անցավ: Յես ժա-
մանակ չունեցա նրանց հետ
միասին գրել հիմնական բեդ-
րակացությունները և այլն:

Մնում ե այժմ ցույց տալ թե ինչպես կի-
րառել նրանց պատրաստության ստուգումը:
Անդրածեղու և յուրաքանչյուր զրույցի վերջում
մի քանի կարմիր բանակայինների հարցեր տալ
անցածի մասին: Նույնն ել պետք և անել հա-
ջորդ գասի սկզբում, թե ստուգման համար
և թե անցեալ զրույցի հետ կազ ստեղծելու
նպատակով: Ոգտակար և նույնպես, ամեն մի
զրույցի վերջում ձևակերպված յեղրակացու-
թյունները գրել գրատախատակի վրա յեթե կա:
Դրագետ կարմիր բանակայինները պետք և
արտագրեն այդ յեղրակացությունները իրանց
տեսրակների մեջ: Դա կնպաստի զրույցը լավ
հիշելուն, իսկ ոնկնդիրները կունենան միա-
ժամանակ ըորոր զրույցներիկոն սպեկտը: Ստուգիչ
հարցերը անցածի մասին ոգտակար և տալ
յուրաքանչյուր պատեհ բողեյին, նմանապես
հաջորդ զրույցներում հիմնավորումներ անել

անցածի վրա: Դա նովաստում ե հիշողության
արթուն մնալուն:

Շանօրություն.— Այն բոլորը, ինչ վոր
ասված և առաջին զրույցի բացատրական զրու-
թյան մեջ, զասավանդման տեխնիքական յեղա-
նակների համապատ ցուցումն ե և վերաբե-
րում ե վոչ միայն առաջին զրույցին, այլև
բոլոր հետազանկերին: Մյուս բացատրական զրու-
թյուններում մենք միշտ հիմնավորումներ կա-
նենք առաջին զրույցների համապատասխան
կառուների մասին:

ԶՐՈՒՅՑ 2-ՐԴ:

ԽԶՉԵՍ ԵՅԻՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ ԲԱՆՎՈՐՆԵՐՆ ՈՒ ԳՅՈՒ-
ՂԱՑԻՆԵՐԸ ՑԱՐԱԿԱՆ ՌԻԺԻՄԻ ԴԵՄ

Ա. Զրույցի բովանդակությունը.

Շանօրությունը ու զյուղացիների չափազանց ծանր
գուռքյունը գրգեց երանց մօսական կոփի մզելու
իրանց կեղեցիների գեմ: Գյուղացիական ապահո-
բությունները անհաջողություն ելին կրում, շնորհիվ
նրանց կազմակերպված չինելուն չեզ զյուղացիների
անգիտակցության: Գյուղացիների նախնական հավա-
սց թե տեր բազավորը կտնորինի, ցարական կա-
ռավագության խստությունների ուժեղացման հետ
զուգընթաց չացագ: Գյուղացիներունք վորոնում ե
յուր զանակցին բաղաբային բանվորության մեջ: Ժաբ-
եֆկա—զործարանական բանվորները իրանց կոփը
առաջ ելին տանում ավելի կազմակերպված ուժեւով:

Յարական կառավարության ոգնուքյունը կապիտալիստներին բանվորական զործագութերը նույնականացնելով՝ գարձաւեց բանվորներին ցարական ոփթիմիտ ամենավոխներին բժնամիները, Կապիտալիստական հաստատակարգը բազմացրեց բանվորների բանակը ու դրանով ել նպաստեց բանվոր զասակարգի ուժեղացմանը: Բանվոր զասակարգի մղած անքնջիան կոփվերը ստիպեցին երան կազմակերպել յուր սեփական կուսակցությունը հաղթանակը պարագանելու համար:

1. Նախորդ զրույցից յերեսում ե, թե վորքան վատ եյին ապրում բանվորներն ու զյուղացիները կապիտալիստների ու կալվածատերերի իշխանության ժամանակ: Շատ հաճախ դեռևս նին ժամանակներում ճորտատիրության շրջանում, գյուղացիները ապստամբում եյին իրանց կեղերողների դեմ, յերբ նրանց այլևս զգվեցնում եր «տեր թագավորից» արդարություն սպառելը: Այդպես, յերգերից հայտնի յե 'սրանից 300 տարի առաջ Ստենկա--Բալինի բարձրացրած ապստամբության մասին Ռոմանովների առաջին ցարերի դեմ: Հայտնի ե նույնպես Պուդաչի ապստամբությունը ընդդեմ շվայտ Յեկատիրինա թագուհու, վորը յուր սիրեկաններին նվիրում եր միլիոնավոր դեսյատին հոգեր, հարյուր հազարներով ճորտ—գյուղացիներ ել վերադիր: Պուդաչյան ապստամբությունը

բոնկեց Մերձուքալյան և Մերձվոլգյան շրջանները: Ամբողջ բայքայված զյուղացիներնը Ռուբալյան գործարանների բանվորները և հարստահարվող վոչ ոռւս ցեղերը հարեցին Պուգաչին:

2. Մի շարք ապստամբություններով բոնկեց Ռուսաստանը «ազատագրության նախորյակին: Բայց բոլոր ապստամբություններն ել մատնվեցին անհաջողության: Գյուղացիներնը տղետ եր ու վատ կազմակերպված: Համախըմբված չեյին, իսկ վոր գլխավորն ե, զյուղացիները չեյին հասկանում թե ում դեմ պետք եր կովել: Հաճախ զյուղացիներնը չնորհիվ յուր տղիտության պաշտպանում եր թշնամիներին ու ջարդի յենթարկում անմեղներին, իսկ յերեմն ել իր բայեկամներին:

3. «Բարենորոգումը», վորին սպասում եյին գյուղացիները, իսպեց նրանց հույսերը: Յարը նրանց վոչ մի «հող և ազատություն» շրտը կեց: Նա նրանց ունեցած հողը նույնիսկ պակասեցրեց (անս նախորդ զրույցը), իսկ ազատությունը միայն թղթի վրա եր: Այն ժամանակ ամբողջ Ռուսաստանում բարձրացան գյուղացիական խլրտումները, Խլրտումները ուղղված եյին կալվածատերերի դեմ, այլ վոչ

ցարի: Գյուղացիներին շարունակ այնպես եր թվում, վոր ցարի ծառաներն ու կալվածատերերը խաբում են ցարին ու կողոպառում ժողովը՝ դիմ ցարի կամքի հակառակ: Գյուղացիությանը ձնշում եյին ամենաանգութ միջոցներով: Կրակում եյին ամբոխի վրա, փայտերով ծեծի եյին յենթարկում համարյա ամբողջ գյուղական ազգաբնակություն:

Արտաքուսա գյուղացիությունը խաղաղվում էր, բայց ներքուստ թագնում եր յուր զայրույթը ընդգեմ կալվածատերերի, նմանատես և ցարի դեմ: Այն ժամանակից սկսած գյուղացիությունն ել ավելի սկսեց ականջ գնել քաղաքից և կած հեղափոխականների ձայնին:

4. Ֆաբրիկների ու գործարանների բանվորները գյուղացիներից պակաս չեյին պայքարում իրանց գրությունը բարելավելու համար: Ակղբներում ֆաբրիկա—գործարանային բանվորներն ել չեյին պարզ ըստոնում թե ում դեմ և ինչպես պետք ե կոիվ մղել: Իրանց թշնամին եյին համարում նրանք անհատ գործարանատիրոջը կամ ֆաբրիկանաներին, ճիշտ այնպես, ինչպես վոր գյուղացիությունն եր տեսնում իր թշնամուն կալվածատիրոջ մեջ: Բանվորները գործադրուների միջոցով պայքար եյին մղում աշխատավարձը բարձրացնելու և բանվորտկան

որը պակասեցնելու համար: Գործադուլը պահանջում է, վոր գործադուլարարները համախմբված լինեն: այլապես գործադուլը առնուլ կտրվի: Այդ դրդեց բանվորներին ի մի համախմբվել կազմակերպել փոխադարձ ոգնության դրամարկրգներ հիփանգության և գործադուների դեպքերի համար:

5. Յերբ գործադուների ժամանակ գործարանատերը վաստիկանություն և զինվորներ եր կանչում, վորոնք կալանավորում եյին գործադուլարարների պարագուխներին, իսկ մնացածներին բոնի կերպով աշխատելու եյին քշում, բանվորները հասկացան, վոր իրանց թշնամին վոչ միայն սեփականատերն ե, այլև կառավարությունն ե, վորն ոգնում և սեփականատիրոջը քամելու բանվորից նրա վերջին հույթերը:

Այն ժամանակ լավագույն բանվորները, ամենից ավելի զիտոկիցները, կազմակերպեցին միություն ցարական իշխանության ու բոլոր կապիտալիստների դեմ, կապիտալիստական ամբողջ հասարակակարգի դեմ կոիվ մղելու նպատակով:

6. Կառավարությունը կապիտալիստներին միայն զորքով չեր վոր ոգնում եր բանվորտկան խլատումները ձնշելու համար, կառավարությունը կապիտալիստներին տալիս եր նաև դրամական

ողնություն ու մի շարք արտօնություններ արտաքին առևտում: Ֆաբրիկանաները բաց ելին առում նորանոր զործարաններ և դրանով, անկախիքանց կամքից, բազ լայնում ելին բա վորեների բանակը: Բանվորները, զգալով աճող հզորությունը, կրկնապատկեցին իրանց գործը կապիտալիստների դեմ:

7. Անցեալ դարի վերջերին գործադուլների թիվը սաստիկ ավելացավ, և մեծ մասամբ գործադուլները վերջանում ելին բանվորների հաղթությամբ. Այդ հանգամանքը ել ավելի ուժ ներշնչեց բանվորական շարժմանը, համերաշխության զգացմունքը բանվորների մեջ աճում եր: Քաղաքային կյանքը նույնպես ունեցավ յուր ներգործությունը բանվորության վրա, ընդարձակելով նրա պահանջները ու ողելով նրան դեպի գիտությունը: Կազմակերպում ելին բանվորական կրուժուներ, ուր ինտելիգենցիայի լավագույն ներկայացուցիչները (Դատավոր աշխատանքի մարդիկ. ուսանողներ, ուսուցիչներ և այլն) սովորեցնում ելին բանվորներին փոչ միայն զրագիտությունը, այլև պատմությունն ու մարդկային կյանքին վերաբերող մյուս գիտությունները: Այն ժամանակ բանվորները հասկացան իրանց ուժը և իմացան, վոր իրանց միակ փրկությունը ամուր կազմակերպություն ունե-

նալու մեջն ե: Յեվ անա սկսեցին բանվորները կազմակերպվել մեծ քաղաքներում, կազմել միություններ, կրուժուներ, մինչև վոր անցյալ դարի վերջերին, սրանից 25 տարի առաջ, այդ միություններից ու կրուժուներից առաջ յեկավ բանվորական կուսակցությունը, վորը միացրեց ամբողջ Ռուսաստանի բանվորներին:

Բ. Յերկուգ գրույցի նյութո.

| Խլրտումներով բոնկված նահանգների թիվը: |
|---|
| 1861—1865 թ. (բարենորոգումներից հետո) 38 հաճ 76 % |
| 1881—1885 թ. (սովի ժամանակ) 22 44 % |
| 1896—1900 թ. 19 „ 38 % |
| 1904—1907 թ. (հեղափոխություն) 47 94 % |

(Փոխանցել դիակրամի):

Այդ դիակրամմն պատկերացնում ե (դարձնում ե դիտելի) անբավականության աճելը գլուղացիների մեջ: Խլրտումների ժամանակաշրջանները ապացուցում են շարժման տարերային լինելը և նրա ժամանակավոր բնույթը: Շարժումները, ինչպես յերնում ե, առաջացել ելին հուսահատությունից. 1861—1865 թվականներում՝ «բարենորոգումի» հիասթափումից, մասսայական հողազրկությունից և հողերի գնորդական խոշոր վճարումներից: Գրա համար ել այդ շարժումը համարյա համառուսական բնույթունի: Սակայն նա, ինչպես նաև հետագա խլր-

տումները, մեծ արագությամբ ճնշում ե, վորով-
հետեւ ամեն մի շրջան, (ՎՈԼՈԾՏԵ) գյուղ գործումք-
եր ինքնուրույնորեն: Զկար վորուե կազմա-
կերպություն, կենտրոն, վոր զեկավարեր շար-
ժումը: Տեղին կլիներ համեմատել դյաւդացիա-
կան շարժումը յոթը ձիպոտի հայտնի պատմու-
թյան հետ, վորոնք յերբ առանձին—առանձին
են, արագությամբ կոտրատվում են, բայց բնդ-
հանուր հյուսվածքի մեջ անընկճելի յեն:

Գյուղացիական շարժման բաժանվածու-
թյան պատճառները.

ա) Գյուղերի մեջ եղած մեծ հեռավորու-
թյունները, վարոնք խոչընդուռ են լինում բնդհա-
նուր գործողություններին:

բ) Տնական փակված անտեսությունների
քնույթը, վոր խանդարում ե կոլեկտիվ կազ-
մակերպության սաեղծելուն:

գ) Գյուղացիական սասսաների բնդհանուր
տգիտությունն ու անգիտակից լինելը:

Բանվարական զարգացութերը.

Գործադրույթին ըստման անումը.

1896—1905 թ.թ.

| | | | |
|----------------|---------------------|--------|-------------|
| 1895—1898 թ.թ. | գործադրու եյին արել | 44,179 | բան- |
| 1899—1901 թ.թ. | » | » | » 39,700 » |
| 1902—1904 թ.թ. | » | » | » 49,235 » |
| 1905 թ. | » | » | 2,863,173 * |

Այդ աղյուսակը պարզ կերպով ցույց է
տալիս բանվորական շարժման աճումը: Այստեղ
անհրաժեշտ է նկատել, վոր մինչև 1901 թիվը
գործադրուները մեծ մասամբ տնտեսական բր-
նույթ ունեցին. պայքարում եյին աշխատավարձը
ավելացնելու, բանվորական որը պակսեցնելու,
աշխատանքի պաշտպանությունը մտցնելու հա-
մար հայտն:

Բայց հետզհետեւ գործադրուները սկսում
են քաղաքական բնույթ ընդունել: Կապիտա-
լիստների և կառավարության մեջ յեղած կապը
զգացնել ե տալիս յուր ուժը քաղաքային բան-
վորներին: 1904—5թ.թ. գործադրուները մեծ-
մասամբ քաղաքական բնույթ են կրում:
1905 թվի գործադրուներից 62% աեղի յե-
ւնեցել քաղաքական հողի վրա:

Դրա հետ միաժամանակ անհրաժեշտ է
զրույցի մեջ նկատել մասսայական բանվորական
շարժումների պատճառները ևս. նրանց կենտրո-
նացումը խոշոր գործարաններում: Այդ բանը
լավ է պարզաբանում հետեւյալ աղյուսակը:

1905 թ.

| |
|--|
| Մինչև 20 բանվոր ունեցին 5,038 ձեռնարկներ ընդհանուր քանակով 59,500 բան. |
| 21—50 > > 4,385 > > 144,100 > |
| 51—100 > > 2,024 > > 144,200 " |
| 101—500 " " 2,047 " " 464,700 " |
| 501—1000 " " 413 " " 286,100 " |
| 1000-ից ավելի " " 283 " " 623,600 " |

Քաղաքական ինչ պիտի կարգա.

1. Պուզաշեշինայի մասին. «Դասակարգային կովի խրեստոմատիան» հրատ. «Պրիբոյ», 1923 թ. յերես 12—16: Բուսաց պատմության խրեստոմատիան: Մ., հրատարակ. «Կրամնայանու», 1923 թ. յերես 21—25:

2. Գյուղացիների ազատագրությունից հետո աեղի ունեցած գյուղացիական շարժումների մասին: Նույն զրքում, յեր. 45—62:

Բուսաստանի գյուղական տնտեսությունը: (Բ. Ա. Խ. Խ. Բ. Բ. Բ. Պ. Ը.) 1923 թ. յերես 9—30:

3. Բուրժուազիայի և ցարիզմի գաշնակցության մասին: Նույնի մեջ (խրիստոմատիա) յերես 67—70:

5. Բանվորական շարժման մասին: Նույն զրքում, յերես 77—83:

5. Ցարական ծառաների կատարած բռնությունները գյուղացիների վերաբերմամբ: Դա-

առկարգային կովի խրիստոմատիան, «Բողզի»-ի պատմվածքը, յերես 42—43:

դ) Զույցի մեկնաբանությունը.

Զրուցի հիմնական նպատակն ե ապացուցել, ա) Վոր գյուղացիական խրտումները հետեւանք են կարգական կառավարության կողմից յեղած տնտեսական կեղեցումների,

բ) Վոր գյուղացիական շարժումը, իրեն ինքնուրույն շարժում, յերբեք չի համարում յուր նպատակին (պատճառները հիշված են բնագրում),

գ) Վոր գյուղացիական լոկ այն ժամանակի հաղթանակում, յերր նա ընթանում է բանվոր դասակարգի հետ միասին:

Անցնելով զրույցի յերկրորդ հատվածին՝ բանվոր կան շարժման մասին, անհրաժեշտ ե կանգ տանել բանվոր դասակարգի դերի ու գյուղացիության համեմատությամբ նրա գանազնության վրա: Այդ մասում հիմնական յեղակացությունները հետևյալն են:

ա) Պրոլետարիատի կենտրոնացած լինիլը և զրա հետեանք նրա համախմբվածությունը:

բ) Բոլոր բանվորների կյանքի միատեսակ պայմաններ և շահագործության միակ աղբյուրը, վոր բուրժուազիան ե, ձարկագրում են բան-

վորներին կոփվ մղել կոպիտալիստական ամբողջ
հասարակակարգի դեմ:

դ) Քաղաքային կյանքը և քարերիկային աշ-
տազրությունները դարձնում են բանվորին առ-
վելի զարգացած ու գիտակից:

դ) Բանվորների, իրեն ուրույն դասակար-
դի, ինքնազիտակցությունը, վոր կոչված և վե-
րաշնելու աշխարհը:

Զրույցն անելիս՝ անհրաժեշտ ե սկսել հար-
ցեր տալով կարմիր բանակայիններին հախքն-
թաց զրույցի բովանդակությունից: Յեթե կար-
միր բանակայինները զրի յեն առել նախքնթաց
զրույցի հիմնական յեզրակացությունները, հար-
կավոր ե զրույցը սկսել այդ զրի առածները
ընթերցումով, առաջարկելով կարմիր բանակային-
ներին հերթով կետ առ կետ ավելի մանրամաս-
նորեն բացատրել բանավոր ամեն մի կետը:

Յեթե մի քանի պատասխաններ ուզգիդ շեն
ստացվել, իսկ դա պատահում ե, քաղկեկը ա-
ռանց մանրամասնությունների մեջ մտնելու,
պետք ե համառոտորեն բացատրել սխալի եյու-
թյունը և ապա անցնե իսկական զրույցի բո-
վանդակությանը:

«Յեվ ուրեմն» - իրեն որինակ քաղղեկը տ-
նում ե ընդհանուր յեզրակացություն: — հարց. —

«Կարսղ ե, արդյոք, յերկար տեել մի այդպիսի
կյանքը, վորպիսին ապրում եյին բանվորներն
ու գյուղացիները ցարի ժամանակ»: Ի՞նչ միջո-
ցով բանվորներն ու գյուղացիները կարող եյին
ազատվել այդ կեղեքումներից»...

Այդ տեսակ հարցին անխուսափելիորեն
պետք ե պատասխանելին:

«Ապստամբել, վայր գլորել ցարին, ջարդել
կալվածատերերին», և այն:

Այստեղ տեղին կինի նկատել, վոր քաղղեկը
միշտ առաջուց պետք ե լավ կշռադատե յուր
հարցերը ու տա պարզորոշ ձեակերպություն.
վորպեսզի պատասխանի իմաստը լինի մեկը և այն
նույն անխուսափելիորեն հարցից բղխող: Քաղղեկը
պետք ե նմանապես ուշագրություն դարձնե
ուրվող հարցերի ձեի վրա, վորպեսզի մի կողմից՝
չլինի կազյոննի «այսն», «վոչը» ու մյուս կողմից
չլինի անորոշություն և պատասխանի իմաստը
մթնեցնող անիմաստ խոսքերը:

Ստանալով աշխատավորի համար ապստամ-
բելու անհրաժեշտության պատասխանը, քաղ-
ղեկը պատմում ե հեռավոր անցյալում պատա-
հած գյուղացիական խլբառմների մասին: Այդ
անցյալը վերակենդանացնելու համար կարելի յե-
րազնեկին հանձնարարել հարցնելու ունկնդիր-
ներին. հիշում են նրանք արդյոք ցարի ժամանակ

իրանց գյուղում պատահած ապստամբությունները, կամ թե նրանք իմանում են, արդյոք, նրանց մասին ուրիշների պատճաճներով:

Յեթե վորեկ մեկը կպատմի այդ տեսակ անցքի մասին, նա կարող է ծառայել իրեն մեկի հեռավոր անցյալի հետ կապելու համար. որինակ. «Ընկեր Գասպարյանը պատմեց թե ինչպես նրանց գյուղում գյուղացիները ավերեցին կալվածատիրոջ տնտեսությունը. Այդպիսի յերեխույթներ պատահում եյին զեռևս սրանից 300 տարի առաջ. Լսել եք դուք ուրբեիցե Սաենկա Բաղինի մասին. Իմանում եք նրա յերգը. Դե, ուրեմն...» Յեվհամառուրեն պատմում է XVII—XVIII դարերի գյուղացիական խլրտումների մասին. Քաղղեկը, անհրաժեշտ է վոր ընդգծե, թե այդ շարժումը ուղղված եր միայն կալվածատերերի ու չինովնիկների դեմ, բայց վոչ ցարի դեմ. Ցարը տղետ մասսաների առաջ դեռևս այնպիսի վստահություն եր վայելում, վոր Պուգաչկը նույնիսկ քողարկում եր իրան իրը թե չինովնիկների ձեռքից փախած Պյոտր III ցարն է. Լավ կլիներ կարդալ Պուգաչկի մանիֆեստը (նա կա հիշալ գրականության մեջ), գոնե, սկիզբը և նրա խոստումները գյուղացիությանը:

Զբույցի այդ մասի պատճելը պետք է զբ-

բավե վոչ ավելի քան հինգից մինչեւ ութ րոպե:

Պարզելով առաջին գյուղացիական խոռվությունների բնույթը, կարելի յե ապա անցնել «Ազատազրության» շրջանի գյուղացիական շարժումներին:

Այստեղ չի խանգարում հիշեցնել անցյալ զրույցից ազատազրության պատկերը. Շատ ոգտակար կլինի, վորպեսզի դասի ժամանակ կախված լինելին հօղաբաժնության և գյուղացիական տուրքերի վերաբերյալ աղյուսակները:

Հարցեր.—ինչո՞ք ետարրերկում Պուգաչկը շարժում և ազատազրության» շրջանի գյուղացիական շարժումներից:

— Ի՞նչո՞ւ գյուղացիները միշտ ել անաջողություն եյին կրում ազատամրությունների ժամանակ:

Կարեսը չե, յեթե նույնիսկ պատասխան չստացվի, բավական է ստիպել ունկնդրին ժտածելու այդ հարցերի մասին և քաղղեկը կարող է անձամբ բացատրել. Այդտեղից գյուղացիական շարժման մասին հիմնական յեզրակացությունները անելով (տես վերը զբույցի նպատակների մասին), քաղցեկը խոսակցությունը փոխում է բանվորական շարժման վրա:

Կարելի յե սկսել վերջին յեզրակացությու-

նից, վոր գյուղացիությունը հաղթող չի դուրս յեկել յերբ հանդես ե յեկել մեն—մենակ:

—Իսկ քանվորները հաղթում եյին:

Մեկ—երկու կարմիր բանակայիններ կը կարողանան պատասխանել այդ հարցին դրահանապես: Այդպիսի համեմատությունը ավելի յեցատան դարձնում պատկերը:

—Ինչու: —Պատասխանը կառկածելի ե: —Ով ե յեզել ֆաբրիկում: Վորքան բանվորներ կան այնտեղ: Պատասխաններ—յեզրակացություններ: արտադրության ընդհոնուր լինելը մոտեցնում ե միմիանց: Հենց այդտեղ ել վերոյիշյալ թվերը ներկայացնելով, քաղցելը ցույց ե տա: Իս թե ինչպես բանվորները աստիճանաբար կենորոնանում են խոշոր արտադրության մեջ: Յեզրակացությունը: միաբանության մեջն ե ուժը:

Ուշադրությունը դրաված ե արդեն հարցի վրա: Փաստերից հանգած ե տրամաբանական յեզրակացությունը: Այժմ արդեն կարելի յետվելի մանրամասնորեն պատմել բանվորական շարժման գարգացման մասին, և դա կամրատընդդի նախընթաց յեզրակացությունները:

Վերջապես, կարելի յեցնել զրույցի վերջին մասին ել բանվորական կրուժոկների գարգացմանն ու կուսակցության հիմնվելուն: Վոր-

պիսողի ավելի վառ կերպով նկարագրենք ու ուարզ ներկայացնենք, հարկավոր ե ցույց տալ բանվորական շարժման սկզբներում մասնակցող պարագալուխների նկարները (Ստյոպա Խալտուրին, Պյոտր Ալեքսեյեվ) և համառոտակի տաքնրանց կենսագրությունը:

Դրանով զրույցի բովանդակություն առլի վերջանում ե: Այնուհետև պետք ե ստուգել, թե վորքան այդ անցածը նրանք յուրացրել են, ձեռակերպել յեզրակացությունները և ապա զբել տետրակում:

Ինքնուրույն ընթերցանության համար քաղցեկը կարող ե հանձնարարել կարմիր բանակայիններին կարգալու հետեւյալ պատմվածքները յեթե նրանք կտանվեն հայերեն թարգմանությամբ «Բոզդի»: «զյուղացիները և ազատության հայտարարումը» (նոյն տեղում յերես 32-33, «Կամարինսկայան» (նույն տեղում յերես 96), «Արթնացան» (յեր. 113—116):

Յ—ՐԴ ԶՐՈՒՅՑ:

ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ, (ԲՈՅԼՇԵՎԻԿՆԵՐԸ)ՎՈՐՈՄԵՍ ԵԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՆԵԿԱՎԱՐ:

Ա. Զըուցի բավանդակուրյունը.

Քսաներորդ դարի սկզբներում բանվորական շար-

ուռմբ սաստիկ ուժեկացավ: Տարծման զեկավառզը մ. Կ. Կ. -ն եր (այն ժամանակ Յա Կոչկում եր Ա. Ս. Դ. Ռ. և. Բոլցեվիկիների : Թեպրեսսիվ միջոցների շարեւմ ցարական կառավարությունը ուզում եր մի հանի արտօնություններ տալով բանվորների մի մասին, պառակտել բանվորական շարժումը: Սայդիխի նպատակ եր գրել իրան Գաղոնյան միուրյունը, Հունվարի 9-ը վերջ տվագ գուտիկանական միուրյանը և վերջնականապես մուցեց բանվորների հավաք գեղի բանվորական խորհի խողադ լուծման հնարավորությունը: Բանվոր զառակարգը փոք գրեց ցարիզմի զեմքացարձակ կոփ մղելու ուղին: Այդ հեղափոխական տամագրությունը համակեց նույնպես գյուղացիությանը: Ամբողջ լեռնիքը բանկվել եր հեղափոխական խրտումներով: Տարծումը զեկավառող կուտակցության առջեվ կանգնեց ամբողջ հեղափոխական շարժումը միացնելու խնդիրը: Բոլցեվիկիները գյուղացիության հետ միուրյուն կազմելու կողմն եին, մանեւրիկները՝ հեղափոխական բուրժուազիայի հետ: Սայդիխով բոլցեվիկիները գեռյեց առաջին հեղափոխության ժամանակից հանդիսանում եին բանվորների լեզ Հեղափոխական գյուղացիների կուտակցությունը:

1. 900 թվականների սկզբներին հեղափոխական շարժումը բանվորների մեջ քանի գնում այնքան ավելի յեր ամրապնդվում: Կառավարությունը ոգուած չեր ստանում բանստարկելով շարժման զեկավարներին, բանվորական կուսակցության պարագայիններին:

190 է թվին սկսված մուս - Յասլոնական

պատերազմը, Նրա անաջողությունները, անշափ զեղծումները, յերկրի քայլայումը պատերազմի պատճառով, որըստորե ել ավելի ելին ծավալում հեղափոխական ալիքները յերկրում: Գործադուլային շարժումը սաստկանում եր: 1901—1904 թթ. շատ քաղաքներում բանվորները տոնում են մայիսի 1-ը, բոլոր աշխարհի բանվորների համերաշխության տոնը:

Հեղափոխական շարժման զիթավոր զեկավարը՝ Ռուսաստանի Սոցիալ-Դեմոկրատական Բանվորական Բոլշևիկների կուսակցությունները (այժմ նա կոչվում ե Ռուսաստանի կոմունիստական կուսակցություն):

Զնայելով այն խիստ միջոցներին, վորը ձեռք ելին առնում ցարի ժանդարմները բանվորական կուսակցության դեմ, չնայելով, վորնա ստիպված եր աշխատել գաղտնի, այնուամենայնիվ նրա ազգեցությունը մասսաներում ավելի ու ավելի յեր աճում: Բոլոր դիտակից բանվորները համախմբվել ելին իրանց կուսակցության շարժը:

2. Յարական կառավարությունը զգաց հեղափոխական փոթորկի մոտենալը, վորի զեմանզոր ելին նրա բոլոր բեղորեսսիվ միջոցները: Աւստի նա վորոշեց կիլառել բանվորների զե-

ռաբերժամբ այլ միջոցներ, վորոնք պետք է պառակտելին բանվորական շարժումը ու թուացնելին նրա ուժերը:

Թեև բանվորները լերկրի ամենահեղափախական տարրերն եյին, այնուամենայնիվ վոչ բոլոր բանվորներն եյին համակված դասակարգային գիտակցությամբ:

Մինչև 1905 թիվը բանվորների միայն ամենազարգացած մասն եր մտնում կուսակցության մեջ, մնացածը համակրում եր կուսակցությանը նրա համար, վոր կուսակցությունը նրա համար, վոր կուսակցությունը նրա համար, ոգնում եր գործադուլային պայքարին, զոհարերում եր յուր անդամների կյանքը բանվոր դասակարգի բարորության համար: Հաշվի առնելով դրության լվացվունը, ժանդարմները մրտածեցին ցարի կողմը գրավել բանվորների մի մասը: Բանվորների մեջ սկսեց ազիտացիա մղել ժանդարմների կողմից ուղարկված Գեվորգ Գապոն քահանան: Այդ սկ տարիները, յերբ արգելվում եյին ամեն տեսակի ժողովներն ու դասախոսությունները ժողովրդի համար, կառավարությունը Գապոնին թույլատեց բանվորների համար ակումբներ, կազմակերպել անստեսական միություններ և գումարել բանվորական ժողովներ: Յուր բոլոր աշխատանքներ

բում Գապոնը այն միաքն եր անցկացնում, վորցարը բանվորների թշնամին չե, վոր բանվորները վատ են ապրում շնորհիվ այն բանի, վորցարը չգիտե նրանց կարիքները: Ուսաի հարկավոր չե կոիվ մղել ցարի ու նրա կառավարության գեմ, այլ խնդրել նրա ոգնությունը: Նատքանվորներ լենինգրազում մանավանդ ծերերը, ընկան այդ թակարդի մեջ: Սկզբում ժանդարմները իսկապես վոր ոգնում եյին բանվորներին իրանց ուահանջներում առանձին ֆաբրիկանտների գեմ: զա բարձրացրեց Գապոնյան միությունների հեղինակությունը մնացած բանվորների շրջանում: բայց շուտով կապիտալիստների ճնշման տակ ժանդարմները հարկադրված եյին հրաժարվել բանվորներին ոգնելուց: Կապիտալիստները սկսեցին ել ավելի ուժեղ կերպով հարձակել բանվորների վրա, խլեցին առաջներում արած զիջումները: Այն ժամանակ Գապոնը, վորպեսզի չկորցնի մասսաների վատահությունը, վորպեսզի առաջարկեց բանվորներին խաչ ու խաչվառվ առայժմ սկսեց ապահով գործությունը:

3. Իզուր զիտակից բանվորներն ու կուսակցությունների ներկայացուցիչները նա-

Խաղգուշացնում եյին բանվորներին չանել այդ քայլը, իզուր ապացուցում եյին, վոր ցարը ֆարբիկանաների ու բոլոր կապիտալիստների կողմն ե։ Մասսան ամուր եր կպել այդ մաքին։ Դա նրա վերջին հույսն եր բանվորական հարցի խաղաղ լուծման համար։ Գաղոնյան ժողովներից մեկում մի բանվորի տված հարցին. «իսկ ի՞նչ կանենք յեթե ցարը ընդունի բանվորական պատգամավորությունը» բոլոր բանվորները միաձայն պատասխանեցին. «Այս ժամանակ մենք ցար չունենք»։

Նշանակված կիրակի որվանից մի բանի որ առաջ կայացան բանվորական մեծ ժողովներ, ուր խմբագրվում եյին թագավորին ուղղված պետիցիան (խնդիրը). Բոլոր ժողովները, վորոնց ներկու եյին լինում տասնյակ հազարավոր բանվորներ, տեղի եյին ունենում հրապարակորեն, և վաստիկանությունը նրանց չեր խանգարում։ Այդ հանգամանքը վատահություն եր ներշնչում, վոր Գապոնի տատձները ճշմարիտ եյին։

1905 թվի Հունվարի 9-ին (այդ այն որն եր, վոր նշանակված եր մանիքեստացիան) տասնյակ հազարավոր բանվորներն իրանց կանաց ու յերեխաների հետ միասին դուրս յեւան փողոց և ուղղվեցին գետի Զմերային պալատը:

Այդ բազմահազար թափորին զլուխ եր անցել փալոնը խաչվառներով և ցարի պատկերներով։ Ճանապարհին թափորին հանդիպում եյին զինվորական ուժեղացրած պահակներ, բայց վոչ վոք այդ բանին առանձին նշանակություն չեր տալիս։ Սակայն պալատական հրապարակի մոտ նըանց զիմավորեց զինվորների մի ուժեղ ջոկատ կատարելապես սպառասինված, վորը արգելեց թափորին շարունակել յօւր ճանապարհը։ Զորամասի հրամանատար սպան առաջարկեց ցրվել, վորովհետև նրան հրամայված եր վոչոքի չթույլատրել հրապարակ գնալու։ Բանվորները չիյին հավատում, վոր ցարը չի կամենա ընդունել բույրովին խաղաղ, հավատարիմ հպատակության պատգամավորությունը և չեյին համաձայնվում ցրվել։ Լովեց սպայի նախնական հրամանը. զինվորները հրացանները նշանի բռնեցին։ Տիրեց գերեզմանական լություն, բա ց վոչ վոք չշարժվեց տեղից։ Հանկարծ տիրող լուսության մեջ սպան հրաման արձակեց՝ «կրակ»... ու վորոտաց համազարկը անզեն ամբոխի վրա։ Բանվորները դես ու դեն շաղ յեկան, գետնատարած պառկեցին։ Յերկրորդ համազարկը ուղղված եր գետնի վրա պառկածներին ու փախչողների թիկունքին։

Այդ որը շատ բանվորներ սպանվեցին ու

վիրավորվեցին, փողոցներում թափթփած ելին մանկական դիակներ, Հիվանդանոցները լցված ելին վիրավորներով ու դիակներով, Հունվարի 9-ի գոհերի թիվը հաշվում են մի քանի հազար հոգի:

Եյդ որը վերջնականապես թաղվեց դեպի ցարն ունեցած հավատը: Այդ որվանից սկիզբն ե առնում բանվոր գասակարգի ընդհանուր կյանքի և մահվան պայքարը ցարի ու նրա կառավարության դեմ: Ի պատասխան Լենինգրադի բանվորների գնդականարության՝ ամբողջ Ռուսաստանը բռնկվեց բողոքի գործադուլներով, Գործադուլ արեցին 122 քաղաքների, տասնյակ յերկաթուղիների և Դոնի ավազանի հանքերի բանվորները: Խոռվությունները շարունակվեցին մոտ յերկու ամիս: Գործադուլներին մասնակցում ելին մոտ մի միլիոն բանվորներ: Այժմ այլև չկար վոչ մի բանվոր, վորը պահպանած լիներ յուր հավատը բանվորական հարցը խաղաղ կերպով լուծելու մասին:

Կուսակցությունը բանվոր գասակարգի համար դարձավ ամենաթանգագին սեփականությունը: Նա այժմ դարձավ Ռուսաստանի ամբողջ պրոլետարիատի իսկական առաջնորդը:

4. Գյուղերում նույնպես ավելանում ելին հուզումները: Գյուղացիների վիճակը վատթարա-

ցել եր: Պատերազմի պատճառով հարկերը ծանրացել ելին: Գյուղը սկսեց քաղաք արտահանել «ազատ ձեռքերը» յուրաքանչյուր տարի յուր ազգաբնակության մի յերրորդական մասը: Քաղաքում նրանք ավելացնում ելին անդուծների բանակը, բայց դրա հետ միասին յեկվոր գյուղացիությունը վարակվում եր բանվորների լնդուածնուր հեղափոխական վոգով ու տանում, տուրածում եր գյուղերում:

Անբավականությունը համակել եր նույնական բուրժուազիայի մի մասին: Նրանք տեսնում ելին կառավարության թուլությունը և կուղենացին ունենալ ուժեղ կառավարություն, վորի ժամանակը բանվորական խոռվություններից վախճանու փոչինչ չկար:

Այդպիսով, մենք տեսնում ենք, վոր մասսայական հեղափոխական արածադրությունն ու առաջական դաշտականությունը բռնկել ելին ամբողջ յերանբավականությունը բռնկել ելին ամբողջ յերանբավական դաշտակարգի կուսակցության կիրը: Բանվոր գասակարգի կուսակցության առաջ հարց բարձրացավ, վոր անհրաժեշտ և միացնել բոլոր հեղափոխական ուժերը ցարիզմի դաշտական դաշտական ուժերը:

Մինչույն հարցի առիթով ահազին տարածայնություններ ծագեցին կուսակցության ներսում: Դեռևս գրանից առաջ սոցիալ—դեմոկրա-

Ների կուսակցությունը մի ամբողջ շարք կազմակերպչական հարցերում, վորից կախված երկուսակցության ամբողջությունն ու բանվորական բնությը, Արդ համագումարում բաժանվեց յերկու մասի: Մի մասը՝ ըոյլեկիկները (նըրանց կողմն եր համագումարի բանվորական պատվիրակների մեծամասնությունը), առում ելին, վոր կուսակցության մեջ պետք է լինի ամուր դիսցիլինա (կարգապահություն), վոր կուսակցության անդամ կարող ե լինել նումիայն, ով ակտիվ մասնակցություն ունի կուսակցական աշխատանքում, վոր կուսակցությունը չպետք ե կուլիցիա (համաձայնություն) կազմի բուրժուազիայի հետ, վոր հարկավոր ե մերձնալ գյուղացիությանը:

Մենչեվիկները (նրանք վաքրամասնություն ելին կազմում) կողմնակից ելին հեղափոխական բուրժուազիայի հետ միություն կազմելուն, նրանք յերկուուր ելին կրում գյուղի տղիտությունից և անգիտակցությունից:

Այդ յերկու ֆրակցիաներն ել (խմբակները) պայքարի հետագա զարգացման ընթացքում վարում ելին յուրաքանչյուրն յուր գիծը ինքնաւրսույնորեն: Բոյլեկիկները շարունակում ելին մերձեցումը գյուղացիության հետ: Բոյլեկիկների կուսակցությունը յուր ծրագրում պահան-

շում եր գյուղացիության համար փոխել բոլոր նողերի գնման արժեքների ու հարկերի վճարումները, վերադարձնել գյուղացիներին նրանցից սուաջուց ստացված գումարները, պետականացնել կալվածատիրական, ցարական և յեկեղեցագատկան հողերը ու տալ գյուղական համայնքներին իրանց մեջ բաժանելու համար:

III բգ համագումարում ըոյլեկիկների կուսակցությունը ընդունել եր մի բանաձև, վոր անհրաժեշտ և ամենասերտ միություն կազմել պշխատավոր գյուղացիության հետ, վոր անհրաժեշտ և կրթական աշխատանք տանել գյուղում, կազմակերպել գյուղացիական կոմիտեներ ու համաձայնեցնել գյուղական պրոլետարիատի շարժումները քաղաքացինի հետ:

Այդպես ուրեմն, մենք տեսնում ենք, վոր ըոյլեկիկների կուսակցությունը յուր գյուղացիների կուսակցությունը յուր գյուղացին սկզբի որերից արդեն դարցավ բանվոր դասակարգի և հեղափոխական գյուղացության կուսակցությունը:

Ինչ պիտի կարգա բաղդեկը.

1. Հունվարի 9-ի մասին: Ռուսական պատմության խրեստովատիան, 117—120 կ մ Դրացիլի 1905 թ. յեր. 76, 77 78: Սվերչկով Հեթե վեց կուսակցության արշալուսին, յեր. 65—67:

Վերջին պատմվածքը կարելի յէ տալ կար-
սիր բանակայիններին ինքնորույն կերպով կար-
դալու համար, յեթե կլինի հայերեն թարգմա-
նությամբ:

2. Գյուղացիական խոռվորյունների մա-
սին:

Ոռոսական պատմության խրեստումատիան՝
յեր. 120—122.

3. Բոյլենվիկների կրտսակցորյան մասին։
Զինովյեվը կուսակցության պատմությունից,

Բ. ԶՐՈՒՅՑԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄԸ

3-րդ զրույցի նպատակն ե ցույց տալ-

ա) Բանվորական շարժման աճումը և նրա
սպասնալի չափերը ցարիզմի համար։

բ) Բանվորները ինչպես յեկան այն հա-
յոգունքին, թե միայն կադմակերպված պայ-
քարի ոգնությամբ բանվոր դասակարգը կարող
է ձեռք բերել յուր ազատությունը և իրա-
վունքը։

գ) Բանվորական շարժման ազդեցությունը
դրույի վրա։

դ) Վոր բոյլեվիկներն եյին շարժման կադ-
մակերպողը և դեկավարողը։

յե) Վոր հեղափոխության հաղթանակի գրա-
վականը բանվորների և գյուղացիների սերտ
միության մեջն է։

զ) Վոր այլպիսի միության եյին ձգտում
ոյլշեվիկները սկզբից ի վեր։

Զրույցը կարելի յէ կառուցել նախընթաց
լրույցների որինակով։ Նախ կապ հաստատել
առուգելով նախընթաց զրույցի հետ, ապա հար-
կավոր ե մի քանի այնպիսի հարցեր տալ, վո-
րոնք մոտեցնում են երկու զրույցի բովանդա-
կությունը։ Ինչպես միշտ, հարցերը պետք ե
բղինեն մերձավորից, իսկականից, այնպես, վոր
հետագայում ունկնդիրներին կարելի լինի
տանել դեպի անցյալը։

Հեղափոխական շարժման ուժեղացման պատ-
ճառները բացատրելով Ոռոս—Յաղոնական
պատերազմով, հարկավոր ե նախ խոսք բանալ
ուստ ժամանակների պատերազմի մասին։

Այն հարցին՝ թե ինչպես ե անդրադահի
պատերազմը ազգաբնակության կյանքի վրա,
կարելի յէ ստանալ պատասխաններ։ մարդկացին
դոհերը, կյանքի թանգացում, հարկերի ուժեղա-
ցումը։ Յույց տալով քարտեզի վրա Յաղոնիա-
յի հետափորությունը Ոռոսաստանից, կարելի յէ
դալ այն յեղբակացության, վոր պատերազմը
ու նրա իմաստը խորթ եյին ժողովրդի սրտին։

Անցնելով Հունվարի 9-ի դեպքերին, ոգտա-
կար ե ծանրանալ հոգեորականության դերի
վրա ցարական ոեժիմի ժամանակ։

Հունվարի 9-ի դեպքերը պետք է լուսաբանեն, ըստ կարելվույն, ավելի վառ գույներով Դրան կարելի յե համեմել կարդարով հատվածներ Սփերչկովի գրքից (տես զբակ, ցուցակը): Դա ավելի լավ կլինի, քան յեթե քաղղեկը պատմել այդ դեպքերի մասին յուր սեփական խոսքերով Քաղղեկը պետք է սահմանափակվի Գապոնյան շարժման հաջողության պատճառների նախնական բացատրություններով և մի քանի խոսքերով պատմե Հունվարի 9-ի դեպքերի փաստացի կողմը, իսկ հետո ել առաջ բերե ականատեսի վեայությունները:

—Ահա թե ինչ է պատմում ընկ. Սփերչկովը, վոր անձամբ ապրել է այդ սրվա ամբողջ սարսափը:

Ոգտակար է նույնպես բերել քաղվածքներ «պետիցիայից», ընդգծել նրանց հավատարիմ հպատակության վոգին և, միաժամանակ շեշտել, վոր նա պարունակում եր յուր մեջ սպառնալիքի հաշյուններ: Այդ քաղվածքները կան Տրոցկու հիշյալ գրքում:

Յեթե հարավոր ե, պատմածները պետք ե տպագորել Հունվարի 9-ի դեպքերի վերաբերյալ նկարներով: Նրանք կան Տրոցկու 1905 թվականը գրքում: Կարմիր բանակայինների ատելությունը դեպի ցարական անցյալը ամրապնդելու նպա-

տակով շատ ցանկալի քաղդատ նշանակել: Գաղոնի համար յեղած քաղդատը տպած ե-
“ՊՈԼԻΤՎԵՍՏՆԻԿ»՝ում:

Հունվարի 9-ի դեպքերին անհրաժեշտ ե նվիրել ժամանակի կեսից ավելին: Ապա պետք է գնահատություն տալ բոլշևիստական կուսակցությանը ու նրա դերին:

—Ինչպես ելին վերաբերվում բոլշևիկները Գապոնյան շարժմանը... Ինչպես պիտի վերաբերվեր բանվորական մասսան դեպի կուսակցությունը Հունվարի 9-ից հետո: Բանվորների վոր մասն և անդամագրվում կուսակցությանը: Ինչու յե դա ամենալավ և ամենագիտակից մասը կազմում: (Այսուղեղին ե ավելի մանրամասնորեն ծանրանալ այն ըեպրեսիաների վրա, վորոնց յենթարկվում ելին կուսակցական ընկերները): Այսուհետեւ հարկավոր է անցնել բոլշևիկների ու մինթարկների տարրերությունը բացարելուն: Այսուղեղ նույնական պետք է յելինի ներկայից:

—Ինչպես ելին նրանք և մյուսները վերաբերվում Հոկտեմբերյան հեղափոխությանը: Ուշ են այժմ մենշեվիկները: Ի՞նչ են անում այժմ բոլշևիկները: —Այդ բոլոր հարցերը կարող են ավելի կոնկրետացնել բոլշևիկների ու մինթարկների մեջ տիրող սկզբնական տարա-

ձայնությունները, նմանապես յերկու կռւսակշցությունների վերաբերմունքը դեպի գյուղացիությունը:

Յեթև ձեռքի տակ կա Ռ. Կ. Հ. Համագումարների գիրը ընդունած բանաձեռքի և վորոշումների հետ միասին, մի քանի փոքրիկ քաղաքածքներ բերել Արդ համագումարի բանաձեռքից դեպի գյուղացիությունը ունեցած առերերմունքի մասին:

Զրույցը պետք է վերջացնել մինույն կազմով, ինչպես վոր նախընթացներն ելին:

4-ՐԴ ԶՐՈՒՅՑ:

1905 ԹՎԱԿԱՆԸ

Զրույցի Բովանդակությունը.

Ե պատասխան հեղափոխական շարժման, ցարական կառավարությունը պատասխանեց շեպքեասիանեան ուժեղացնելով: Սակայն սրանք անզու ելին:

Յոնքից ընդհանուր գործադուլք: Հոկտեմբերյան գործադուլք հարկագրեց ցարին զիջումներ անել, միաժամանակ նա պարաւառում եր հականեղափոխական շարժում: Հեղափոխությունը ստեղծեց բանգրական պատգամավորների խորհուրդը: Նա հեղափոխության դեկանան եր ու պահպանում եր Լենինգրադը շարդարարներից: Հեղափոխական շարժումը բանկեց նույնապես ցարական բանակի մի մասին: Հուզումներ երանափառ բերդապահ գորքի մեջ:

Պոլիետրիատի նոր հաղբանակը: Գյուղացիական շարժումը սկսում է կազմակերպված բնույթը ընդունել: Մեզծովիան նավասումում սկսված ապստամբությունը վեցացնում է հեղափոխության գարգացումը: Յարական կառավարությունը ձգում է նետել հեղափոխական շարժումը: Զերբարկվում է բանգրական պատգամավորների խորհուրդը: Աւելի զարգացնում է ներկայական գործությունները:

Մոռկվայի բանգրաների գինված ապստամբությունը վեց և զետում հեղափոխությանը: Խնհավառությունը կոչվ մեջ նրանք հաղրվում են: Յարական կառավարությունը վեճ է լուծում յուր առաջին պարտության համար:

1. Յարական կառավարությունը չբավարացավ հունվարի 9-ի բանվորների մասսայական գնդականարությամբ:

Սկսվեցին մասսայական կալանավորություններն ու աքսորումները հեղափոխական բանգրաների մեջ: Մուսասատանի հարավային և արևմտյան մասերն ուղարկվեցին պատժիչ զորամասերը, վորոնք հրով ու սրով անցան այդ յերկու յերկրամասերով:

Այդ հանգամանքը յուղ ածեց հեղափոխական հրդեհի վրա: 1905 թվի սեպտեմբերին վերը սկսվեցին մասսայական զործադուլները, վորոնք չտեսնված չափերի հասան:

2. Հոկտեմբերի 7-ին, մի աննշան դեպքի

համար, գործադուլ արին Մոսկայի յերկաթուռային հանգույցի բանվորները: Հոկտեմբերի կիսում գործադուլը դարձավ Համառուսական յերկաթուղային գործադուլ: Խուսաստանում ամբողջ կյանքը կանգ առավ: Կենտրոնները կտրված եյին ծայրաժամակերից: Դադարեց մթերքների ներմուծումը մայրաքաղաքները: Յերկաթուղայինների որինակին հետեւցին Լենինգրադի, Մոսկայի բոլոր գործարանների բանվորները:

Գործադուլը գուտ քաղաքական բնույթ եց կրում: Գործադուլի ժամանակ բանվորները սկսեցին զինվել, փողոցներում պատրաստվում են բարբեկաղներ (պատվարներ):

3. Յարական կառավարությունը զլուխը կորցրեց: Հոկտեմբերի 17-ին ցարը մանիֆեստ (հրովարտակ) հրատարակեց, վորով նա խոստանում եր խոսքի և ժողովների ազատություն ու պետական դռւմա:

Յարը մի ձեռքով ստորագրում եր մանիֆեստը, մյուսով՝ զինում եր բոլոր մութուժերը բանվորների դեմ կոփի մղելու համար: Հոկտեմբերի 17-ին աեզի եյին ունենում մասսայական ցույցեր ցարի մանիֆեստի առիթով, իսկ 18-ին երեկոյան սև հարյուրական վոր բաղկացած եր լարազնիկներից, շուկաներում առետուր ա-

նողներից և հագուստները փոխած քաղաքապահներից, (գարադափոյ) փողոց գուրս յեկավ ցարի պատկերներով, ճօշ պարագաներու հանդպող բանվորներին ու ուսանողներին: Մանիֆեստի նշանակությունը շատ մեծ եր: Նա ցույց տվավ թե վորչափարսափելի յեն ցարիզմի համար պրոլետարիատի միացյալ ուժերը:

4. Հեղափոխությունը բռնկվեց: Դեռևս մանիֆեստը հրատարակելուց առաջ Լենինգրադի բանվորները կազմակերպել եյին բանվորական պատգամագործների Խորհուրդ հեղափոխությունը զեկավարելու հակառակով: Հոկտեմբերի 10-ին կայացան Խորհրդի բնարությունները բոլոր գործարաններում և բանվորական միություններում: Խորհուրդը իրան նպատակ եր զրել միացընել բոլոր հեղափոխական ուժերը ցարիզմի գեմ սկսած կոփի վերջնական հաղթանակի համար: Բանվորական պատգամագորների Խորհուրդը զեկավարում եր Հոկտեմբերյան դործադուլը և միայն նրա վերջամբ հոկտեմբերի 21-ին, ցերեկվա ժամը 12-ին բոլոր բանվորները, ինչպես մի մարդ, վերսկսեցին աշխատանքները: Խորհուրդը ազատ գոյություն ուներ: Յարական իշխանությունը շփոթվել եր, և փասորեն այդ անմուտնալի որերին իսկական իշխանությունը

բանվորական պատգամավորների Խորհուրդն եր:
Բայց մութ ուժերը քնած չելին։ Յերբ առա-
ջին շփոթությունը անցավ, ցարական ոեժինը
ամբողջ աշխատավոր ժողովրդի միասնական
ձակատը թուլացնելու նպատակսվ, վճռեց դոր-
ծազրել յուր հին լավ փորձված միջոցները. մի
շարք նահանգներում սև հարյուրակը վոստիկա-
նության ոգնությունը, ոգտվելով զյուղա-
ցիական մասսաների տղիտությունից, կազմա-
կերպում եր շարդեր, զլխավորապես հրեյական։
Այլազգիներին հալածելու միջոցով ցարական
կառավարությունը հույս ուներ խառնակություն-
ները ուղղել դեպի ուրիշ կողմ։

Բանվորական պատգամավորների Խորհուրդը
պայքարում եր շարդարարական շարժման դեմ
Լենինգրադում։

Նա կազմակերպեց բանվորներից ջոկատներ,
պատրուներ ու հետախույզներ, վորոնք շրջա-
գալում ելին քաղաքում։ Յեվ փորքան ել վոստի-
կանությունը աշխատում եր, այնուամենայնիվ
Լենինգրադում նախորոշված շարդը զլուխ չե-
կավ։

5. Ըստհանուր հեղափոխական շարժումը,
զոր բռնկել եր ամբողջ յերկիրը, անցավ բանա-
կի մասերի՝ ցարական ոեժիմի այդ զլխավոր

հենարանի մեջ ևս։ Միայն ցարական զորանոցի
մեկուսացած ոեժիմը և այն տղիտությունը, վո-
րի մեջ պահում ելին բանակը, արդեկը ելին լի-
նում հեղափոխական շարժման տարածվելուն
ամբողջ բանակում։ Հոկտեմբերի 26 ին բարնկ-
վեց ապստամբությունը կրօնշտատի բերդապահ
զորքերի մեջ, զլխավորապես նախատիների մեջ։
Ապստամբությունը շատ շուտով ճնշվեց, Լենին-
գրադից յեկած զինվորական ուժերով։ Զինվոր-
ներին ու նախատիներին սպասում եր մահվան
ողատիժ կախաղանի միջոցով։

Այդ քայլով ցարական ոեժիմը դիմեց
հարձակման։ Նահանգներից շատերում, մասնա-
վորապես Սրեմտյան յերկրում, հայտարարվեց
պատերազմական գրություն, վորը սպասում
եր մասսայական մահապատճներ ուազմա
դաշտային դատարանների վճիռների հիման
վրա։

Նոյեմբերի 1-ին Խորհուրդը դաշտյալ զոր-
ծագուլ հայտարարեց պահանջելով փոխել կրօն-
շտատայան նախատիների մահվան դատավճառ-
ները և վերացնել պատերազմական գրու-
թյունը։ Գործադուլը անցավ մեծ վոգեորու-
թյամբ։ Նոյեմբերի 5-ին կառավարությունը
հարկադրված եր զիջել։

Այդ նոր հաղթանակը տարածեց Խորհրդի

հոչակը ամբողջ Ծուսաստանում։ Ծուսաստանի զանազան ծայրերից, սկսեցին գալ նրա մոռ պատվիրակներ—գյուղացիներ ու բանվորներ խորհուրդ հարցնելու, թե ինչպես վարվել էրոնշտացիներին պաշտպանելոց հետո, բանակն եղ սկսեց պատզամավորներ ուղարկել Խորհուրդը։

Խորհուրդը յուր բազմաթիվ վորոշումներով ու պատասխաններով նպաստեց շարժման զարգանալուն զավառներում և ընական ե, վորդարձավ համառուսական հեղափոխության կենտրոնը։

6. 1905 թվին ընդհանուր հեղափոխական շարժման ազգեցության տակ արթնացավ գյուղացիությունը նոյնպես։ Գյուղացիական շարժումը համարյա բռնկեց ամբողջ Ծուսաստանը (94% -ը բոլոր նահանգներից), բայց վերոհիշյալ պատճառներով ազստամբված գյուղացիների գործողությունները իրար հետ համաձանհցրած շեյին Միայն արեւտյան յերկրում ու Կովկասում գյուղացիական շարժումը փոքրիշատե կազմակերպված բնույթի եր կրում։ Լիտվայում գյուղացիական համագումարը վորոշեց փոխել բոլոր շրջանային գրադիրներին ու տանուտերներին, քշել բոլոր հակահեղափոխական ուսուցիչներին և մացնել ընտրովի գործադիր կոմիտեներ։ Գյուղացիությունը հրաժարվում էր վճարելցարին

հարկերը և թալանի յեր յենթարկում ատելի կալվածատերերի ազարակները։

1905 թվականի վերջերում գյուղացիությունը սկսեց միություններ կազմակերպելու նոյեմբերին Մոսկվայում բացվեց 27 նահանգների, այսինքն Յեվրոպական Ծուսաստանի կես մասի գյուղացիական միությունների համագումարը։ Համագումարը վորոշում կայացրեց տալ հողը աշխատավոր ժողովրդին։ Այն դեպքում յեթե կառավարությունը հրաժարվեր ի կատար ածել այդ ժողովրդական պահանջը, համագումարը վորոշեց կազմակերպել գյուղատնտեսական գործադուլ, նրան հաջողությամբ կազմակերպելու համար կապ հաստատել բանվոր դասակարգի հետ։

Կառավարությունը համոզվեց, վորշարժումն ընդունվել ե արդեն ազգաբնակության բոլոր խավերը, նույնիսկ տգեստ գյուղացիությունը, վորհեղափոխության հետագա զարգացումը սպառնում ե վերջնականապես խորտակել ցարական ռեժիմը, ուստի նա վճռեց փորձել յուր վորդին ուժերը։ Գյուղացիության համագումարի պատգամավորները կալանավորվեցին, հրաժան արձակւեց վոչնչացնել բոլոր «խոռվարաններին», այրել նրանց տները։

7. Մինչ այդ, շարժումն ընդունվել ել ավելի ընդարձակ մասսաներ։ Սեփական նավա-

տորմում ապստամբություն ծագեց: Նավաստիները կալանավորեցին բոլոր բեակցինն սպաներին և գուրս յեկան Սեվաստոպոլի փողոցները կարմիր գրոշներով: Ապստամբության դլուխ երանցել լեյտենանտ Շմիդտը: Բայց շնորհիվ անկազմակերպության ու ավելորդ դյուքանավատության, ապստամբությունը շուտով ճնշվեց: Նավերից մեկը ջրասույց արվեց, իսկ մյուսները անձնատուր յեղան: Նավաստիներից շատերը սպանվեցին, գնդականարմվեցին ու ջրասույց արվեցին: Կարմիր լեյտենանտ Շմիդտը կենդանի բռնվեց:

Կառավարությունը վճռեց այս անհոգ մինել ու ժողովեց յուր բոլոր ուժերը: Առաջին հարվածն ուղղվեց «Փաստական իշխանության» դեմ: Լենինգրադի Խորհրդի գեմ: Նոյեմբերի 26-ին կալանավորվեց Խորհրդի նախագահ Խրուստոլեվ-Նոսարը: Խորհրդի գլուխ անցավ մինչ այդ՝ Փաստախան յուր նախագահի կալանավորության, Խորհուրդը բաց թողեց մի կոչ—ուղղված ժողովրդին առաջարկելով պատրաստ լինել զինված ապստամբության դիմելու: Խորհուրդը յուր վերջին որերը նվիրեց զավապի հետ կապը հարթելուն: Շատ քաղաքներում արդեն կային բանվորական պատգամավորների

Խորհուրդներ: Խորհուրդը մի կոչ ել բաց թողեց ուղղված զինվորներին, հրամիրելով նրանց ողնել ժողովրդին ցարիզմի զեմ կոիզ սղելու համար:

Դեկտեմբերի 2-ին Խորհուրդը դիմեց ամբողջ ազգաբնակությանը, կոչ անելով դադրեցնել առւրքերի վճարումը, հանել պետական կառանձներից վոսկե գրամով մուծած բոլոր դումարները:

Բայց Խորհուրդը արգեն թուլանում եր: Երա գեմ զինվել ելին բեակցիայի բոլոր մուժ ուժերը: Բանվորական մասսաներն ել թուլացել ելին կովի մեջ: Բուրժուազիան, ինչպես նախագուշակել ելին բոյլշեիկները, վախեցավ հեղափոխական ալիքներից ու վճռեց, վոր ավելի լավ ե միաբանել ցարի հետ: Ֆարբիկանտները լոկառու (ֆարբիկանտների գուրծագուլ) հայտարեցին ու գուրու ելին նետում բանվորներին ֆարբիկներից: Զարդերի ալիքը գավառական շրջաններում սաստկացավ ու կլանեց անդիտակից գյուղացիության մի մասը:

Դեկտեմբերի 3-ին կալանավորվեց բանվորական պատգամավորների Խորհուրդը յուր ամբողջ կազմով:

Տ. Ցարիզմի ուժն ընկճել կարելի յեր միայն

զինված առլուտամբություն առաջ բերելով ամբողջ Խուսաստանում: Բայց նա չկար, Առանձին-առանձին քաղաքներում բոնկված հատ ու կենդ մանր ապստամբությունները արագորեն ճնշվում եյին ու ել ավելի թուլացնում բանվոր դասակարգի ուժերը: Գյուղացիությունը չհասավ արդյունաբերական բանվորությանը: Փորձեր յեղան ընդհանուր գործադուլ կազմակերպելու, բայց նա ել վերջացավ անաջողությամբ: Այսուամենայնիվ բանվոր դասակարգը ձեռքից վայր չգրեց կովի դրոշը մինչև վերջին ըոսկեն: Այս անգամ շարժման զուտի անցավ Մոսկվան: Մոսկվայի Խորհուրդը յեռանդով պատրաստվում եր զինված ապստամբություն սկսելու: Բանվորական թաղամասերում կառուցվում եյին բարբիկադներ: Մոսկվայի քաղաքապահ զորքի զինվորները իրանց հրամանատարի հրամանը ստանալով հրաժարվեցին կրակել բանվորների վրա: Այն ժամանակ կառավարությունը մի քանի գունդ «հավատարիմ» զինվորներ ուղարկեց ախտեղ Լենինգրադից ու Վարշավայից, զարոնք, տասնումեկ որվա ծանր կոփլաներից հետո, թնդանոթների ողնությամբ գեկտեմբերի 16-ին ջարդեցին բանվորների ամրությունը՝ կարմիր Պրեսնայան: Յերկու հազար հողուց ավելի սպանվածներ թողեց Մոսկ-

այի պրոլետարիատը այդ բարբիկադներում: Մոսկվայի տպատամբության ընկճումով երջ տրվեց 1905 թվի հեղափոխական շալ ժմանը: Բանվոր գասակարգը արյունաքամ յեղակ և հազթվեց: Սկսվեց բանվորների անդատնդականարությունների ժամանակաշրջանը: Եյուղացիությունը ողնության չեր գալիս: Քիչ եւմանակից հետո նա ևս տուժեց կազմակերպած չինելու համար: Ցարական կառավարությունը ըմբռուտացավ, զյուղացիական շրջաններն ուղարկեց պատժից զորախմբեր, զօրոնք անըմբռեն պատժեցին զյուղացիներին կալվածառերերի դեմ ըմբռուտանալու համար: Ռեակցիան աղթանակեց: Բանվորական ու զյուղացիական միաժամանակ սկսված խլոտությունը 1906—7 թվականներին խեղուցում են արյան ծովում:

Այդպես վերջացավ Ռուսական տուաջին հեղափոխությունը:

բ. Ինչ սիթի կարդու հաղողեկը.

1. Հօկտեմբերյան գործադուլի մասին. Խուսական պատմության Խրեստոմատիան (յեր. 128—129) կամ թե. Սվերչկովի՝ «Հեղափոխության արշալույսին» (յեր. 93—96): Ավելի մանրամասն. Տրոցկի՝ 1905 թվականը (յեր. 86—104):

2. Բանվորական Պատգամավորների ն
հըրդի աշխատանքի մասին. Ռուսական պատմա-
թյան Խրեառմատիան (յեր. 135—139—141)

3. Նախատրոմի ապստմբության մասին
նույն գրքում. (յեր 136—139):

4. Դեկտեմբերյան ապստմբությունը Մո-
վայում. նույն գրքում. (յեր. 140—144): Ազա-
կար և կարդալ մինչև 149 յերեսը:

5. Գյուղացիական շարժման մասին
նույն տեղում (յեր. 120—128):

6. Բանվորական մասսայական շարժմա-
նի անդամությունը վոգու մասին. Դասակարգային կո-
խրեառմատիան (յեր. 120—126):

Վերջին պատմվածքը կարմիր բանակային յունը:
Ները կարող են կարդալ ինքնուրույն կերպու-
ներան կարելի յե նույնիսկ բեմակրել: Ըստ ար, ներկա զրույցն անելու մեթոդը պետք է
ոգտավետ կլինի յեթե թատրոնական կրուժունի, գլխավորապես պատմողական մեթոդը:
Կարողանա բեմի վրա ներկայացնել նրան:

գ. Զրույցի մեկնաբանումը.

Այս զրույցի, ինչպես նաև նախընթացների
հիմնական խնդիրը պիտի լինի ցույց տալ.

ա) Պրոլետարիատի հերոսական շարժումը
նրա խմբած լինելը, պատրաստականությունը,
զոհաբերելու յուր անձնական շահերը ամբողջու-
թյան բարորության համար:

բ) Համեմատաբար սակավաթիվ պրոլետա-
տատի ու նրա կուսակցության ազգեցությունը
աղմամիկիոն ազգաբնակության վրա, գյուղա-
ների և նույնիսկ զինվորականների վրա
սակաստիների ու զինվորների):

գ) Դրա հետ միաժամանակ եռանդուն
երգով ընդգծել վոր Հեղափոխության տա-
րրման հիմնական պատճառը գյուղացիության
ոգմից պրոլետարիատին յուր ժամանակին ան-
դաժեն աջակցությունը ցույց չտալն եր:

դ) Հիշատակել պատժիչ եկապեղիցիաների
ործունեյությունը և ցարիզմի վախկուու-
նական թագությունը զրույցն այդ պատճենությունը կատարելու հա-
մար, ներկա զրույցն անելու մեթոդը պետք է
ոգտավետ կլինի յեթե թատրոնական կրուժունի, գլխավորապես պատմողական մեթոդը:
Հայրեկ չկա վախենալու, վոր ունկնդիրների

շաղբությունը կիթուանա. այդ զրույցում
ինքան զրամատիքական, ու այնքան գրավիչ
պիտուններ կան, վոր հմտորեն պատմելով կա-
պիլի չե լիովին տիրապետել լսարանի ուշադրու-
թյունը: Այս զրույցում պատմողական մեթոդը
իրառելու սկանին են խոսում հետեւյալ մոտիվ-
երը (շարժառիթները):

ա) Դեպքերի լրիվ ամբողջական պատկերը
տեղձերու անհրաժեշտությունը և

բ) Նյութի հարսառությունը, վորը չի կալի ավանդել մի ժամում հարց ու ոլատասխաների մեթոդի ոգնությամբ:

Ամբողջ զրույցը պետք է բաժանել մի քանի մասերի և պատմելուց հետո ել ամրապնդյուրաքանչյուր մասը համապատասխան յեզր կացություններով:

Այսպես ուրեմն, պատմելիս հիմնականպատակ պիտի դնել ունկնդիրների մեջ առեծել ըստ կարելույն ավելի պայծառ պատկերներ փորպեսզի յեզրակացությունները ինքն իրաբղիքն նյութից: Ուստի քաղղեկը պետք է շախնամքով պատրաստվե զրույցի համար, ընտրյալ հարմարագույն նյութ և նույնիսկ արտահայտություններ:

Ավելի լավ կլինի զրել զրույցի ամբողջ բանդակությունը և համապատասխան տեղերու մտցնել այս կամ այն գեղարվեստական կտոր հիշյալ գրականությունից: Յեթև հնարավորություն կա տպագորել զրույցը բեմադրությամբ (տես. հիշ. գրակ.) անհրաժեշտ և սննել: 1905 թվի հերոսների ընկ. Տրոցկու, լեյտենանտ Շլամիդտի և Բառմանի նկարները պետք ե զարդարեն այն կացարանը, ուր տեղի յեն ունենաւ պարագանքները այդ զրույցի ժամանակ: Հարկավոր ե նույնպես Անա-ի և այլ հին թերթե-

րում վորոնել ու կտրել 1905 թվի կյանքից առած պատկերները:

5. ԲԴ ԶՐՈՒՅՑ

1914—17 թ. թ. ՊԱՏԵՐԱԶՄԸ

Ա. զրույցի բօվանդուկուրյունը.

Ցարական կառավարությունը լիկվիդացիալի յենթակում տաաջին հեղափոխուրյան արած նվաճումների մեջ առաջարկել է: 1914 թվից բանվորական շարժումը նորից վերակենցանանում է: 1914 թվին հեղափոխական շարժումը հասնում է 1905 թվականի չափերին: Պատերազմը խանգարեց: Բանվորները զաղուց ելին նախատեսել այդ պատերազմը: Պատերազմի պատճառները այն կորից ե, վորք մզումնեն խուզու կապիտալիստական յենթեները ամբողջ աշխատին տիրանալու համար: 1914 թվի պատերազմը բոլոր պատերազմներից ամենախուզուն ու կործանարան եր: Պատերազմը անցրադաշտական Ռուսաստանի վրա ավելի վարաց կերպով, բան ենա գաւառակիցների վրա: Միակ կուսակցությունը,

գորք ազիտացիա յեր մզում պատերազմի գեմ, բոլուսվիկների կուսակցությունն եւ ԶԵԱԿԻՆՎ գժվառություններից, բոլուսվիկները վառեցին հեղափոխուրյան հրդիկը:

1. 1905 թվի հեղափոխությունը ջախջախելուց հետո արիում է խորին բակցիա: Յարական կառավարությունը լիկվիդացիայի յենթարկում մեկու յետերից բռոր ազատու-

թյունները, վորոնք խոստացված եյին հոկտեմբերի 17-ի մասիֆեստով. Փակվում են հեղափոխական լրազիրները, բանդարկվում են արհեստակցական միությունների զեկավարները: Դեսական գուման յերկու անգամ ցրեցին հեղափոխական լինելու պատճառով: Վերջապես, կառավարությանը հաջողվում է ընտրողական որենքների փոփոխությամբ և բռնությունների միջոցով կաղմել կամակատար ու հարյուրակայիններ բաղկացած գուման հաշավեց ցարի հետ ու նրա ոգնությամբ նորից սկսեց հարստահարել աշխատավորներին:

2. Բայց 1911 թվից սկսած բանվորական շարժումը նորից և սկսում վերակենդանանալ, դարձյալ բազմանում և զործադուլների քանակը: 1912 թվին հեռավոր Լենայում, վոսկու հանքերում, ցարական զինվորների ձեռքով գնդականարվեցին գործադուլարար բանվորները: Յերբ լենայի դեպքերի լուրը հասավ Ռուսաստան, նորից ցնցվեց ամբողջ բանվոր դասակարգը: Բողոքի գործադուլները բռնկվեցին Ռուսաստանի բոլոր արդյունաբերական քաղաքներում: Պատերազմից քիչ առաջ Ռուսաստան լեկավ ֆրան-սիական հասարակապետության նախկին վարչապետ Պուտնիարե-պատերազմը, վորակեսքի

համաձայնության գա ոռւսական ցարի հետ պատերազմի պայմանների մասին: Լենինգրադի բանվորները արժանավայել ընդունելություն ցուց տվին նրան, գործադուլ արին բոլոր խոշոր գործարանները, բանվորները ցույցեր արին կարմիր գրոշներով, բանվորական թաղերում ոկսեցին պատրաստել բարբիկադներ: Արդեն զգացվում եր, վոր նոր հեղափոխությունը անխուսափելի յեւ: Խանգարեց միայն սկսված պատերազմը:

3. Այդ պատերազմը բանվորները արդեն վայուց նախատեսել եյին: Բանվորների միջազգային համագումարներում շատ անդամ բանաձեռնում շեշտվում եր, վոր կապիտալիստները պատերազմ են պատրաստում: 1912 թվին նույնիսկ շտապ կարգով գումարվեց ինտերնացիոնալի համագումարը, քննելու այն հարցը՝ թե ինչպես արգելք լինել սպառնացող պատերազմին: Այդ կոնգրեսի բանաձեռնում ասվում է, վոր խոշոր պետությունների կապիտալիստները ամբողջ աշխարհի հարսած թյունները հափշտակելու նըմատակով ուժեղացնում են իրանց զորքերը և պատերազմը նրանց միջևանիուսափելի յեւ:

Մինչև պատերազմը վերջին տասնամյակում կազմվեց կապիտալիստական պետությունների յերկու խոշոր դաշնակցություն. Անտանտան

(համաձայնությունը) Ասդիայի, Ֆրանսիայի ու Ռուսաստանի՝ մի կողմից, և Գերմանիայի ու Ավստրո—Ռւսարիայի՝ մյուս կողմից։ Յերկու կողմերն ել ձգում եյին գերազանցել իրարից սպառազինման մեջ։ Սպառազինման վրա կատարվող ծախքերը յուրաքանչյուր յերկու կազմում եյին պետական ծախքերի կեսից ավելին և տարեցտարի ել ավելանում եյին։ Սպառազինման այդ ահազին ծախքերը ծածկրվում եյին աշխատավոր ազգաբնակության վրա դրված տուրքերն ավելացնելով։ Ռուսաստանը հետ չեր մնում յուր դաշնակիցներից։ Նա դեռ ուրիշ միջոցներ ել հնարեց ժողովրդից զրադուրս կորզելու համար։ Ժողովրդին հարթեցնելու միջոցով ցարական գանձարանը ստանում եր տարեկան մոտ մի միլիարդ ռուբլի վոսկով յեկամուտ։ Վերջապես տեղի ունեցավ այն, ինչ վոր անխուսափելի յեր։ 1914 թվի հուլիսին Ավստրո—Ռւսարական գահաժառանգի պրովոկացիոն սպանության հետևանքով սկսվեց համաշխարհային պատերազմը։

4. 1914 թվի պատերազմը աշխարհում յեղած բոլոր պատերազմներից ամենասարսափելին է։ Միմիայն պատերազմի վրա արված ծախքերը համում եյին անհավատալի մի գումարի $382,762,000,000$ վոսկու ռուբլու։ Վորպեսզի

կարողանանք պատկերացնել այդ թվերի մեծությունը, հարկավոր ե ավելացնել, վոր այդչափ վոսկի չկա ամբողջ աշխարհում, նույնիսկ վոսկու հանքերում։ Ել ավելի պարզ կլինի, իբթե նկատենք, վոր աշխարհի յերեսին բոլոր պատերազմները, ոկտոբեր 1793 թվից մինչև 1914 թ., այսինքն։ 120 տարվա ընթացքում միասին առաջ արժել են $42,000,000,000$ ռուբլի, այսինքն 10 անգամ պակաս քան 1914—17 թ. թ. պատերազմի ծախքերը։ Այդ բոլոր հակայական գումարները գանձվում եյին աշխատավոր ազգաբնակության վրա ուժից վեր հարկեր նշանակելու միջոցով։ Բայց միայն դըանով չեր վոր տառապում եր ժողովուրդը պատերազմից։ Պատերազմը հաշմանդամ դարձրեց ու կոտորեց $20,000,000$ -ից ավելի մարդիկ և նրանց խոշորագույն մասը ընկնում ե ռուսական «Թնդանոթացին մակի» վրա (այդպես եյին արտահայտվում մեր «գաշնակիցները» մեր բանակի մասին)։

5. Պատերազմի միջոցին սաստիկ կրճատվեցին մեր հարաբերությունները արտասահմանի հետ և մեր գյուղատնտեսական մթերքների արտածումը չափազանց պակասեց՝ իսկ մթերքները վերցնում եյին բանակի համար եժան գներով։ Պակասեց բանվոր ձեռքերի քանակը գյուղերում, մաշվեց գյուղատնտեսական ինվեն-

ուարը և դրա շնորհիվ ել կրծատվեց ցանքսերի տարածությունը: Այդ բոլորը քայլայեց գյուղացիների տնտեսությունը: Փոխադրական միջոցների վաչնանալը, վոր պատերազմի հետևանքներ, խզեց քաղաքի ու գյուղի միջև յեղած կապը: Քաղաքը նեղվում եր մթերքների անբավականաչափ ներմուծումից: Դա ամենից ավելի անդրադարձավ բանվորների կյանքի վրա. մթերքները, թանգանում եյին, մինչ աշխատավարձը համեմատաբար մնում եր ցածր, և այդ այն միջոցին, յերբ գործարանատերերը ահագին վաստակ դումարներ եյին վերցնում պետական կապահներից: Աշխատանքի որը բոնի կերպով ավելացնում եյին: Բոլոր անբավական բանվորներին ուղարկում եյին ռազմական ճակատները: Վատիկանական իշխանությունը խստացրեց պատժական միջոցները բանվորներինկատմամբ:

6. Այդ ամենը նախատեսված ու մատնանը ված եր բանվոր դասակարգի բոլոր պարագությունների կողմից գեռես շատ առաջ: Բայց պատերազմի սկզբում նախկին «պարագլուխներից» շատերը գավաճանեցին բանվոր դասակարգին և դափաղբարար կնային բուրժուազիա հետեւից: Այդպես վարվեց պատերազմող յերկրների սոցիալիստական կուսակցությունների պարագլուխների մեծ մասը: Նրանք մոռացան

իրանց յերեկվա բանաձեերն ու ճառերը և առաջարկեցին բանվորներին միաբանել բուրժուազիայի հետ ու մոռանալ իրանց դասակարգացին շահերը: Միայն բոյլշևիկների կուսակցությունը Ռուսաստանում՝ միակն եր, վոր համարձակորեն հրատարակ յեկավ ընդգետ պատերազմի: Պատերազմի սկզբում բոյլշևիկները միթուցիկով կոչ արին բոլոր բանվորներին, վորպեսզի նրանք հրաժարվեն սպատերազմելուց, և ոգտվելով այն բանից, վոր զինել են իրանց, դարձնեն հրացանները իրանց մշանչենական թշնամիների գեմ, ցարերի ու կապիտալիստների գեմ: Բոյլշևիկներն եյին միայն, վոր ցույց եյին տալիս՝ թե ուժ համար եշահավետ պատերազմը և վոր աշխատավորները պատերազմից թուլանում են միայն: Բոյլշևիստական պատզամավորները գումայում ձայն տվին պատերազմի գեմ: Դրա համար ցարական կառավարության ամբողջ ատելությունն գետի բանվոր դասակարգը ու բոլոր պատիժները թափկեցին բոյլշևիկների գլխին: Փակվեց բանվորների սիրած «Պրավդա» բանվորական լրագիվը, բանդարկվեցին բազմաթիվ բոյլշևիկ-բանվորներ և, վերջապես, 1915 թվին բանդարկվեցին բոյլշևիկների գումայի ֆրակցիայի անդամները ու արսուվե-

ցին Սիրիոսի ամենախուլ տեղերը։ Զինվորական դրությունը յերկրում սպառնում եր զինվորական դատաստանով պատերազմի դեմ սպիտացիա անելու համար։

7. Չնայելով այդ բոլոր արգելքներին, բոլշևիկները անդադար աշխատանք եյին տանում բանվորների մեջ, պատերազմի նպատակներն ու ինդիքները բացատրելով։ Նրանց չեր կանդնեցնում ես-երների ու մենշևիկների դավաճանական աշխատանքները, վորոնք կոչ եյին անում քաղաքացիական հաշտություն պահպանել բուժուազիայի հետ։ Առանձնապես բեղմնավոր եր բոյլեվիկների աշխատանքը 1916 թվին։ Պատերազմի սկզբում ժամանակավորապես հանդարտված բանվորական շարժումը բոյլեվիկների ազիտացիայի ազդեցության տակ նորից կենդանացավ։ Սկսեցին գործադուլները գործարաններում։ Մանավանդ անմոռանալի լենինցիանի գործարանների բանվորության դործագուլը, 20 նավաստիների իրանց հեղափոխական գործունեյության համար սագմա-դաշտային դատարանին մասնելու առիթով։ Գործադուլը դեկավարում եր լենինցիանի բոյլեվիկների կոմիտեն։ Գործադուլ եյին արել 100,000 բանվորներ։ Դա ներգործություն ունեցավ նույնիսկ

յարական դատարանի վրա, վորը չհամարձակվեց կայացնել նավաստիների համար նախորոք պատրաստված մահվան դատավճիռը։

Հարկերի ծանր բեռը տնտեսական քայլայումը, վորը քանի գնում եր ավելի յեր խորանում քանավորների թշվառ գիծակը, ճակատներում կրած խոշոր կրուստաները, դավաճանություններն ու անաջողությունները, և դրա վրա ավելացրած սպայության դազանաբար վերաբերմունքը դեպի զինվորները, վերջնականապես խախտեցին ցարիզմի առանց այդ ել խարխլած շենքը։

Բ. Ինչ պիտի կարգա քաղը եղանակը.

1. Բանվարական շարժումը պատերազմի նախորյակին։ Ռուսական պատմության խրեստումատիան (յեր. 150—151, 154—158, 163 164)։ Դասակարգային կովի խրեստումատիան (յեր. 127—133)։

2. Ռուսական իմպերիալիզմի մասին։ Ռուսական կայսություն (յեր. 158—159)։

3. Պատերազմի պատճառների մասին։ Նույն պերը (յեր. 160—162)։

4. Յերկորդ իներենացիոնալի դավանանության մասին։ Նույն տեղում (յեր. 164—167)։ Դասակարգ. կովի խրեստում (յեր. 134—136)։

Գ. Զրույցի մոկնաբանումը.

Այս Զրույցի մեջ անհրաժեշտ ե բացատրել հետեւյալ հիմնական կետերը:

ա) Յարական կառավարությանը միայն ժամանակավորապես հաջողվեց կանգնեցնել բանավորական շարժումը: Նա դարձյալ բարձրացափ հենց փոք պրոլետարիատը ուշքի յեկավ կրած չարդից: Համաշխարհային պատերազմի նախորյակին նուսաստանը ապրում եր յերկրորդ հեղափոխությունը:

բ) Լենայի գեղքերը ապացուցեցին, վոր բուրժուազիան յեղափոխության «ուղեկցից» դարձավ նրա թշնամին:

գ) Համաշխարհային պատերազմը խոշոր բուրժուազիայի համար շահավետ եր: (Ավելի վանրամասն հարկադր ե բացատրել նուսական բուրժուազիայի շահերը պատերազմի մեջ):

դ) Բոյլշևվիլները միակ կուսակցությունն ե, վոր կոիվ ե մղել պատերազմի դեմ:

յէ) Անհրաժեշտ ե առանձնապես ընդգծել անտեսական քայլայումը, վորպես պատերազմի հետեւանքը և դրանով բացատրել անհրավականության աճումը զյուղում:

դ) Իբրև ընդհանուր յեղակացություն պա-

տերագմը խորացրեց միապետության վորքի առաջած վորվածքը:

Նախընթաց զրույցը նպատակ ուներ ներդրել ունկնդիրների զգացմունքների և յերեսակայության վրա. Նրանց մեջ առաջ բերել, մի կողմից՝ վրդավմունք և ատելություն դեպի միապետությունը, մյուս կողմից՝ համակրանք դեպի հեղափոխությունը նախաձեռնողը՝ բանվոր դասակարգը: Ներկա զրույցի սկզբում անհրաժեշտ ե խորացնել զգացմունքները, դարձնելով նրանց գիտակցություն: Ուստի անհրաժեշտ ե մի անգամ ել կրկնել նախընթաց զրույցի հիմնական յեղակացությունները, Պատմելով միապետության հետագա քայլերի մասին հեղափոխական նվաճումները լիկվիդացիայի յենթարկեական նարցում, (պատժական միջոցները, լրագըրների փակումը, միությունների արգելումը, Արդ Պետական դումայի սոցիալ - դեմոկրատ ունդամերի բանդարկումը). ոգտագետ ե մտադիրների ունկնդիրներին հետեւյալ հարցով. հոգեցնել ունկնդիրներին հետեւյալ հարցով. «Հնարավնը ե, արդյօք, այդպիսի պայման - «Հնարավնը ե, արդյօք, այդպիսի պայման - կամ ներում դարձյալ վերսկսել շարժումը» կամ թե այլ տեսակ մի հարցով:

Հետաքրքրական ե իմանալ, ինչպիսի տպագրություն թողեցին կարմիր բանակայինների

վրա բանվոր դաստկարգի ու նրա ուժի մասին նախընթաց զրույցները։ Հավատում են նրանք, արդյոք, նրա անհաղթելիությանը կամ թե միապետության ճնշումները ունկնդիրների վրա մեծապես ազդել են։ Յեթե նույն իսկ պատասխանը բացասական լինի, —քաղղեկը շարունակում է. «Դուք սխալվել եք. լսեցեք հետագա անցքերի մասին»։ —և պատմում ե լենայի գնդակահարությունների, լրագրներ հրատարակելու, գործադրության շարժման և, վերջապես, 1914 թվի հուլիսի գեղքերի մասին։ Դեռևս նախընթաց զրույցներում ասված եր, վոր այդ տեսակ ուղղություն տվող հարցերը նպաստում են հետաքրքրությունը լարելուն։ Այդ մոմենտների պահերացումը՝ հիշյալ գրականությունից կտորներ կարդալու միջոցով, ել ավելի ուժեղ կերպով տպափորում ե այդ մասից բղյուղ յեղակացությունը բանվոր դաստկարգի անընկճելի ուժի մասին, յերկրորդ հեղափոխության անխուսափելիության մասին։

—Ինչու տեղի չունեցավ յերկրորդ հեղափոխությունը 1914 թվին...ի՞նչը կանգնեցրեց այդ հեղափոխությունը...—Ահա այդ վոգովքաղեկը ուղղում է ունկնդիրների ուշագրությունը գեղի հետագա անցքերը, Պատասխանը ավելի քան հավանական է, վորը կինի «պատերազմը»։

Յեթե նույնիսկ քաղղեկը միանգամից չստանա պատասխանը, կարելի յէ մոտենալ նրան հետեւյալ հարցերով. ի՞նչ գեղքեր պատահեցին 1914 թվին։ Պուանկարեն ինչու յեր Ծուսաստան յեկել, և այն։ Յանկալի պատասխանը ստանալով, հարկավոր ե անցնել հետեւյալ հարցին. ի՞նչ ներգործություն ունեցավ պատերազմը աշխատավորների կյանքի վրա, քանի սպանվածներ կան ձեր գյուղում։ Վո՞րքան հաշմանդամներ։ Ի՞նչ են պատմում պատերազմից վերադարձները...

Թող մի ամբողջ շարք հիշողություններ տվելի մանրամամարեն լուսոբանեն բանվորների ու զյուղացիների կյանքը պատերազմի ընթացքում։ Ապա հարկավոր ե նրանց ընդհանրացնել աեղեկություններ հաղորդելով պատերազմի ծախքերի, զոհերի բանակի մասին և այն։

Պարզելով պատերազմի վերսակարությունը աշխատավորների համար, պետք ե անցնել այն հարցին՝ թե ո՞ւմ եր հարկավոր պատերազմը։

Պատերազմի բուն նպատակների բացատրելը, կեզծ վարագուրումները, «հայրենիքի պաշտպանությունը» և «ճնշված ազգերի ազատազրումը» շատ դյուրին և պատկերավորել ուսւական իրականությամբ, համեմատելով թե ինչպես եր վերաբերքում միապետությունը գեղի Ծուսաստա-

նի սահմաններում ապրող ազգությունները՝
այդ կեզծ նշանաբաններով:

Այդ հարցին՝ թե ինչպես եյին վերաբերվում
բանվորները գեպի պատերազմը, անհրաժեշտ և
ընդգծել, վոր պատերազմը պատահականությունը
չեր բանվոր դասակարգի սպարազլուխների հա-
մար. մի քանի խոսքերով հիշել Իստերնացիո-
նալի կոնգրեսների բանաձեռքի բովանդակու-
թյունը, ապա տալ յերկրորդ Իստերնացիոնալի
դավաճանության պատկերը պատերազմի ժա-
մանակ և ավելի՝ մանրամասնորեն կանգառնել ոռու-
սական բանվորների ու բոյլշեիկների բոնած-
դիրքի վրա։ Ամեն տեսակ խոսքերից ա-
վելի լավ կազդեն պատերազմի սկզբում բաց
թողած բոյլշեիկական կոչերի ընթերցումներն
ու կոմմենտարիաները (մեկնությունները): Վոր
բոյլշեիկները հավատարիմ են բանվորական դոր-
ծին ու ազգեցիկ են բանվորների մեջ. այդ յեզ-
րակացությունը հաստատել պատմելով թե ինչ-
պես նրանց հալածում եյին (պատգամավորնե-
րի բանտարկումը, «Պրավդայի» փակելը և այլն)
և տալ տեղեկություններ բանվորական շարժ-
ման աճերու մասին 1916 թվականի վերջե-
րում։

6-ՐԴ Զ ՐՈՒՅՑ

ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Զբույցի բովանդակությունը.

Հեղափոխության աջող յերե կախված եր բա-
նակի վերաբերեալներից, Բանակը հեղափոխված եր,
Սակա բանին նպաստեցին պատերազմի ժամանակ տր-
ուող կամայականությունները: Ճգնաժամը հասավ
յուր գագարնակետին 1917 թվին, Ապստամբված
պրոլետարիատը զինվորների հետ միացած տայալեց
ցարական ուժիմբ: Շենքեց բազուբերի ու զինվոր-
ների պատգամավորների Խորհուրդը, Փասուեն իշխա-
նությունը գտնվում եր Խորհրդի ձեռնուն: Բայց ես-
եներն ու մենսեվիկները սվին երան բուրժուազիա-
յին: Շուրջուական ժամանակավոր կառավարու-
թյունը արօպանն սկսեց Խորհրդի զեմ յեվ բանվոր-
ների ու զինվորների պահանջների զեմ: Մենսեվիկ-
ների ու եսեների ժամանակավոր կառավարության
դավանական բաղականական ազգանության ազգեցության
ներք բանվորներն ու զինվորները համոզվեցին, վոր
բոլցեվիկների բնած բնրացքն ուզիդ եր ու սկրս-
ցին երանց կողմն անցնել: Բոլցեվիկները կողմնա-
կից եին, վոր իշխանությունը հանձնվի Խորհուրդ-
ներին ու անմիջապես Խայազություն կնելի: Հու-
մափին բանվորներն ու զինվորները փորձ արեն իշ-
խանությունը իրանց ձեռնք առնելու: Ցունկերների
ոզնությամբ Կենենակին նետեց այդ ապստամբությունը:
Գեներալ Կունիլովը փորձ արեց հափառակելու իշ-
խանությունը: Բանվորների յեվ զինվորների սփառ-

մաւու ուժերով նա յետ մզվեց: Նոր հեղափոխությունը դարձավ անխռուսափելի:

1. Հողը հեղափոխության համար բոլորովին պատրաստ եր: Ամենահեղափոխական գառակարգը պըրութատրիատը արդեն հասունացել եր, դրա համար նախընթաց գործադուլները 1916 թվին այդ ապացուցեցին: Ամենասուր հարցը կայանում եր նրանում՝ թե ում կողմն է լինելու բանակը: Բայց բանակը այլևս այն տգետ մասսան չեր, վորին տարիներով հեռու ելին պահում ժողովրդից զորանոցներում: բանակը այժմ իրանից ներկայացնում եր ամբողջ ժողովուրդը, բանի կերպով կտրված յուր մաճից, յուր մուրճից ու մոխրակույն շինեները հագցրած: Վոսկեզոծ ուսադիրավորների տմարդի վարժումքները զինվորական մասսայի հետ վերջնականապես հեղափոխականացրեց բանակը:

Մինչդեռ պետության մեջ դեռևս շարունակում եր իշխել կամայականությունը: Ամբողջ գործերը վարում եր թագուհուն և նրա ազգեցիկ սրբիկա Գրիշկա Ռասպուտինին շրջապատող անզգամների մի փոքրիկ խմբակ: Ռասպուտինը հեռացնում ու նշանակում եր մինիստրներին ըստ իր հայեցողության: Բազմածակատներում գործերը հետզհետե վատթարանում ելին: Կազմալուծումը զգացվում եր ամեն բանական:

և իսկ բուրժուազիան սկսեց յուր ամբավականությունը հայտնել միապետության վարածքաղաքականության համար:

2. 1917 թվի փետրվարին ձգնաժամը խորացավ: Ընդհատվեց մթերքների ներմուծումը և նիսխզը հերթիւն կայանութների առջև կազմվեցին ներթերի մեծ պոչեր: Հացը տալիս ելին տուժերով (քարտերով): Վերջին որերը մինչև հեղափոխությունը հացի վաճառքը խանութներից բոլորովին դադարեց: Բանվորները գործարաններում սկսեցին հուզվել: Փետրվարի 23-ին կին բանվորուհիները ներթերից մասսաներով անցնում ելին քաղաքի փողոցներով և աղաղակում: «Հաց տվեք, կորչի պատերազմը», կանգառում գործարանները: Ընդհատվեց ելեքտրաքարշը յերթեեկությունը: Բանվորները փողոց գույս յեկան կարմիր գրոշներով, «Կորչի պատերազմը», «Անկցի միապետությունը» նըշանաբաններով: Քաղաքապետը զուր եր սպառնում ցուցարարների գեմ զենք գործադրել: Քայլես վոչ վոքի չեր վախեցնում: Մասսաների ճնշումը ազգեց նաև հավաքված Պետական Դումայի վրա: Դուման քննեց ստեղծված ձգնաժամը և պահանջեց ցարից նշանակել Դումայի առաջ պատասխանատու մինիստրներ: Յարը այդ պահանջին պատասխանեց հրաման տալով գուման

արձակելու մասին։ Դա նոր առիթ ծառայեց բանվորական մեծ ցույցերի համար։ Բուրժուական Դուման կրիտիքական դրության մեջ երմի կողմից նա արդեն նկատում եր ցարական իշխանության բոլոր խախուտությունն ու խաբու սիկությունը, իսկ մյուս կողմից՝ նա յերկոյուղ եր կրում հեղափոխության շարժումներից։ 1905 թվի ուրուականը գեռես կանգնած եր նրա աչքերի առաջ։

Մինչդեռ, շարժումը որեցոր սաստկանսում եր, Զուր եր Պետական Դումայի նախադանը, խոշոր կալվածատեր Ռոձյանկոն, ազերսում ցարին, վորպեսզի նա զիջե Դումայի պահանջներին։ Յարը լիովին գանգում եր կնոջ և Ռապուտինի ազդեցության տակ։ Յեզ Դուման ստիպված եր, յուր կամքի հակառակ (վախենալով բաց թողնել շարժումը յուր ձեռքից) խզել հարաբերությունները ցարի հետ։ Արձակման հրամանին, իբրև պատասխան Դուման վորոշեց չցրվել։ Կառավարությունը գլուխր կորցրեց։ Բանվորներին զսպելու համար ուղարկված զինվորները հրաժարվեցին կրակել ժողովրդի վրա և յեղայրանում եյին բանվորների հետ։ Յարիդմի վիճակը կանխորոշված եր արդեն։ Քաղաքապահներն ու վոստիկանները թագնվել եյին։ Ակսվեց թաղային վոստիկանամասերի կողո-

պուտը։ Բանվորներն ու զինվորները կալանավորեցին ցարական բոլոր մինիստրներին ու բարձրաստիճան պաշտոնյաներին։ Հին իշխանությունը այլևս գոյություն չուներ։

Փետրվարի 27-ին (նոր որացուցով մարտի 12-ին) ամբողջ քաղաքը ապստամբված բանվորների ձեռքումն եր արդեն։ Փետրվարի 27-ի գիշերը կազմվեց բանվորական պատգամավորների և որհուրդը 1905 թվի Խորհրդի ձեռվ։ Խորհրդի առաջին քայլերն եյին։ Վերականգնել կարգը քաղաքում և կազմակերպել ինքնապաշտպանությունը բեակցիայի հավանական հարձակման դեմ։ Խորհրդի ղեկավարությամբ կազմակերպվում եր միլիցիան կամավոր բանվորներից և ուսանողներից կարգը պահպանելու համար։ Խորհուրդը կազմակերպեց նույնպես աղդաբնակության պարենավորման գործը։ 27 և 28-ին անընդհատ ներկայանում եյին նրան Լենինգրադի կայազորի բազմաթիվ զորամասերի ներկայացուցիչները հայտնելու իրանց հավատարմությունը հեղափոխության։ Բոլոր յերկյուղները հականեղափոխության հավանական առաջինացման մասին՝ չբացան։ Մարտի 14-ին արյունաբեռ Նիկոլայը հրաժարվեց գահից։

Այդպես ընկապ վաղուց արգեն վտած ցարական սեժիմը։

3. Փաստական իշխանությունը քաղաքում
բանվորական պատգամավորների Խորհուրդն եր:
Պետական Դումայի գոյության մասին ամենքն
ել մոռացան, և վոչ ոք նրան նշանակություն
չեր տալիս: Բայց մենչեկիներն ու եսերները,
վորոնք մեծամասնություն եյին կազմում Խոր-
հրդի մեջ, չհամարձակվեցին իրանց ձեռքն առ-
նել իշխանությունը, ոգնեցին բուրժուազիային
ժամանակավոր կառավարություն կազմելու, ի-
րանց վերապահելով վերահսկողությունը կառա-
վարության գործունեյության վրա: Ժամանա-
կավոր կառավարության մեջ մտան ամենախո-
շոր ֆարբիկանուներն ու կազմածատերերը: Ժա-
մանակավոր կառավարության նախագահ նշա-
նակվեց խոշորագույն կալվածատերերից մեկը՝
իշխան Լըփովը, Ֆինանսների մինիստր՝ խոշոր
ֆինանսիստ և շաքարի գործարանատեր Տէրեշ-
չենկոն, զինվորական մինիստր՝ Մոսկվայի խո-
շոր կազիտալիստ, ճայտնի միապետական և
բեակցիոներ՝ Գուչկովը, արտաքին գործերի մի-
նիստր՝ բուրժուական կադետական կուսակցու-
թյան պարագում Միլյուկովը: Հասկանալի յեւ,
վոր մի այդպիսի խայտարդետ կառավարություն
չեր համակրում հեղափոխությանը և աշխա-
տում եր առաջին իսկ որերից կանգնեցներ
նրա ընթացքը: Լինելով անզոր, չունենալով

յուր յետեռում վոչ մի բեալ ուժ, կառարու-
թյունը վճռեց գործել դադանի կերպով:
Հեղափոխական ֆրազաներով վարագուր-
վելով ժողովրդին հանգստացնելու հա-
մար, նա մտածեց լիկվիդացիայի յենթարկել
հեղափոխական բանվորների ամենաղլխավոր
պահանջը՝ շուտափույթ խաղաղություն կնքել
առանց հաղթողների ու հաղթվածների: Ար-
տաքին գործերի մինիստրը գիմեց գաշնակից-
ներին՝ խստանալով վոր Ռուսաստանը հետազ-
յումն ել կատարելու յեւ ցարական կավագարու-
թյան կնքած բոլոր գաշնագրերը և մղելու յեւ
պատերազը «մինչև հաղթական վախճանը»:

Կառավարության այդ վրդովեցուցիչ վար-
մունքի լուրը սաստիկ հուզումն պատճառեց
բանվորներին ու զինվորներին: Այդ առիթով՝
բոլոր ժողովներում և մանիթեստացիաներում
բանվորներն ու զինվորները պահանջում եյին
կառավարությունից, վոր հեռանան առանձնապես
ատելի մինիստրներ՝ Միլյուկովն ու Գուչկովը:
(Այն ժամանակ գեռևս բանվորները կարծում
եյին, վոր գաշնակիցներին ուղղված շարաբաս-
տիկ հեռագիրը ուղարկել և միայն Միլյուկովը
յուր անձնուկան պատասխանատվությամբ: Ավե-
լի ուշ պարզվեց, վոր նրա քաղաքականությունը
հավանություն եր ստացել ամբողջ կառավարու-

թյան կողմից, վորոնց թվում նույնպես եսեր Կերենսկու կողմից):

Վորքան ել չեյին ուզում մենշևիկներն ու եսերները խզել իրանց բարեկամությունը բուրժուազիայի հետ, Խորհուրդը հեղափոխական մասսաների ճնշման տակ սահմանադրության գործեր, վորագեսպի այդ մինիստրները կառավարությունից հեռանան: Այն ժամանակ ամբողջ բուրժուական մամուլը, ժամանակավոր կառավարության հենց իրա թելադրանքով, սկսեց կատաղի ազիտացիա ձղել ընդդեմ Խորհրդի, վոր նա խանդարում և արձակել նրան:

Յերերված կառավարությունը ամբապնդելու նպատակով, մենշևիստական Խորհուրդը մի քանի մենշևիկներ և եսերներ ուզարկեց ժամանակավոր կառավարությունը: Բայց դրանից ժամանակավոր կառավարության քաղաքականությունը ամենաին չփոխվեց: Համաձայնականները գնացին կառավարական բուրժուական մեծամասնության յետից:

4. Մինչդեռ բանվորների հուզմունքը հետքին ետք սաստկանում եր: Աշխատավոր մասսաները ուզում ելին, վոր կառավարությունը վոչ միայն խոսքով, այլև գործով ցուց տա յուր հեղափոխականությունը: Բանվորները պահանջում ելին կիրառել 8 ժամյա բանվորական որը,

դյուզացիները անհամբեր սպասում եյին իրանց վաղեմի բաղձանքների իրականացմանը՝ ստանալու կալվածատերերի հողերը, զինվորները պահանջում ելին բարելավել իրանց վիճակը և հավասարեցնել իրանց իրավունքները մնացյալ քաղաքացիների հետ, բոլոր աշխատավորների ընդհանուր պահանջն եր՝ շուտափույտ կերպով հաշտություն կնքելը: Բայց կառավարությունը չկատարեց այդ պահանջներից և վոչ մեկը: Հույսը կտրած, վոր կարող կլինեն վորեն բան ստանալ կառավարությունից, աշխատավորները ավելի սերտորեն համախմբվեցին Խորհուրդների շուրջը: Բոլոր քաղաքներում կազմվեցին Բանվորական և Զինվորների պատգամավորների Խորհուրդները: Գյուղացիները կազմեցին իրանց գյուղացիական Խորհուրդները: Ապրիլ ամսում ամբողջ Ռուսաստանը պատաժ եր արդեն Խորհուրդների խիտ ցանցով: Հրավիրվեց Խորհուրդների Համառուսական համագումար, վորն ընտրեց Կենտրոնական Գործադիր Կոմիտե:

Հեղափոխության սկզբում բոյլշևիկները փոքրամասնություն ելին կազմում Խորհուրդների մեջ: Ժամանակավոր կառավարության դեմ ուղղված նրանց քննադատությունները դեռ արձագանք չեյին գտնում մասսանների մեջ: Մասսաները դեռևս բավականաշափ հավատ ունեյին

դեպի Ժամանակավոր կառավարության հեղափոխականությունը, դրա համար ել գնում եյին նրա պաշտպանների — մենչեւիկննրի ու եսերների յետեկց։ Բոյլշևիկները իրանց ամբողջ ուշադրությունը ուղղեցին մասսաների վրա։ Նրանց գործունեյությունը կայանում եր նրանում, վոր աշխատում եյին կազմակերպել բանվորների մի ամրակուռ կուսակցություն։ Ապրիլի 4-ին արտասահմանից յեկավ բոյլշևիկների կուսակցության առաջնորդ ընկ. Լենինը։ Նա խկույն եյեթ պարզեց Ռուսաստանում տիրող իրերի դրությունը։ Յուր առաջին ճառում նա մատնանիշ արեց Ժամանակավոր կառավարության հականեղափոխականությունը և պահանջում եր ամբաղջ իշխանությունը տալ հեղափոխական Խորհուրդներին։ Վորպես հեղափոխական հիմնական խնդիր՝ նա առաջ եր քաշում անմիջապես հաշտություն կնքելը և բանվոր դասակարգի բոլոր պահանջներին բարարելը։ Այդ նշանաբաններով ել բոյլշևիկները սկսեցին կազմակերպել բանվորական մասսաները։

Բոյլշևիկների այդ աղիտացիայի շուրջ ամբողջ բուրժուազիան վոռնոց բարձրացրեց։ Իլիշի ու բոյլշևիկների մասին ել ինչ սուտ բաներ առես վոր չեյին տարածում։ Առում եյին,

վոր իբր թե Իլիշը Գերմանական թագավորի լրտեսն է, վոր բոյլշևիստական կուսակցությունը վոսկի յե ստանում Գերմանիայից և այլն։ Բուրժուազիան այդ նախովի լուրերը պաշտպանություն եյին գտնում նաև եսերների կողմից, վորոնը այն ժամանակ շատ մեծ համարում ունեյին գյուղացիների մեջ։

Չնայելով այդ ամբողջ նեխված ազիտացիային, բանվորների զիտակից մասը մտավ բոյլշևիկների դրոշի տակ. ապրիլին կուսակցության անդամների թիվը բարձրացավ 80,000 հոգու։

5. Մինչ այդ Ժամանակավոր կառավարությունը շարունակում եր յուր դավաճանական քաղաքականությունը։ Վորպեսզի ապացուցի յուր հավատարմությունը գաշնակիցների շահերին, կերենսոկին գերմանացիների գեմ սկսեց յուր հարձակումը, վորը առաջուց արդեն դատապարտված եր անաջողության։ Այդ հարձակումը զայրույթի պոութկում առաջ բերեց բանվորների և զինվորների շրջանում։ Դրանով կառավարությունը դանակ խրեց հեղափոխության մեջը։ Տեղի ունեցան տասնյակ հազարավոր բանվորների ու զինվորների բողոքի աղմկանույզ ցույցերը։ Բուրժուազիան վախեցավ ու հեռացավ Ժամանակավոր կառավարությունից։ Փոխանակ

ամբողջ իշխանությունը տալու հեղափոխական-
մասսաների տրամադրությունների ու ցանկու-
թյունների իսկական արտահայտիչն— Խորհրդին,
նրա համաձայնական զեկավարները շտապեցին
խնդրել բուրժուազիային վերագառնալու կա-
ռավարության մեջ։ Մեծ դժվարությամբ հա-
ջողվեց նրանց կառավարության նոր կազմ
հավաքել։ Մասսաները սակայն վերջնականապես
արդեն կորցրել եյին իրանց հավատը դեպի ժա-
մանակավոր կառավարությունը։ Այժմ միայն
աշխատավորները հնարավորություն ունեցան
ծանոթանալու բանվոր դասակարգին դավաճա-
նողների՝ մենշեվիկների և եսերների իսկական
դեմքերի հետ։ Եսերների պարագլուխ Զերնովը,
դառնալով հողագործության մինիստր, վոչ միայն
հող չբաժանեց գյուղացիներին, ինչպես վոր
այդ խոստացել եր նրա կուսակցությունը, այլև
արգելեց հողերի այն բոլոր գրավումները, վորը
տեղերում կատարուել եյին գյուղացիական կո-
միտեները ինքնազլուխ կերպով։ Մյուս մի-
մինիստրը հրաման արձակեց գյուղացիական կո-
միտեները բանտարկելու։ Բանակի համար կերեն-
ուկին մտցրեց մահվան պատիժը։ Հին գեներալ-
ները նորից գլուխ բարձրացրին՝ զինվորական
կոմիտեները բանդարկվում եյին ու զինվորական
գատարանի մտանվում։ Բուրժուազիան և

արշավանք սկսեց բանվորների զեմ, փակելով
յուր ֆաբրիկները։ Նրանք ձգտում եյին
ավելացնել քայլացումը ու դրանով խախտել
գյուղացիների գեպի բանվորները ունեցած
փառահությունը։

Այդ բոլոր փառատերը վերջնականապես հետ
վանեցին աշխատավորներին Փամանակավոր կա-
ռավարությունից և մենշեվիկների ու եսերներից
դափնաման կուսակցություններից։ Հունիսին բոլո-
շևիկների կուսակցության անդամների թիվը
հասավ մինչև 180,000 հոգու։ Ժողովներուն
բանվորներն ու զինվորները չեյին ուզում լսել
վոչ բոլոշևիկ ճառախոսներին։ Դեպի ժամա-
նակավոր կառավարությունն ունեցած զայրույթն
ու ատելությունը հասել եյին ամենաբարձր կե-
տին։ Հուլիսի 3-ին ու 4-ին Լենինգրադի խոշոր
գործարանների բոլոր բանվորները, երանշտատի
նավատարիներն ու զինվորները դուրս յեկան
զինված ցույցերով ու փորձ արին զբայիլու
իշխանությունը։ Կերենսկին բանվորների գեմ
ու զարկեց թնդանոթներ, և յունկերների ու
ռազմականական նոր վերագարձած, իրերին
անսեղլակ, մուտքած խառը զորամասների ոգ-
նությամբ նրան աջողվեց զինաթափ անել
բարուստացած մասսաներին։

6. Հուլիսյան ապստամբությունը ձնշելուց հետո, «դեմոկրատ» կերենսկին գրոհ ավեց բոյլշևիկների կուսակցության վրա։ Ամենաականավոր բոյլշևիկները՝ Տրոցկին, Լունաչարսկին, Բանկոյնիկովը և ուրիշները կալանավորվեցին. Իլյիչին և Զինովյեվին բարեբախտաբար աջողվեց թաքնվել (այլապես նրանց հետ ել նույնը կանելին, ինչ վոր արին գերմանական դավաճանները, ընկերներ՝ Կարլ Լիբկնիստի և Ռոզա Լյուքսենբուրգի հետ)։ Ժամանակավոր կառավարության հրամանով փակվեց «Պրավդա» թերթը։ Բոյլշևիկյան մյուս հրատարակությունները թույլ չելին տալիս ուղամածակառները ուղարկելու և և դա այն ժամանակ, ուրը բուրժուական թերթերը տարածվում ելին ազատ կերպով։ Բայց ժամանակավոր կառավարության ընդունության միջոցները ել ավելի բարձրացըրին բանվորական և զինվորական մասսաների համակրությունը գեղի բոյլշևիստական կուսակցությունը լորհրդի վերընտրությունների ժամանակ այնտեղից դուրս ելին վոնդվում բոլոր դավաճանները։ Լենինգրադում և Մոսկվայում հուլիսյան անցքերից հետո խորհուրդներում բոյլշևիկները անազին մեծամասնություն ունելին։

7. Կառավարությունը գնալով ավելի ու ավելի յեր թերթում աջ, Թեակցիան իրան ազատ

էր զգում։ Համառուսական խորհրդակցության ժամանակ, վորը զումարել եր կերենսկին Մոսկվայում։ (Լենինգրադում նա վախենում եր հեղագործականորեն տրամադրված բանվորներից ու զինվորներից. բայց Մոսկվայի բանվորներն ել դիմավորեցին նրան անբարեացակամությամբ։ Մոսկվայի խորհրդակցության բացման որը բանվորները, հյուրանոցների սպասավորները նույնիսկ բողոքի գործուղուց արեցին). բեակցիոն գեներալները առանց թարցնելու կոչ ելին անում ժամանակավոր կառավարությունը տապալելու և զինվորական դիկտատուրա կազմելու։ Խորհրդակցությունից հետո, գերազույն հրամանատարը՝ ցարկան գեներալ Կորնիլովը, ուզմաձակատից զորքը տարավ Լենինգրադի վրա՝ ժամանակավոր կառավարությունը տապալելու նպատակով։ (ինչպես յերեաց հետո, այդ քայլը նա անում եր «սոցիալիստ» կերենսկու համաձայնությամբ)։ Հականեղագործության հեղաշրջումի վտանգը միացըրեց բանվորների և զինվորների բոլոր ուժերը։ Նրանց միահամուռ գրոհի տակ ջախջախվեց Կորնիլովի ավանտյուրան։ Կորնիլովից խարգած գորքերը վերադարձան ճակատ, ինքը Կորնիլովը կալանավորվեց։

Կորնիլովյան ապստամբությունից հետո ա-

մենահետամնաց բանվորներն ու դինովորներն ել համողվեցին Փամտնակավոր կառավարության հականեղափախական լինելու մեջ և ժաման բոլշևիկների դրոշի տակ:

թ. Ինչ պետք է կարդա բարդեկը.

1. Փետրվարյան նեղափոխության մասին:— Թուսական պատմության խրեստոմատիքն (յեր. 171-172, 172-174): Կին՝ Հոկտեմբերյան Հեղափոխությունը: Նովիցիի՝ Միավետությունից՝ պրոլետարիատի գիրտառութան (յեր. 5-12):

2. Բոլցեվիկների մասին:— Թուս. Պատմելրեստոմատիքն (յեր. 176-179), Նովիցիի՝ ահա վերը (յեր. 13-42):

3. Հուլիոյան դեպքերի մասին:— Թուս. Պատմ. խրեստ. (յեր. 179-180):

գ. Զբույցի մեկնարանումը.

Զբույցի հիմնական գաղափարները.

ա) Փետրվարյան նեղափոխությունը կատարել ելին պրոլետարիատը ու նրան միացած զինվորները:

բ) Բանվարական պատգամավարների Առողջությունը գոյության առաջին իսկ որվանից յերկրի վաստական իշխանությունն էր:

շ) Բուրժուական Փամտնակավոր կառավարությունը ձգտում էր նեղափոխությունը լիկվիդացիայի յենթարկելու Մենշեկիներն ու եռերսերը նրան աջակցում եյին:

տ) Միայն բոլշևիկներն ելին վարում հաստատուն նեղափոխական զիծ:

լե) Մենշեկիական-եռերական կառավարության հականեղափախական զործունեյությունը վաճաց նրանից մասսաները:

զ) Հուլիոյան ապստամբությունը պրոլետարիատի առաջին փորձն եր իշխանությունը իր ձեռքը ձգելու:

ե) Դեպքերի հետագա ընթացքը անխուսափելիորեն տանում է զեսի բանվորների ապրուտամբությունը կամ թե ցարական գեներալների նոր ավանտայուրան:

Զբույցի առաջին մասը, վոր հարուստ և եփեկտավոր (վառ) մոռենաներով, անհրաժեշտ ե աժբաղնողել ըստ կարելաւն ուժեղ կերպով: Հեղափոխության պատճառները պարզելուց հետո (մասամբ հայտնի յեն արդեն նախընթաց զբույցից), հեղափոխության մասսայական զբույցի պատկերը տալու նոլատակով, կարդալ ընտելի պատկերը տալու նոլատակով, կառու (յեր. թաւա. պատճ. խրեստոմատիուց մի կառը (յեր. 171-172)), Բուրժուազիայի կողմից գեսի հերկրի վաստականությունն ունեցած վերաբերմունքը ընդունափախությունն ունեցած վերաբերմունքը

սոցիալիստները ժամանակավոր կառավարության
մեջ...

Ի՞նչ եյին ուզում ստանալ դյուղացիները
(հող)...

Ի՞նչ եր պահանջում բանվոր գասակարգը
(Ճամայա աշխատանքի որ) ... Ի՞նչ բանի եր
ձգտում ամբողջ ժողովուրդը: (Հաշտության) ...

Այդ հարցերից հետո տալ կառավարության
հակառակ բնույթով ձեռնարկած սիջոցների հա-
մասուտ ցանկը:

— Հողը Հիմնադիր ժողովից հետու Գյուղա-
ցիական կոմիտեների կալանավորումը, մահվան
պատժի վերահստատելը բանակի համար, զին-
վորական կոմիտեների բանտարկումը, հաշտու-
թյան փոխարեն՝ հարձակում և ալին:

Եյսունետև հարկավոր և անցնել բոյլշիկ-
ների գործունեյության վերլուծմանը.

Ի՞նչպես եյին նայում նրանց վրա հեղա-
փոխության սկզբներում, ինչ եյին ասում է. ե-
նինի մասին: Պատմել, թե ինչպես յեկավ Ռու-
սաստան լենինը, հիշատակել բոյլշիկների հիմ-
նական լողունակները, քաղվածքներ բերել լենի-
նի թեղիներից (Խուս. պատմ. խրեստ., յեր.
176-278):

Յեզրափակման հարց. համապատասխա-
նում և արդյոք, բոյլշեների գործունեյությու-

բոշելու համար բավական և հիշատակել թուժան-
կոյի կողմից թագավորին ուղարկված հեռագրի
բովանդակությունը (Նովիցիու գիրքը, 1 զլուխ)
և ժամանակավոր կառավարության մինիստրնե-
րի կազմը:

Հեղափոխության պատճառների (զլսավա-
րապես, պատերազմից հօգնելը) ժամանակավոր
կառավարության քաղաքականության հետ (Մի-
լուկովի հուշագիրը) համեմատելը կամքա-
պընդի նախընթաց յեզրակացությունը: Մոռա-
վորապես զրույցը պետք ե տանել հետեւյալ վո-
դով:

— Վորն եր ապստամբների զլսավոր պա-
հանջր...

Ի՞նչ պետք ե աներ հեղափոխական կա-
ռավարությունը: Դե, ուրեմն լսեցեք՝ թե ինչ-
պես վարվեց Միլյուկովը և այն:

Անկառիկածելի վրդովմունքը, վորը առաջ
կգա ունկնդիրների մեջ, ամբապնդել հայտնե-
լով, վոր բանվորներն ու գինվորները քիչ չեն
վրդովվել, և վոր նրանց ճնշման շնորհիվ եր,
վոր հեռացան ատելի մինիստրները:

Հաղորդելով, վոր ժամանակավոր կառա-
վարության մեջ մտած եյին մենշևիկներն ու եսեր-
ները, զրույցը տանել հետեւյալ վոգով.

Ի՞նչ քայլեր պետք ե անելին մինիստր

Նր ժողովրդի պահանջներին: Դրական պատասխան ստուալով շարունակել պատմել բոյլշեիկների հեղինակությունը աճելու և հոգիոյան զեպքերի մասին:

Զբույցը այդպես զնելով՝ յեզրակացությունը բոյլշեիկների և հեղափոխության դերի մասին բղխում ե ինքն իրան:

Մասսաների կողմից դեպի Ժամանակավոր կառավարությունն ունեցած վերաբերմունքի փոխվելը և բոյլշեիկների գործունելյալթյունը պատկերացնել, պատմելով Մասկվայի խոշհրդակցության և Կորնիլովյան ավանտյուրայի մասին:

Իբրև ընդհանուր յեզրակացություն, նոր հեղափոխության անհրաժեշտությունն ու անխուսափելությունը:

Ներկա զրույցը շոշափում է վոչշատ հեռու անցյալին վերաբերող անցքերը: Նրանց մասին գաղափար և վարչ տեղեկություններ ունի ամեն մի ունկնդիր: Քաղղեկը անհրաժեշտ է, վոր հնարավորություն տա ամենամեծ չափով արտահայտվելու և պատմելու հիշողությունները: Անձամբ պատմել այն միայն, վորը ունկնդիրներին վորոշակի կերպով հայտնի չե կամ իրառակինթորված ե նրանց հասկացողության մեջ:

Հ-ԲԴ ՁՐՈՒՅՑ

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Զբույցի բովանդակությունը.

Հոկտեմբերի 25-ին նախակամ եր Խորհուրդների Համառուսական Ա-րդ համագումարը: Պատգամավորների մեծամասնությունը բոյլշեիկների կողմն եւ: Այդ հանգամանքը կանխորոշեց այսամբուրյան հարցը: Շաղցեվիկների, բանվորների, զինվորների ու նախատիների ուժեղով ժամանակավոր կառավարությունը տապալվեց: Ա-րդ Համագումարը հայտարարեց Խորհուրդների թիմանություն ու կազմակերպեց ժաղարգական Կոմիտասների Խորհուրդը: Հաշտակեց զեկութեր հաօսությանախն, հոդի ու բանկերի ազգանացման նախն: Կենակին կամնեում եր հականեցափոխական զորերի ողնությամբ տապալել Խորհուրդների թիմանությունը, բայց պատույթուն կրեց ու փոխագ արտահամար: Կոնցերերին նոր թիմանությունը բանվորների ու զինվորների ուժեղով տարածվեց ամբողջ Թուստանանում:

1. Ժամանակավոր կառավարությունը յուր դաշտանական քաղաքականությամբ իրանից հետ վանեց աշխատավոր խավերը: Յուր հետեւ վանեց աշխատավոր խավերը: Յուր իշխանությունը վում մասսաներ չունենալով, նրա իշխանությունը միանով եր միայն: Կորնիլովյան ավանտյունունով և պատմելու հայտնի հայտնից աշխատավոր կամ իրանի, յիթե ժամանակին չկազմարություն կառնի, յիթե ժամանակին չկազմա-

կերպվի աշխատավորության միատարր ուժեղ
իշխանություն։ Բայց վոչ ժամանակավոր իշ-
խանությունը, վոչ ել նրա դրդիչները (տալկաշ-
ները) — մենշեվիկներն ու եսերները — բոլորովին
չեցին ուղում այդ բանը հասկանալ։ Յուր ամ-
բողջ անվանական իշխանությունը կառավարու-
թյունը ուղղեց հեղափոխությունը հետզհետե
թուլացնելու նպատակին։ Գաղտնի հրաման ար-
ձակեց հեղափոխությանը հավատարիմ մնացած
զորամասերը քաղաքից գուրս հանելու մասին,
իրը թե ճակատները ուժեղացնելու նպատակով։
Մինույն ժամանակ լենինցը առ իր հուրդուղը
տեղեկություններ ստացավ, վոր ճակատից վեր-
ցընում են կողակիների դիվիզիաները և տանում
դեպի լենինցը։ Այդ ձեռնարկության դավա-
ճանական նպատակը ակներե եր։ Հեղափոխու-
թյանը վտանգ եր սպառնում։ Հարկավոր եր ար-
տակարգ միջոցներ ձեռք առնել հեղափոխության
նվաճումները պաշտպանելու։ Այդ նպատա-
կով լենինցը առ իր հուրդուղը վորոշեց կազմել
մազմա-Հեղափոխական կոմիտե հեղափոխությունը
թյունը պաշտպանելու համար։ Մենշեկներն ու
եսերները հրաժարվեցին մասնակցել մազմա-
Հեղափոխական կոմիտեյին։ Դա մի ամելորդ
անգամ ել մերկացրեց լենինցը պրոլետա-
րիատի առջև այդ կուսակցությունների դավա-

մանությունն ու վախկոտությունը։ Մազմա-
Հեղափոխական կոմիտեյում աշխատում եյին-
քոյլշեվիկները և ձախ եսերները, վորոնք բա-
րոյլշեվիկներից և ձախ եսերներից ու գետ ևս հե-
ժանվել եյին աջակողմեաններից ու գետ ևս հե-
ղափոխական տրմադրություն ունեցին։ Մազմա-
Հեղափոխական կոմիտեն սերտ կառ հաստատեց-
Հեղափոխական կոմիտեն սերտ կառ հաստատեց-
բաղաքի բոլոր զորամասերի հետ ու հրաման
արձակեց, վորոշեսպի վոչ մի զորամաս չնե-
ռանա քաղաքից առանց նրա թուլավության։
Մազմա-Հեղակոմի յերկրորդ քայլն եր կարմիր
բաղաքի գվարդիայի՝ հեղափոխության այդ
բանվորական գվարդիայի՝ հեղափոխության այդ
հավատարիմ պաշտպանի, զինումը։ Այդպիսով
մազմա-Հեղակոմը իրա համար ստեղծեց ամուր
հենարան առաջիկայում հեղափոխական գործո-
ղությունները զարգացնելու նպատակով։

2. Հոկտեմբերի 25-ին նշանակված եր
Խորհուրդների Համառուսական Ռ-րդ համագու-
մարը, Պատգամավորները Խուսաստանի զանու-
մարը, Պատգամավորները Խուսաստանի զանու-
մարը մասերից սկսել եյին հավաքվել։ Խորհրդա-
յին շրջաններում տիրում եր բարձր տրամա-
յին վրանություն։ Ամենքի համար ել ոլարդ եր, վոր-
որություն։ Ամենքի համար ել ոլարդ եր, վոր-
որություն։ ահապին մեծամասնություն ե-
տալու բոյլշեվիկներին և ձայն կտտ իշխանու-
թյունը խորհուրդներին տալու համար։
Փամանակավոր կառավարությունը նկա-
տում եր այդ բոլոր պատրաստությունները

զգում եր վոր մոտեցել և իր վախճանը, վոր տմբողջ յերկրում նա վոչ մի հենարան չունի, և ոյնուամենայնիվ ամուր կերպով շարունակում եր կառչած մնալ իր ծաղրական իշխանությանը: Իր հեղինակությունը, թեկուզ տհարեկած բուրժուազիայի աչքում, բարձրացընելու համար, ֆամանակավոր կառավարությանը զնաց ցարական հարթված ուղիով յունկերների ուժերով նա հարձակվեց «Պատգամ» ի տպարանի վրա, ջարդ ու փշուր արեց նրան ու կնքեց մուտքը: Ռազմա-Հեղափոխական կոմիտան ուղարկեց զինվորների մի խումբ, վորոնիք պոկեցին զաների վրայից զբոշմը և խմբազրությունը հնարաւորություն ստացավ շարունակելու թերթի տպագրությունը:

Այդ քայլը արդեն բացարձակ ընդդիմություն եր ֆամանակավոր կառավարության հրամաններին: Հասավ վճռական բոպեն: Ռազմա-Հեղափոխական կոմիտեն զենքի կանչեց բոլոր կարմիր դվարդիական ջոկատները, հեղափոխական զորամասերը և ապա սկսեց արշավանք մերային պալատի վրա, ուր այդ ֆամանական ուներ ֆամանակավոր կառավարությունը: Եր նշտառը աղոստաքրներին ոգնության ուղարկեց «Աքրորա» հածանավը: ֆամանակավոր կառավարության կողմն էլին միայն մի քանի

յունկերական դպրոցներ: Կարճառու կովից հետո, բայլշեիկները զրավեցին փոստ-հեռազբանունը, հեռախոսական կայանը և կառավարչական բոլոր հաստատությունները: Վերջապես դրավից նույնպես Զմերալին ողալաւը: Նրան պաշտպանող յունկերները անձնատուր յեղան և դինաթափ արվեցին: Մինխատըները կալանավորվեցին: մեծ գդվարությամբ ապատման գեկավարներին աջողից վրկել նրանց թյան զեկավարներին աջողից վրկել նրանց կատաղած ամբոխի ինքնապատաստանից: Այսուհետեւ կերպնակուն աջողից վախչել:

3. Հոկտեմբերի 25-ին կառավարական բոլոր հիմնարկությունները անցան ապատման բանվորների և զինվորների ձեռքը: Նույն որրոր յերեկոյան բացվեց Խորհրդների Համառուսական Խ-ըդ համագումարը: Համագումարը համություն ավեց կատարված հեղաշրջմանը ու վարչեց ամբողջ իշխանությունը պահել ու վարչեց ամբողջ իշխանությունը պահել անորհությունների ձեռքում: Առաջին իսկ նիստում Խորհրդների ձեռքում: Առաջին իսկ նիստում Խորհրդագիտական կոմիտարների Խորհրդագիտական կոմիտարների կոմիտարների մարմնուր: Ժողովրդական կոմիտարների զինվորային իշխանության գործադուրը, իրեն Խորհրդային իշխանության գործադուրը, կոմիտարների զինվորային ժողովրդական կոմիտարների զինվորային կանգնեց հեղափոխության անորհրդի զլուխ կանգնեց հեղափոխության անորհրդի զլուխ կանգնեց Մինհույն նիստում ընտառնվեցին յերեք կարեռը վորոշումները: Հաշուագության յերեք կարեռը վորոշումները: Հաշուագության յերեք կարեռը սոցիալիզացիայի ու բանկերի տության, հողի սոցիալիզացիայի ու բանկերի

ազգայնացման մասին Դրանով Խորհրդային կառավարությունը մի ավելորդ անգամ եր ապացուցեց, վոր նրա խոսքերն ու գործերը իշխարից չեն տարրերվում:

4. Մինչդեռ Կերենսկին, վորին աջողվել եր ազատվել ապատամբված պրոլետարիատի ձեռքբերից, շատպեց դեպի ուղղական ճակատը, կանչեցու ժամանակավոր կառավարությանը «հավատարիմ» զորքերին, վորպեսզի նրանց ոգնությամբ ջախջախի հեղափոխությունը: Նրան հաջողվեց մոլորեցնել կողակների մի դիվիզիան, վորի հրամանատարն եր հայտնի հականեղափոխական գեներալ Կրասնովը: Սպիտակ զվարդիականներին դիմավորելու ուղարկված Կարմիր Գվարդիայի հետ ունեցած առաջին իոկրնարման ժամանակ, կողակները անձնատուր լեզան: Նրանց հետ բանակցություն վարելու ժամանակ պարզվեց, վոր Կերենսկին խաբել է նրանց: Նու նրանց կանչել եր հականեղափոխությունը ձնշելու պատրվակով: Վրդովված կողակները ուղուց եյին Կերենսկուն տալ ժողովրդի ձեռքը: Բայց նա դարձյալ կարողացավ փախչել, այս անգամ ընդմիշտ Ռուսաստանի սահմաններից: Այդ փաստը ավելորդ անգամ ընդգծեց՝ թե ով առաջինը սկսեց քաղաքացիական պատերազմը:

Մոսկվայում կռիվը սպիտակ դվարդիական-ների դեմ տեվեց ավելի յերկար ու ավելի համառ. սակայն այնտեղ ել բանվորները հաղթանակեցին: Մոսկվային ու Լենինգրադին հետևեց հեղաշրջում Ռուսաստանի բոլոր քաղաքներում: Այդպես կատարվեց Հոկտեմբերյան հեղափոխությունը:

Հոկտեմբերյան հեղափոխությունը ամբողջ աշխարհում առաջին հեղափոխությունն ե, վորք ժամանակ բանվոր դասակարգը յուր ձեռքն առավ իշխանությունը: Հաղթությունը կարելի յեղագ տանել միայն շնորհիվ բոլոր աշխատավորների սերտ միության և Ռուսաստանի կոմունիստական կուսակցության ու նրա առաջնորդ ընկենինի դեկավարության:

Բ. Ինչ պիտի կարդա բաղդեկը.

1. Հոկտեմբերյան ապսամբօւթյունը Պիտերում. Ռուսական պատմ. Խրեստոմատիան (յեր. 6—8, 185—188):

2. Մոսկվայի հոկտեմբերյան ապսամբության մասին. Նույն տեղում (յեր. 8—13):

3. Բանակում կատարված հեղափոխության մասից:

Նույն տեղում (յեր. 13—15): Կին, «Հոկտեմբերյան հեղափոխությունը»:

Գ. Զբոյցի մեկնարանումը.

Զբոյցի հիմնական մաքերը.

ա) Հոկտեմբերյան հեղափոխությունը ժամանակոր կառավարության հականեղափոխական քաղաքականության անխռուսափելի հետևանքն էր:

բ) Մենշևստական և եսերների կուսակցությունները բանվորների ու գյուղացիների հաղթությունից հետո անցան հականեղափոխության բանակը:

գ) Հոկտեմբերյան հեղափոխությունը կատարել ելին բանվորներն ու գինվորական մասները:

դ) Բոյլշևիկները Հոկտեմբերյան հեղափոխության կազմակերպողներն ու ղեկավարողներն ենին:

Ինչպես նախընթաց զբոյցը, այնպես և այս զրոյցը պարունակում է նյութեր մոտիկ անցյալից: Զբոյցի նպատակն է կարգի բերել նրանց, հասկանալի դարձնել այն բոլոր մութակերությունները, վորը ունեն ունկնդիրները:

Ժամանակոր կառավարության, մենշևիկների և եսերների գավաճանությունը նրանց համար բավականաշատ պարզված է արգեն նախընթաց զրոյցից: Ուստի, անելով զրանից

տեսդ յեզրակացությունները: Հարկավոր է անցնել Հոկտեմբերի 25-ի դեպքերի նկարագրությունը: Անհրաժեշտ է արձանագրել Լենինի գրի հեղափոխության համարյա անարյան բնթացքը, իրու ժամանակավոր կառավարության պահելության լավագույն ցուցարարը:

Պատմելու մեթոդը մնում է նույնը, ինչ վոր նախընթաց զրոյցում էր: Անհրաժեշտ է, կարելի յեղածին չափ, ընդարձակ կերպով սկսագործել ունկնդիրների հիշողությունները: Շատ ցանկալի կլիներ կազմակերպել հիշողությունների յերեկո:

8-ՐԴ ԶՐՈՒՅՑ

ԲՍՆՎՈՐՆԵՐԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ ՄԵՐԻԹՅՈՒՆԸ
ՌԿԿ-Ն ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՄՔ
Ա. Զբոյցի բավանդակություններ.

Գյուղացիությունը, համագելով ժամանակագույն գավաճանության մեջ, միացավ կառավարության գավաճանության մեջ, միացավ Հոկտեմբերյան հեղափոխությանը: Խուեզզային իշխանության ձեռք առած միջոցները հօգային յեկ հայտնության հարցերում նաև գարներն Խուեզզային կառավարության հավատարիմ գաւհակիցը:

1. Հոկտեմբերյան հեղափոխությունը կատարեց բանվոր գավաճարզը բոյլշևիկների ղեկավարությամբ: Բայց հեղափոխության աջոկնավարությամբ:

զությունը կախված եր այն բանից, թե ինչպես կվերաբերվի հեղաշրջմանը գյուղացիությունը:

Գեռես նախընթաց զրույցներից հայտնի յէ, թե ինչպես փոխվեց գյուղացիության վերաբերմունքը դեպի ժամանակավոր կառավարությունը: Սկզբում, ինչպես առնասարակ ամբողջ անգիտակից աղգարնակությունը, գյուղացիությունն ել մեծ հույսեր եր դնում ժամանակավոր կառավարության վրա. նա անհամբերությամբ սպասում եր նրանից հողային ցավոտ հարցի լուծումը: Եսերների կուսակցությունը, վոր ինքն իրան ներկայացնում եր գյուղացիական կուսակցություն, բայց իրավեցուց տվեց գյուղական կուլակների (վաշխառուների) կուսակցություն, համարում եր գյուղացիներին իր «հավատարիմ հպատակները»: Եսկապես, եսերների գեղեցիկ խոսքերը և նրանց «հող և ապատություն» խոստումները հեղափոխության սկզբում մեծ աջաղություն ելին վայելում գյուղացիության մեջ: Դյուղացիության վերաբերմունքը դեպի բոյլշեկները կասկածու եր. այն պատմություններն ու լուրերը, վոր տարածում եյին բուրժուազիան և եսերները բոյլշեկների մասին, իբրև Գերմանիայի լրտեսների և այլն, առաջի ժամանակնե-

քում հետ մղեցին գցուղացիներին բոյլշեկներից: Գյուղացիությունը հավատացած եր, վոր ստացված աղատությունից հետո, եսերները հող և հաշտություն կբերեն նրանց համար:

Մինչդեռ ամիսները անցնում եյին ամիսների վրայից: Ժամանակավոր կառավարությունն մեջ մինիստրները փոփոխվում ելին այսպես, ինչպես վոր աղայի ձեռնոցները, իսկ զրանից գյուղացիների դրությունը տմենելին չավացավ, այլ վատթարացավ: Կերենսկին կայուն կներ նշանակեց գյուղական մթերքների համար, շուկայի գներից շատ ավելի պակաս և հարկազըրում եր գյուղացիությանը վաճառելու այդ գներով: Քաղաքային մթերքները թանգանում ելին, քայլքալումը որիցո՞ր ավելի յեր խորանում:

Եսերների պարտգլուխ Զերնովը, գառնալով հողաղործության մինիստր, ամենեվին չեր շատապում տալու կալվածատիրական հողերը գյուղացիներին: Նա սկսեց զբանականորեն ուսումնասիրել հողային հարցը, իսկ նրա լուծումը նա թողեց Հիմնադիր Ժողովին, վորի գումարումը ավելի ու ավելի յեր հետաձգվում:

Գյուղացիությունը, սակայն, զզվեցրեց, իր «մուժիկների» մինիստրի (Զերնովը այսպես եր սկըսում իրան անվանել) զիտական աշխատանք-

ներին սպասելը. Նու կազմակերպեց տեղեւրում կոմիտեներ, վորոնք անձամբ ոկըսեցին լուծել հողային հարցը: Այն ժամանակ ներքին գործերի մինիստրը կարգադրեց կալանավորել գյուղացիական կոմիտեներին: Տեղերում իշխում եյին ժամանակավոր կառավարության նշանակած կոմիտարները, մեծ ժառամբ կալվածատերերից և անզական բուրժուազիայից:

Ժամանակավոր կառավարության ձեռքառած արդ բոլոր միջոցները վերջացած բաց արին գյուղացիության աշքերը: Արգեն գյուղացիական միության Համաստական համագումարում գյուղացիները մեծ ուշադրությամբ լսեցին ընկ. Լենինի ճառը: Հետըդիետե բոյլշեվիկների շպիոնաժի մասին տարածված լեգենդան կորցնում եր յուր փոտքի տակի հողը գյուղացիական շրջաններում: Արձակուրդով տուն յեկած զինվորները, վորոնեսավելի զիտակից ատրը, փաղուց ի վեր բոյլշեվիկների կողմն անցած ողնում եյին գյուղացիներին բժբխություն բոնած գիրքի ճշտությունը: Խորհուրդների Համաստական Արդ Համագումարի վորոշմները հողային հարցի ժամին, նրանց ընդունած գյուղացիական գլատգամավորների դեկտարացիան վերջնականա-

ութեա դարձրին գյուղացիներին Խորհրդային իշխանության ու նրա առաջնորդի—կոմունիստական կուսակցության հավատարիմ բարեկամները: Գյուղացիները իրանց անձնվիրությունը Խորհրդային իշխանությանը ապացուցեցին քաղաքացիական պատերազմի բոլոր ճականներում ժղած իրանց անձնվեր կումբներով: Միայն քանիոր գասակարզի ու գյուղացիության սերտ միավոր կարողացավ պահպանել աշխատավորների իշխանությունը, չնայելով վոր Խորհրդային Ռուսաստանը կտրված եր ամբողջ աշխարհից: Ալգախի միությունը հնարավոր եր միայն բոյլշեվիկների (այժմ Ռուսաստանի կոմունիստական կուսակցությունը) դեկավարությամբ, վորը տասնյակ տարիների ընթացքում ապացուցեց յուր անձնվիրությունը բանվորների ու աշխատավոր գյուղացիության շահերին:

Հետագա հաղթանակները անտեսական ձակուառում և նոր կյանքի շինարարության մեջ հնարավոր կլինեն այն ժամանակ միայն, յեթե քանվորների ու գյուղացիների միությունը և ովելի ամրապնդվի:

Զ-ՐԴ ԶՐՈՒՅՑ

**ՌՈՒՍԱՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒ-
ԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԸ**

Ա. Զբուցի բովանդակությունը.

Կարմիր զվարդիան կազմակերպել ելին բայլե-
վիկները ժամանակավոր կառավարության գեմ կորի
մղելու լեզ հեղափոխությունը պատճենելու համար:
Հոկտեմբերի առաջիադուրքան ծամա-
նուկ Կարմիր Գվարդիան վերածվեց Կարմիր բա-
նակի: Ա. Կ.-Ն զեկավարությունը Կարմիր բանակը
գարձավ Խորհրդային իշխանության անհեռն պատ-
ճառը: Կարմիր բանակը Հոկտեմբերի զավակն և ու-
նա՞ա հավատարիմ պատճենարկ: Հոկտեմբերյան հեղա-
փոխության տանը կապիտալիզմի ներումներից ազա-
տազրելու համար մղած կովի տան և լեզ ցույց և
տախու նախապահը զեպի նորանու հաղթանակներ:

1. Յերբ ժամանակավոր կառավարության
մնանկությունը և հականեղափոխական առլու-
տամբության վտանգը դարձան տիների փառ-
տերը, բոյլշեվիկների կուսակցությունը սկսեց
կազմակերպել Կարմիր Գվարդիան բանվորներից:
Նին բանակը ցարական ուժիմի ազդեցության
ներքո և ժամանակավոր կառավարության վա-
րած քաղաքականության հետեանքով կազմա-
լուծվում եր: Միայն այն բանվորները վորոնք

փորձել ելին ցարիզմի բոլոր «օքանչելիքները»
կոփկել ելին սոցիալիզմի համար մղած կովում,
ընդունակ ելին պաշտպանելու: Հեղափոխու-
թյունը: Կարմիր Գվարդիան բոյլշեվիկների կու-
սակցության մարտական ջոկատն եր, վոր կոիլ
եր մղում ժամանակավոր կառավարության գեմ:
Յերբ հեղափոխությունը հաղթեց և իշխանու-
թյունը անցավ աշխատավորության ձեռքը, Կար-
միր Գվարդիան դարձավ Խորհրդային իշխանու-
թյան հենարանը:

2. Սակայն հականեղափոխությունը այդ-
չափ հեշտությամբ չեր տալիս յուր գիրքերը:
Ամբողջ աշխարհի բուրժուազիայի ողնությամբ
հականեղափոխությունը բազմաթիվ ձականնե-
րից մեկնում եր յուր թաթերը այն գործարան-
ներին ու հողերին, վորոնք զրված ելին աշխա-
տավոր ազգաբնակության ձեռքը: Ցարական
գեներաները, կալվածատերերն ու կապիտալիստ-
ները ձգտում ելին ջախջախել հաղթանակած
հեղափոխությունը: Այն ժամանակ Կարմիր Գվ-
արդիայից ծնունդ առավ Կարմիր Բանակը: Ամ-
բողջ աշխատավոր ազգաբնակությունը հրացան
մերցրեց հեղափոխության նվաճումները պաշտ-
պանելում: Մուսաւատնի կոմուն իստական կո-
սակցությունը, Հոկտեմբերյան հաղթանակների
այդ զեկավարը, այսուղ ել զլուխ կանգնեց հե-

դափոխության պաշտպանության գործին: Կուսակցություն լավագույն ուժերը տվեց բանահանրին, ընդարձակ ազիտացիա ոկտեգ կարմիք բանակացինների մեջ, և նրա զեկավարությամբ բանվորներն ու դյուզացինները դարձյալ հաղթեցին թշնամուն կովի մեջ:

3. Զնացելով, վոր կարմիք բանակացինները լավ չեցին վարժված, լավ չեցին զինված, հազնված ու կերակրվում, չնայելով, վոր գործ ունեցին ավելի ուժեղ թշնամու դեռ, այնուամենայնիվ կարմիք Բանակը զարմացրեց ամրող աշխարհը յուր հերոսական հաղթությաններով: Կա հնարավոր եր միայն Ռուսաստանի Կոմունիստական կուսակցության դեկտավարությամբ, շնորհիվ այն մեծ աշխատանքի, վորը տանում եր նա կարմիք բանակացինների գիտակցությունը ու հեղափոխական վոգին բարձրացնելու գործում:

4. Կարմիք Բանակը, շնորհիվ Ռ. Կ. Կ. դարձավ Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միության հավատարիմ և վստահելի պաշտպանը: Շնորհիվ կարմիք Բանակի հերոսականությանն ու անձնությացությանը, Ա. Խ. Հ. Մ. աշխատավոր մասսանները հնարավորություն ստացան դիմելու նոր կյանքի

շնորհարությանը, մոռանալով հին ժամանակակիցի բոլոր արհավիրքները:

Ուստասանի վերածնությունը, նրա հզորության ամրապնդումը, լայն մասսաների քաղաքակալության և գիտակցության բարձրանալը Հոկտեմբերյան հեղափոխության պառկղներն են:

Հոկտեմբերյան հեղափոխության տոնը, նույնը երի 7-ին, ամբողջ աշխատավորության տոնն է: Հոկտեմբերյան հեղափոխության տոնը հիշեցնում է կապիտալիզմի լծից աշխատավորության ազատազրելու համար մղած կովի աներին ազատազրելու համար մղած կովի անցյալ հերոսական շքջանի մասին: Հոկտեմբերյան հեղափոխության տոնը նշում է նոր հաղթյան հեղափոխության տոնը նշում է նոր հաղթանակների ուղին, ցույց է տալիս աշխատանքի ու ազատության թագավորության մոտիկ լինելը:

բ. Զօւյցի մեկնարանումը.

Յերկու վերջին զրոյցները անցած ցիկլի խորացրուծ կրկնողությունն է: Նրանք նպատակ ունեն:

ա) Ընդհանուր յեղբակացություններով միացնել այն բոլոր տեղեկությունները, վոր ձեռք են բերել ուկնդիրները բանվորական և դյուզացիական շրժման պատմությունից: Հիմ-

Նական յեզրակացությունը պետք է լինի բան-
վորների և զյուղացիների սերտ միության և
Ռ. Կ. Կ. զրոշի շուրջը համախմբվելու ան-
հրաժեշտությունը:

բ) Ստուգել յուր ցիկլի յուրացման առա-
ջադիմությունը:

գ) Միացնել բոլոր այն աեղեկությունները,
վորոնք ստացվել են ամրող ցիկլից ընդհանրա-
պես խոքհրդացին և մասնավորապես Կարմիր
Բանակի շինարարության գործնական նպատակ-
ների մասին:

Վորչափ վոր այդ զրույցները կը կնություն,
ստուգումն են անցածների, վորչափ վոր նըսն-
ցում փաստական նոր նյութ չի տրվում, ուստի
անցնելու մեթոդն ել պետք է լինի բացառա-
պես հարց ու պատասխաններով։ Քաղղեկի
գործը պետք է լինի անցյալի վերաբերյալ հար-
ցեր գնելլ։ Ի հարկե, կա չոչհափ և լինի չոր
ու ցամաք հարցաքննություն, վորը շատ քիչ
կարող է հետաքրքրել լսարանը. բայց ժամա-
նակակից հարցելից հարկավոր և ստեղծել ան-
ցյալի ամրողական պատկերը։ Այդ զրույցների
յուրաքանչյուր միտքո ունկնդիրները պետք է
հաստատեն նախընթաց՝ զրույցներից առաջ
փաստերով։

Որինակ. այս հարցին՝ թե ինչով ե գո-
նազանվում կարմիր Բանակը ցարական բանա-
կից, անհրաժեշտ և ստանալ ունկնդիրներից
փաստերը, յերբ ցարական բանակը ոգնում եր
բանվորների ու զյուղացիների խլրտությաները
ճնշելու:

Բանվորների և զյուղացիների միության
անհրաժեշտությունը ցույց տալու համար հար-
կավոր ե, վոր ունկնդիրները պատմեն, թե ինչ
ճետեանքների եր հասցնում շարժութների լա-
ժանվածությունը:

Միայն այն դեպքերում, յերբ փաստերը
ժոռացված են, քաղզեկը պետք է մանրամաս-
նորեն վերականգնե տյդ փաստերը նրանց հի-
շողության մեջ։

ՑԱՆԿ

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ
ԱԽԱԶՄԱԲՈՆ

ԹՐԱԳԻՐ

I ՑԻԿԼ

ԲԱՆԳՈՅ ԳՈՅՈՎԱՐԴԻ ՅԵՎ. Ա.
Կ.Կ. ԳՐՈՒՅԻ ՏԱԿ

62
3
5

14

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՎԱՓՈԽՈՒ-
ԹՅԱՆ ՆՎՐ ՃՈՒՄՆԵՐԸ

15

II ՑԻԿԼ

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ ՊԱՇՏՊԱՆ ՀԱԿ-
ՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՎԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՆՎՐ-
ՃՈՒՄՆԵՐԻ

16

III ՑԻԿԼ

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԻ Ծ.Կ.Կ. ՅԵՐ ԿԱ-
ՄԵՆՏԵՐՅՈՒ ԳՐՈՒՅԻ ՏԱԿ

21

Զ Ր ՈՒ Կ Յ Յ Ա 1

| | |
|--|----|
| ՅՈՒՅՍՎԱՆ ԾԵԺԻՄԸ | 22 |
| Ա. Զրույցի բովանդակությունը | 22 |
| 1. Հոկտեմբերյան Հեղափոխության առնը | 23 |
| 2. Յարական ԾԵԺԻՄԸ | 25 |
| Բանվորների և գյուղացիների զրությունը | 26 |
| Բ. Նյութեր Լին զրույցի համար | 28 |
| 1. Քաղղեկը ինչ պիտի կարդա | |
| I զրույցի մասին | 31 |
| Գ. Բացատրություն I զրույցի մասին | 32 |
| I Ծանոթություն լարանի սեր | 33 |
| II Պատմելու մեթոդները | 35 |
| Ա. Դասախոսական մեթոդը | 37 |
| Բ. Հարց ու պատասխանի մեթոդ | 42 |
| Գ. Հարմարեցրած մեթոդ | 44 |
| III Ցուցադրական ձեռնարկները | 45 |
| IV Զրույցի նախադատրաստությունը | 51 |

Զ Ր ՈՒ Կ Յ Յ Ա 2

| | |
|---|----|
| ԽԵԶՊԵՍ ԵՑԻՆ ՊԱՅՔԱՐՈՒԹ ԲԱՆՎԱՐԵՐԸ, ԳՅՈՒՂԱՅԻՆԵՐԸ ՅԱՐԱԿԱՆ ԾԵԺԻՄԻ ԴԵՄ. | 57 |
| Ա. Զրույցի բովանդակությունը | 57 |
| Բ. Յերկրորդ զրույցի նյութը | 63 |

Գ. Զրույցի մեկնաբանությունը

Զ Ր ՈՒ Կ Յ Յ Ա 3

| | |
|---|----|
| ԲԱՆՎԱՐԵՐԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ, (ԲՈՅԼԵՎԻԿԻՆԵՐԸ) ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՊԵԿԱՎԱՅՐ | 73 |
| Ա. Զրույցի բովանդակությունը | 73 |
| Բ. Ինչ պիտի կարդա քաղղեկը | 83 |
| Գ. Զրույցի մեկնաբանումը | 84 |

Զ Ր ՈՒ Կ Յ Յ Ա 4

| | |
|---------------------------------------|-----|
| 1905 ԹՎԱԿԱՆԸ. | 88 |
| Ա. Զրույցի բովանդակությունը | 88 |
| Բ. Ինչ պիտի կարդա քաղղեկը | 99 |
| Գ. Զրույցի մեկնաբանումը | 100 |

Զ Ր ՈՒ Կ Յ Յ Ա 5

| | |
|---------------------------------------|-----|
| 1914—17 Թ. Թ. ՊԱՏԵՐԱՋՄԸ. | 103 |
| Ա. Զրույցի բովանդակությունը | 103 |
| Բ. Ինչ պիտի կարդա քաղղեկը | 111 |
| Գ. Զրույցի մեկնաբանումը | 112 |

Զ Ր ՈՒ Կ Յ Յ Ա 6

ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ.

| | |
|---------------------------------------|-----|
| Ա. Զբույցի բովանդակությունը | 117 |
| Բ. Ինչ պիտի կարդա քաղղեկը | 132 |
| Գ. Զբույցի մեկնաբանումը | 132 |

ԶՐՈՒՅՑ 7

ՀԱԿՑԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՊԱՓՈԽՍԹԻԹՅՈՒՆԸ.

| | |
|---------------------------------------|-----|
| Ա. Զբույցի բովանդակությունը | 137 |
| Բ. Ինչ պիտի կարդա քաղղեկը | 143 |
| Գ. Զբույցի մեկնաբանումը | 144 |

ԶՐՈՒՅՑ 8

ԲԵՆՎՈՐԴՆԵՐԻ ՅԵՎ ԳՅՈՒԳԵՅԵ-
ՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ Ո. Կ. Կ. ԳԵԿԱ-
ՎԱՐՈՒԹՅԱՄՔ.

| | |
|---------------------------------------|-----|
| Ա. Զբույցի բովանդակությունը | 145 |
|---------------------------------------|-----|

ԶՐՈՒՅՑ 9

ՈՌՈԽԵՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ
ԿՈՒՍԿՈՒԹՅՈՒՆԸ և ԿԱՐՄԻՐ ԲԱՆԵԿԸ.

| | |
|---------------------------------------|-----|
| Ա. Զբույցի բովանդակությունը | 150 |
| Գ. Զբույցի մեկնաբանումը | 153 |



ՀՀ Ազգային գրադարան



NL021145

41. 221

ԳԻՒՆ Ե 40 ԿՈՊ.

ՀԱՅԿ. ԽՄԲԱԳՐ.-ՀՐԱՏ. ԿՈԼԼԵԳԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱ-
ԿՈՒԹՅԱՄԲ ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ

Գիւլ.

1. Ենգալո, Հրացանա-հրաձկային զործ—
փոխ. Դ. Կուրսնյան 35 կ.
2. Լ. Տեղեկի, Կորոմիր հուշատեսք-
թարդմ. Գ. Տ.-Ա. 20 կ.
3. Գուլբակի, Բանվոր զասակարդի և Ա.՝
կ. կ. զբոշի տակ—թարդմ. Լ. Գանելյան . 40 կ.

ՏՊԱԳՐՎՈՒՄ Ե

1. Կողլովակի, Քողարկում I. II և III ժամ.
 2. Քաղղեկի հուշատեսքը:
-